



826

II. 5





ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԸՄՍԱԳԻՐ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԸՄՍԱԳԻՐ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ա Ր Ի

№ 1 և 2

1882

Օ Կ Ո Ս Տ Ա Ո
Ս Ե Գ Ց Ե Մ Բ Ե Ր

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

ԽՐԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՑ — ԿՐԵԱԼՈՒԹ — Հայոց Առաջին Ընդհանուր
Ուսուցչական Ժողովի առիթով: ԱՐԻՈ. ՅՈՒՀԱՆՆԵԱՆ — Մի քանի իւսօր
մեր հին և նոր ուսումնարանների մասին: Ս. ՄԱՆԿԻՆԵԱՆ — Ի՞նչ ծրա-
գիր է հարկաւոր մեր ծխական ուսումնարաններին: Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆ —
— Կրօնի սուսուցչութիւն: Ս. ՉԱԼՍԱՆԵԱՆ — Անիի ակրակների (ուս-
նկարների) առ ի՞նչով: ՄԱՏԻՆԻՍՈՍՈՒԹԻՒՆ՝ ա) Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆ — Սրբա-
զան սրտամուծիւն Հայոցը. բ) Ս. ՄԱՆԿԻՆԵԱՆ — Նորագոյն մանկական
ընթերցանութեան գրքեր: Գ) ԿՈՍՏԱՆԵԱՆ — Հայաստանի տշխարհագրութիւն
Ա. Տէր-Յակոբեանի: Գ) Յ. ՉԻԳԻԱՆԵԱՆ — Մանկավարժական խորհրդա-
նութիւններ — Գ. Խատիսեանի: ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք: — ԲԱՆԿԱՎԱՐԺ
ԻՆՏԻՒՆ՝ ա) Աշակերտ, բ) Հին դերձականացուր, Գ) Գրիգոր Կնդկն, Գ)
Մրջիւններ: ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ, ԶՈՒԱՐՃԱԼԻՔ, ԽՆԴԻՐՆԵՐ, — ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.



Թ Ի Ք Լ Ի Ս

ՄԱՂ. ՎԱՐԿԱՆԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ. ՏՊԱՐԱՆ

Լայն տեսակ. օգտագործ 15-հն:

Ներկայ ընդհանուր Ուսուցչական Ժողովին վերաբերեալ
յօրատմանը շարունակական պատճառաւ հետ հրատարակեալ էնտ
օգտոր. և սեպտ. ամիսների համարները հրատարակ. Խ թ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՎԱՐԺԱՐԱՆ“ մանկավարժական ամսագիրը հրատարակվում է Թիֆլիսում հետևեալ ծրագրով:

ա. Ազգիս Վեհափառ հայրապետի և թեմական վերատեսուչներին կարգադրութիւնները ազգային ուսումնարանաց վերաբերութեամբ:

բ. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ—յօդուածներ մանկավարժական բովանդակութեամբ:

գ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ—յօդուածներ ազգային պատմութեան, աշխարհագրութեան, գրականութեան, տոհմագրութեան և լեզուի վերաբերութեամբ:

դ. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ—քննական յօդուածներ դասադրքերի և մանկական ընթերցանութեան գրքերի:

ե. ԱՅԼ ԵՒ ԱՅԼ-Ք—զանազան տեղեկութիւններ ուսումնարանական կեանքից:

զ. ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ—վէպեր, զրոյցներ և այլն մանկանց ընթերցանութեան համար:

է. Հանելուկներ, խնդիրներ և խաղեր մանկանց համար:

ը. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Մեր ամսագրին խոստացել են գործակցել ազգային ուսումնարանների մէջ գործող յայտնի անձինք, որոնք ծանօթ են հայ հասարակութեանը իւրեանց աշխատութիւններով մանկավարժական ասպարիզում:

„ՎԱՐԺԱՐԱՆԸ“ կը հրատարակուի ամիսը մի անգամ՝ բացի յունիս և յուլիս ամիսներից. իւրաքանչիւր համարը բաղկացած կը լինի չորս տպագրական թերթից in 8°:

„ՎԱՐԺԱՐԱՆԻ“ տարեկան գինն է թէ՛ Թիֆլիսում և թէ՛ այլ քաղաքներում Հինգ ոսկրի:

Ստորագրուել կարելի է Թիֆլիսում խմբագրութեան գրասենեակում (Սազովայա փողոց, սուն Մարգարեանի) և պարոն Եփրեմ Ծատուրեանի մօտ (Գլօրցովայա փողոց): Ինչ օտարաքաղաքացիք դիմելու են խմբագրութեան հետևեալ հասցեով՝ Тифлисъ, въ Редакцію педагогическаго журнала „Варжаранъ“. Tiflis (Caucase) Rédaction, du journal pédagogique „Varjaran“.

Սուրբ Գայիանեան՝ Հայ Օրիորդաց Միջնակարգ Ուսումնարանի Վարչութիւնը յայտնում է ծնողաց և խնամատարաց, որ նոր աշակերտուհեաց ընդունելութիւնը կսկսուի առաջիկայ սեպտեմբերի 1-ից. վերաքննութիւնները 1-ից և կը շարունակուին մինչև 10-ը, իսկ ուսումը կսկսուի սեպտեմբերի 14-ից:

Տէսուղ ուսումնարանի Ն. Խոսրովեան:

Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍՆԳԻՐ

ՕԿՈՍՏՈՎ 1882 Ա. ՏԱՐԻ N₂ N₂ 142.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ

Այս համարով մենք սկսում ենք «Վարժարանի» հրատարակութիւնը:

Քանի որ մեր պարբերական գրականութիւնը անապահով գրութեան մէջ է նիւթական կողմից, գուցէ շատերին օտարտի երեւի մեր լստահութիւնը մի այսպիսի մասնագիտական թերթի հրատարակութեան ձեռնամուխ լինելու, մանաւանդ որ «Կատարակը» Թէոդոսիայում «Կրկրոցը» էջմիածնում եւ «Մանկավարժական թերթը» Թիֆլիսում յաջողութիւն չունեցան եւ կարճ ժամանակից յետոյ դադարեցան: Այդ կէտից հայելով, արգարեւ մեծ է մեր լստահութիւնը, բայց մենք նիւթական օգուտ չենք սպասում «Վարժարանից»: մեր ջանկութիւնն է լրացնել հայ ուսումնարանի պահանջը՝ ունենալ մի օրգան, որ նախանձախնդիր լինելով նորա շահերին, նպատակ հայ ուսումնարանի, հայ ուսուցչի եւ հայ ուսանողի գրութեան բարւոքմանը: Այս նպատակին մենք յուսով ենք հասնել օժանդակութեամբ մեր մանկավարժական ասպարիզում գործող յայտնի անձանց՝ սրանք խոստացել են իւրեանց գործակցութիւնը «Վարժարանին»:

Թէեւ մեր պարբերական հրատարակութիւնները չեն զայցել իւրեանց էջերը մանկավարժական յօդուածների համար եւ մենք գրեթէ ամէն օր կարդում ենք թղթակցութիւններ այս կամ այն ուսումնարանի գրութեան եւ նս-

ցա մէջ գործող անձանց գործունէութեան մասին՝ բայց մեր կարծիքով դռքա չեն լրացնում հայ ուսումնարանի պահանջը. շատ անգամ էլ անձնական հաշիւների եւ կուսակցութեանց ներկայացուցիչների գրչի ծնունդ լինելով՝ փոխանակ գործին նպաստելու, խանգարում են գործը: Մեզ բաւական չէ իմանալ, որ մի հոգաբարձու, մի տեսուչ, մի ուսուցիչ կամ վարժուհի այս կամ այն պակասութիւնն ունի. այլ մեզ հարկաւոր է միջոցներ ցոյց տալ այդ թերութեանց առաջն առնելու համար: Մեզ բաւական չէ պախարակել մի հաստատութիւն, այլ հարկաւոր է միջոցներ որոնել նորան անկեալ դրութիւնից բարձրացնելու. բաւական չէ յարձակուել, այլ պէտք է քննադատել եւ ղեկավարել:

«Վարժարանի» նպատակն է հեռու պահելով իւրեան անձնական յարձակմունքներից եւ կուսակցական հաշիւներից՝ քննութեան առնել հայ ուսումնարանի ներկայ գրութիւնը եւ միջոցներ ցոյց տալ նորան ժամանակի պահանջներին համապատասխան դիրք բռնելու համար:

Ամէն կողմից տեսնում ենք՝ որ հայն ուսում եւ կրթութիւն է ցանկանում. բայց այդ ցանկութիւնը շատ տեղերում ղեկավարների պակասութեան պատճառով մնում է անկատար եւ մեր ազգի առաջ գնալու այդ միակ ճանապարհը չէ հարթվում: «Վարժարանի» նպատակն է նպաստել հարթելու ազգային կրթութեան փշալից ուղին՝ առաջնորդելով ժողովրդեան մէջ գործելու փափագ ունեցող անձանց եւ միջոցներ ցոյց տալով նոցա ժողովրդեան պահանջին բաւականութիւն տալու:

Մենք ունինք թեմական վերատեսուչներ, տեղական հոգաբարձութիւններ, տեսուչներ, մանկավարժական խորհուրդներ—բայց եւ այնպէս փոքր ի շատ է բարեկարգ ուսումնարանների թիւը՝ համեմատելով ուսումնարանների ընդհանուր թուի հետ, չի կարելի ասել, որ շատ է: Եթէ այս տխուր երեւոյթն առաջ գար այն հանգամանքից, որ ազգքատ են մեր ուսումնարանները—մենք իրաւունք կունենայինք մեղադրելու հայ հասարակութիւնը միայն. բայց

գործին տեղեակ պնծինք քաջ գիտեն) որ միայն նիւթա-
կան աղքատութիւնը չէ պատճառ մեր ուսումնարանների
աննախանձելի դրութեան, այլ այս երեւոյթն եւս մենք
զեկավարների պակասութեանն ենք վերաբերում: «Վար-
ժարանի» նպատակն է ընդունելով այդ դերը, իւրովսանն
նպաստել մանկավարժական գործին ծառայող անձանց:

Մեր ուսումնարանների մէջ գործում են բազմաթիւ ու-
սուցիչներ եւ վարժուհիներ: Բայց շատ տեղերից գան-
գատներ են լսվում նոցա գործակատարութեան մասին:
Ի՞նչ զարմանք, որ մեր ուսուցիչներն եւ վարժուհիները մե-
ծամեծ թերութիւններ ունին: Բարձր ուսում ստացած
ուսուցիչներին մատով կարելի է համարել. շատ չեն նոյն-
պէս դպրանոցական ուսումնի առաձները: մեծ մասը մեր
ուսուցիչների եւ վարժուհիների թերի ուսմամբ ուսուց-
չութեան ծանր ասպարէզն են մտել եւ դեռ զարմանալու
է, որ նոցա մէջ գտնվում են համեմատաբար յաջող դա-
սաւորներ: Սորա զեկավարութեան են կարօտ. սոցա հա-
մար յաճախակի կրկնուող ընդհանուր մասնաւոր ուսուց-
չական փոփոխներ են հարկաւոր. սոցա համար մանկավար-
ժական ընդհանուր յօդուածներ են պէտք: Ահա այս
պակասութեան լրացնելը «Վարժարանի» նպատակը կը լինի:

Ընդհանուր գանգատ է, թէ մեր ուսումնարանների ու-
սանողները զարգացած չեն: Այս երեւոյթը առաջ է գա-
լիս այն հանգամանքից, որ մեր ուսումնարանը սէր չէ զար-
թեցնում ուսանողի մէջ ընթերցանութեան. մեծ մասով
ուսանողն ուսումնարանից դուրս գալուց յետոյ չէ կար-
գում, չի էլ կարգայ: մինչեւ որ նա ուսումնարանից ըն-
թերցասէր չը դուրս գայ. իսկ դորա համար շատ աղքատ է
մեր գրականութիւնը: «Վարժարանի» նպատակը կը լինի տալ
հայ ուսանողի ընթերցանութեան, զանազան հասակների
համար, վէպեր, զրոյցներ, զուարճալիքներ եւ բանասիրա-
կան յօդուածներ ազգային կեանքից:

Ընդունելով այսքան ծանր բեռն իւր վերայ, «Վարժա-
րանը» յուսով է գոնեայ մասամբ հասնելու այն նպատակ-
ներին, որ համառօտապէս վերը գծագրեցինք: Մեզ սիրելի է

յունայն որ հնչ քնասնիրը եւ հայ սեւուցիչն սեւարժու
 հին հայ մանկանց դաստիարակութեան գործում իւրեանց
 օգտնողակ կայրոյ կիրիներն առնել «Արժարանը» որ կ'աշ-
 խատի իւր կարողութեան չափ ծնուայել ազգային լուսա-
 ւորութեան նորիրական գործին

Հ Ա Յ Ո Ց

ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑՁԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ:

Աւերջին 20—25 տարիների ընթացքում մեր դպրոցների թուի
 աճիլը նոցա զանազան երեքուամերը եւ անհաւասար զարգանալը,
 ծրագիրների եւ ընդունուած կարգ ու կանոնի զգալի զանազանու-
 թիւնները եւ ուրիշ շատ հանգամանքներ վաղուց արդէն մտածող
 տեսուչների եւ ուսուցիչների մէջ պահանջ էին զարթեցրել ուսուց-
 չանկան ժողովներ կազմելու: Ի հարկէ այդ պահանջը զգալի բաւա-
 կանութիւն ստացած կը լինէր, եթէ մեր թեմական վերատեսչու-
 թիւնները լաւ կազմակերպուած լինէին եւ նոցա գլուխը կանգնած
 անձինք իւրեանց կոչումը լաւ հասկացած, նաև ձեռնհաս լինէին:

Թէ վերոյիշեալ պահանջը ճշմարիտ կար, քա առաջին անգամ
 արտայայտուեցաւ 1874 թ. ամառը Թիֆլիսում կայացած մի մաս-
 նաւոր ուսուցչական ժողովում: Այդ ժողովը թէպէտ պատահական
 էր եւ յանդատրաստից, բայց մասնակցողներն ամենայն սիրով տասն
 օրից աւելի աշխատեցին օրէնք 5—9 ժամ: Գոնէ ժողովն իւր մին
 քանի օրինակելի դասերի եւ նոցա քննութեամբ գրգիւ զարթեցրեց
 մասնակցողներից շատերի մէջ, զանազան տեղերից եկած ուսուցիչ-
 ների մէջ համերաշխութեան գաղափարի արծածուելուն նպաստեց
 եւ նոցա մէջ գոհունակութեան զգացմունք եւ քաղցր յիշատակ թո-
 ղեց: Նոյն ժողովում առաջին անգամ կարեւոր դատուեցաւ ծխա-
 կան դպրոցների ծրագիրների մի որոշեալ աստիճանի միակերպու-
 թիւնը եւ մի մասնաժողով ծրագիր կազմեց, որ մի մասով մինչև այսօր
 գործադրվում է շատ տեղերում:

Նոյն պահանջը ստիպեց Թիֆլիսի տեսուչներին 1878 թ.
 հանգուցեալ Գարրիէլ Սրբազանի նախագահութեամբ շաբաթը մի
 անգամ նիստեր ունենալ եւ ծխական ու միջնակարգ դպրոցների հա-
 մար ծրագիրներ կազմել: Նոցա սկսած գործը բաւականին յաջող

ընթացք էր ստացել երբ զանազան երկրորդական պատճառներով մօտ հինգամսեայ գոյութիւնից յետոյ դադարեց:

Իսկ 1880 թ. ամառը զանազան թեմերից հաւաքուած մի խումբ տեսուչներ և ուսուցիչներ՝ երեք անգամ դումարուելով դպրոցական մի քանի կարևոր հարցերի մասին ընտանեալ խորհրդակցելու այն եզրակցութեանն եկան որ արդէն ժամանակ է և շատ կարևոր մի Ընդհանուր Աւսուցչական Ժողով կազմելու և այն էլ Թիֆլիսում իբրև մեծ յարմարութիւններ ներկայացնող կենդանական քաղաքում: Իսկ այդ կարևոր դրո՞՞ր հետացնելու համար կազմեցին նախապատրաստութեանց մի ծրագիր:

Ինչպէս յայտնի է Արատանի և Իմէրէթի թեմական վերատեսուչը՝ Աեհափառ Հայրապետի հրամանով ձեռնամուկ եղաւ գործին և ծրագրի համաձայն կազմեց Ընդհանուր Աւսուցչական Ժողովի նախապատրաստութիւնները հոգացող ուսումնական և տնտեսական մասնագողովներ: Բայց մի քանի պատճառներով կարևոր նախապատրաստութիւնները տեղի չ'ունեցան և ժողովը նշանակեալ ժամանակին չը կայացաւ: Միայն մի զգալի արդիւնք ձեռք բերուեցաւ այն է՝ Աեհափառ Հայրապետը զիջանելով Թիֆլիսից ուղարկուած խնդիրքին՝ բարեհաճեցաւ հրամայել որ ամէն մի կարողաւոր քաղաքի եկեղեցի տասը իսկ ամէն մի կարողաւոր գիւղի եկեղեցի հինգ ունիւրի վճարէ՝ ի պէտս ծախուց Ընդհանուր Աւսուցչական Ժողովոյ:

1881 ամի յունիսի 20 ին Թիֆլիսում ներկայ եղող տեսուչները և ուսուցիչները ժողովի հրաւիրուելով վճռեցին ընդհանուր Ժողովը յետաձգել մինչև 1882 թ. ամառը լուծուած համարեցին նախնի մասնագողովները և ընտրեցին հինգ անձանցից քաղկացած մի մասնագողով՝ Ընդհանուր Աւսուցչական Ժողովի պարամունքների ծրագիրը պատրաստելու: Մասնագողովը միմեանց արագ յաջորդող մի քանի նիստերում պատրաստեց ծրագիրը:

Այս ժողովի մի այլ վճռի համաձայն 1881 թ. հոկտ. 3 ին Արատանի և Իմէրէթի թեմական վերատեսուչը ժողովի հրաւիրեց Թիֆլիսի բոլոր տեսուչներին, ուսուցիչներին և դպրոցական գործերին հմուտ և հետաքրքրուող անձանց, որոնք ընտրեցին տասներկու հոգուց բաղկացած Վարդապրիչ Յանձնագողով որ պէտք է հոգար Ընդհանուր Աւսուցչական Ժողովի բոլոր նախապատրաստութիւնները:

Յանձնագողովը շուտով կազմակերպուեց, ընտրելով իւր միջից նախագահ, դանձապահ և քարտուղար: Թեմական վերատեսուչի զեկուցմամբ Յանձնագողովն արժանացաւ Աեհափառ Հայրապետի հաստատութեան կոնգակին, որով Նորին Օծութիւնը պարտք էր դնում Յանձնագողովի վերայ հոգալ Ընդհանուր Աւսուցչական

Ժողովի նախապատրաստութիւնները և օրհնումէր նորա առաջիկայ աշխատութիւնները:

Որքան մեզ յայտնի է՝ Յանձնաժողովը շտապեց տպել Վեհափառ Հայրապետի կոնդակը և Ընդհանուր Ուսուցչական Ժողովի պարագմունքների ծրագիրը՝ բանակցութեան մտաւ թեմական վերատեսուչներին հետ ուսուցիչներին վերաբերութեամբ կարևոր տեղեկութիւններ ձեռք բերելու՝ վիճակային կոնսիստորիաներին՝ դիմեց եկեղեցական արդիւնքներից նշանակուած վճարները ստանալու՝ անդամակցական տոմսակներ տպելով՝ ցրուեց ամէն կողմ՝ դիմեց բարեգործական հիմնարկութեանց նպաստ խնդրելով յօգուտ Ընդհանուր Ժողովի նուազահասնիքս սարքեց՝ մի շարք հրատարակական դասախօսութիւններ գլուխ բերեց, Բացի այդ նորա միջեց ընտրուած մի մասնաժողով ձեռք զարկեց դպրոցներին վերաբերեալ մի շարք հարցեր մշակելու՝ ծխական և միջնակարգ ուսումնարանների համար Ընդհանուր Ժողովներին ներկայացուելիք ծրագիրներ պատրաստելու: Յանձնաժողովի ուրիշ արածներն առ այժմ մեզ անյայտ են: յոյս ունինք նորա գործունէութեան պատմութիւնը ժամանակին կարդալու:

Թիֆլիսի լրագրութիւնը մինչև այսօր ամէն կերպ նպաստած է Յանձնաժողովի գործունէութեանը և համակրանքով խօսած Ընդհանուր Ուսուցչական Ժողովի հարցի վերաբերութեամբ: Իսկ հասարակութիւնը և անհատներ թէպէտ մեծ համակրութիւն ցոյց տուին՝ գործին, բայց զգալի նիւթական օժանդակութիւն գործի յաջողութեան համար մինչև այսօր դեռ չէ եղած: Տեսնենք ի՞նչ չօշակիւն կիրպով կ'արտայայտեն նոքա այդ համակրութիւնը: Միայն մի քանի անձինք իւրեանց պատրաստականութիւնը յայտնած են Ժողովի ընթացքում՝ գիւղացի ուսուցիչներ հիւրասիրել Յանձնաժողովի ցոյց տալովը, իսկ դնկապետ Աղ. Մելիք-Հայկազեանը խոստացել է Ժողովի տպագրական ծախքերը հոգալ:

Թէ ի՞նչ նշանակութիւն ունի Ընդհանուր Ուսուցչական Ժողովը՝ յուսանք կը պարզուի, եթէ մի քանի խօսք ասենք այդ տեսակ ժողովների մասին, որ տեղի են ունեցել Եւրոպայի լուսաւորեալ տէրութեանց մէջ և որոնցից բարի օրինակ առնելը միշտ մեր ձգտումը պէտք է լինի:*)

Այդ տէրութեանց մէջ այժմ ուսուցչութիւն անելը մի պատահական պարագմունք չէ, այլ նոցա մէջ կան մի շարք վարժա-

*) Երանօթ հետեւեալ տեղեկութիւնները մենք բաղած ենք գլխաւորապէս Կերմանական „Rheinische Blätter“ ամսագրից (1876, 1877 թ.), „Փորձ“ ամսագրից երբորդ տարի № IX եւ մի քանի ուրիշ գրուածքներից:

պետանոցներ, որտեղից աւարտածներն առանձնապէս պատրաստուած են ժողովրդական դպրոցների մէջ ուսուցչութիւն անելու: Իսկ Համալսարաններից աւարտածները, մի քանի որոշեալ պայմանների ենթարկուելով, իրաւունք են ստանում միջնակարգ և բարձր ուսումնարանների մէջ գործելու: Մի որ և իցէ ուսուցչի ստացած ուսման այս կամ այն ձեւի պակասը լրացնելու համար այդ երկրներում կայ մանկավարժական հարուստ գրականութիւն՝ կան կանոնաւոր ուսուցչական ժողովներ՝ գաւառի կամ թեմի և վերջապէս կան ընդհանուր ուսուցչական ժողովներ:

Ծիսական դպրոցների ուսուցիչները պարտաւորուած են տարին մի քանի անգամ թեմական վերատեսուչների նախագահութեամբ գաւառի մի յարմար տեղում ժողովներ կազմելու: Հասարակութիւնը և վարչութիւնն իւրեանց կողմից նպաստում են նոցա՝ հաւաքուելու միջոցները հեշտացնելով:

Համարեա՝ բոլոր այդ տեսակ ժողովների նպատակն է եղել կատարելագործել դաստիարակութեան եղանակները, քննութեան ենթարկել մանկավարժական խնդիրներ, զարգացնել մանկավարժութեան գիտութիւնը, համերաշխութեան և բարեկամութեան զգացմունքը վառ պահել ուսուցիչների մէջ, ուսումնարանի կարօտութեանց և իւրեանց ուսուցիչների դիտողութեանց մասին հաշիւ տալ ընկերներին և վերատեսուչներին և նոր հրահանգներ ստանալ այս վերջիններից:

Փարիզի շրջանի տարրական ուսումնարանների վերատեսուչ պ. Ժօստի գեղեցիկ և հետաքրքրական ճառից, որ կարգաց նա 1878 թ. աշխարհահանգիստի առիթով կայացած ուսուցչական ժողովի առաջին մէք դուրս բեր ենք այստեղ այն կետերը, որոնք ցոյց են տալիս թէ ինչ տեսակ լինելու են մի լաւ կազմակերպուած ուսուցչական ժողովի յատկութիւնները:

Մի գաւառական ժողովի կանոնադրութիւնից նա քաղուածք է անում հետեւեալը՝ «Այս ժողովներում ուսուցիչները միջոց կ'ունենան լուսաւորուելու և խօսակցելու դպրոցների մէջ մտնելու այլ և այլ բարեօրումների վերայ, որպէս զի ոչ ոք զանազան անպտուղ փորձեր անելու վտանգի մէջ չ'ընկնի, որոնք արգելք կարող էին դառնալ նորա յանալարիմութեանը և կրկին ձգել նորան հնամոյճների մէջ»:

Մի ուրիշ տեղում ասում է՝ «2րդ պէտք է չափազանց մեծ նշանակութիւն տալ ուսուցչական ժողովներին և աւելի արդիւնք սպասել նոցանից, քան որքան կարող են նորա տալ: 2րդ պէտք է նախել ժողովի վերայ իբրև ամենարոյժ դեղի վերայ, որ կարճ ժամանակում կերպարանափոխ կ'անէ մեր ուսումնարանները և ուսուցիչներին: Օգտակար և արդիւնաւէտ ժողովների կողքին կը լինեն ու»

րիշները: որոնք թողլ կերպով առաջ են գնում և քիչ արդիւնք տալիս: Բայց չը պէտք է նոյնպէս վախենայ ուսուցչական ժողովներից և աշխատել նոցա անունը կտորել:

Մի այլ ժողովի մասին հետևեալ քաղութաբան է անում: «... Անկնդիրը ժողովի մէջ այն ժամանակ էր ընդհատում ուսուցչին, երբ իւր խելացի նկատողութիւններով կարող էր նորա դասի պակասը լրացնել» Եթայը ցոյց էր արվում անկեղծօրէն և ուղղը վում էր քաղաքավարութեամբ: ... ոչ մի անվայել խօսք: ոչ մի նկատողութիւն չը լսուեցաւ: որ կարողանար ձեւով կամ գործով վերաւորական լինել:

«... Հասարակ վերուն խօսքերից և անօգուտ ճորտմարանութիւններից ազատ պէտք է լինեն խօսողները:»

«Վօղէլի տեղեկագիրը հաստատում է, ասում է այլ ժողով որ այնտեղի ժողովների մէջ ոչ աղմուկ է եղել: ոչ անկարգութիւն: ոչ անձնատիրութեան կամ նախանձի նշաններ վիճարանութիւնների մէջ: Ամէն տեղ թագաւորել է միշտ այդ տեսակ ժողովներին վայել կարգն ու խաղաղութիւնը, իսկ ժողովականների մէջ մի փոխադարձ մարդասիրութիւն, որ շատերի համար մեծարանքի և բարեկամութեան փոխուեցաւ:»

«... Ամէնքը օգուտ են քաղում այդ տեսակցութիւններից, երբ ամէն մէկը բարի գործէյու անկեղծ փափագով է ներկայանում ժողովին»:

Մի պաշտօնական տեղեկութիւն ասում է, շարունակում է պիտոսը «Կրթութեան մէջ բարւոքումների վերայ պէտք է աւելացնենք ժողովների գործած բարոյական, ազգեցութիւնը, գիւղական ուսուցչները մօտենալով ուսուցչական դպրոցների ուսուցչներին, մասնաժողովի անդամներին և Ակադեմիայի անդամներին, նորա տեսնում են, թէ ինչ մեծ նշանակութիւն են տալիս իւրեանց պաշտօնին և իւրեանց համարումն աւելանում է իւրեանց սեփհական աչքում»:

Իսկ մի ժողովի կանոնադրութիւն որոշում է, «որ ամենայն քաղաքական գրուածքի ընթերցում, ամենայն տեսակ ճառ և վիճարանութիւն արգելվում են ժողովի ժամանակ և այլն»:

Առ հասարակ ժողովների ժամանակ, ասում է պ. Թօստը կամաց կամաց ամէնքը սովորում են իւրեանց միտքը պարզ և հեշտ կերպով արտայայտել իւրեանց կարծիքը քաղաքավարութեամբ պաշտպանել: Նոյն իսկ բնաւորութիւնների տարբերութիւնն ամէնի համար օգտակար կը լինի մէկի քաղցրութիւնը կը մեղմացնէ ուրիշի խիստ բնաւորութիւնը, ով որ ծանր ու դանդաղ է, իւր ընկերոջ աշխուժութիւնից կը կենդանանայ: Այլ դր ժողովից չի վերագտնալ առանց մի նոր բան սովորելու, առանց կազուրուելու:»

ուսնց գաղափարների նոր պաշար ամբարելու: Մի անգամ որ շո գեկառքը լաւ տեղաւորուեցաւ երկաթէ գծերի վերայ, ուրիշ ոչինչ հարկաւոր չէ նորան, այլ միայն շոգի. ուզում եմ ասել այն հոգին, խղճմտանքը և սրբազան հուրը, որ դուք գործ էք դնում ձեր պարտաւորութիւնների կատարման մէջ:

Ահա այս գեղեցիկ յատկութիւնները մի մասով ունեն և պէտք է ունենան բոլոր թեմական ուսուցչական ժողովները, որոնք այժմ յաճախ տեղի ունեն Գերմանիայում, Փրանսիայում, Չուիցերիա յում, Բէլճիքայում, Ավստրիայում, Ռուսաստանում և այլն:

Բացի թեմական ուսուցչական ժողովներից, Գերմանիայի մէջ վարժապետանոցների կառավարիչները և ուրիշ նշանաւոր մանկավարժները անսնելով, որ աւարտող նոր ուսուցիչները, ցրուելով զանազան կողմեր, շատ անգամ շեղվում են բուն մանկավարժական նպատակից, արդէն կատարելագործուած եղանակները գիտակցաբար գործ չեն դնում մանկավարժութեան նոր եղբակացութիւնների հետ շատ անգամ անծանօթ են մնում զանազան վարժապետների կառավարիչներ զանազան ուղղութեանց են հետևում դասատուութեան և կարգապահութեան վերաբերութեամբ Գերմանիայի զանազան մասերում զգալի զանազանութիւններ են տիրապետում և այլ կարևոր պատճառներ, յղացան այն միտքը, որ ոչ պաշտօնապէս, այլ իբրև միւսնոյն գործով պարապողներ ընդհանուր ուսուցչական ժողովներ կայացնեն: Այս տեսակ ժողովները գլխաւորապէս 1848 թ. քաղաքական շարժումներից յետոյ կերպարանք ստացան և այժմ Գերմանիայում ամէն 2—3 տարին մի անգամ հրաւեր է լինում բոլոր ուսուցիչներին հաւաքուելու այս կամ այն յարմար տեղում Ընդհանուր ժողով կազմելու:

Ընդհանուր ժողովների անդամների մեծամասնութիւնը թէպէտ ժողովրդական դպրոցների ուսուցիչներ են լինում, բայց գործի գլուխ կանգնող և նոցա առաջնորդող լինում են մանկավարժական և ուսումնարանական գործին հմուտ և կշիռ ունեցող անձինք: Այդ ժողովներին մասնակցում են նոյնպէս պրոֆեսսորներ և միջնակարգ ուսումնարանների ուսուցիչներ:

Բոլոր Ընդհանուր ժողովների նպատակն է եղել միութիւն և ներդաշնակութիւն մտցնել ուսումնարանների ներքին կազմակերպութեան մէջ, դիւրացնել աւանդելի ուսումը, խորհել կանոնաւոր կրթութեան մասին և պէտք եղած ժամանակն առաջարկութիւններ անել վարչութեանց. ընդհանուր սերտ կապ պահելու զգացմունքը վառ պահել և նոցա բոլորի պաշտպանած թանկագին շահերի վերաբերութեամբ համերաշխութեան գաղափարն ամրացնել և արժանաւոր կերպով արտայայտել:

Բացի կարգադրիչ յանձնաժողովի լաւ կազմակերպութիւնից,

որ հոգումէ ժողովի նախապատրաստութիւնները մեծ նշանակութիւն ունի նոյն իսկ ատենապետների ընտրութիւնը, որոնք թուով մինչև երեք կարող են լինել: Սոցա ընտրութիւնը լինումէ կամ ժողովի բացման օրը կամ մի օր առաջ:

Առհասարակ ժողովի մէջ վիճարանութիւնները և վճիռները երկու տեսակ են լինում:

Կամ մի հարց ինչ ձևով որ քննվումէ այն ձևովէլ արձանագրվումէ և այդ արձանագրութիւններից կարելի է եզրակացնել այս կամ այն կարծիքի առաւելութիւնը. կամ թէ մի հարց քննելուց յետոյ ամիոփ եզրակացնող առաջարկութիւններ (տեղիսներ) քուէարկվում են և ձայների բազմութեամբ ընդունվում կամ մերժվում են:

Մի հարցի քննութեան ժամանակ, եթէ խօսել ցանկացողներ կան, ոչ ոքին երկու անգամից աւելի իրաւունք չէ տրվում խօսելու և այն էլ մի որոշեալ ժամանակամիջոց տևողութիւն ունեցող (օրինակ 1/4 ժ.) շատ բացառական դէպքերում 5 րոպէ էլ զիջումն է լինում): Այս կարգապահութիւնը ստիպումէ ամէնքին իւրեանց կարծիքներն ամիոփ արտայայտել և միշտ մտածած ու պատրաստուած խօսել, որ հազար մի երկարախօսութիւններից ու դատարկարանութիւններից ազատումէ ժողովը:

Յատուկ նշանակութիւն էին ստանում այդ ժողովները, երբ նոցա առաջնորդողները հրապարակախօսի գեղեցիկ ընդունակութիւններ էին ցոյց տալիս և իւրեանց շնորհալի ու հետաքրքրական ճառերով նոր ոգի, նոր եռանդ և սէր էին զարթեցնում ներկայ եղողների մէջ, նոյն իսկ առաջնորդողների մէջ շատ անգամ նոր ձգտումն էր զարթում աւելի վառ եռանդով նոր և աւելի ազդու դրժունէութեան վստահութեամբ ձեռնարկելու: Ի հարկէ այս բոլոր ձգտումները և եռանդը պէտք է ծառայէին ամբողջ ազգի զարգացմանը և յառաջադիմութեանը:

Ընդհանուր ժողովները եղել են երբեմն անարդար կերպով հալածուած նշանաւոր մանկավարժների համար բարոյապէս քաջալերող և մխիթարող ատեաններ ևս: Օր. երբ Քր. Քրէօմէլը պրուսական նախարարութիւնից հալածվումէր, Ընդհանուր Ուսուցչական Ժողովը նորան այնտեղ հրաւիրեց, մեծ համակրութեամբ գովեց նորա արած ծառայութիւնները հայրենիքին և մարդկութեանը և այդպիսով մխիթարեց և ուրախացրեց առաքինի ծերունուն:

Ընդհանուր Ուսուցչական Ժողովները Գերմանիայում ունեցել են և մի այլ վիճակ նպատակ. Նոքա ձգտել են ուսուցիչների միջնորդութեամբ վերակենդանացնել, թարմացնել, նոր և եռանդուն գործունէութեան պատրաստել ազգը. մի խօսքով, Նապօլէօն I արշաւանքից յետոյ գերմանական ազգի մի մասով ճնշուած կեան-

քին նոր ու սգևորող զարկ տալ, ազգը մտաւորապէս ու բարոյապէս զօրացնել.

Ընդհ. Ուսուցչական Ժողովները աշխատում են գրգռել և պաշտպանել ազգի մէջ իդէալական մեծ և վսեմ ձգտումների տարածուիլը և բարձրանալը:

Առաջիկայ Հայոց Առաջին Ընդհանուր Ուսուցչական Ժողովն էլ, օգուտ քաղելով լուսաւորեալ ազգերի փորձերից, պէտք է ձգտի իւր վսեմ և միանգամայն ծանր պարտականութիւնն արժանաւոր կերպով կատարելու: Ուսուցչական Ժողովին ամէն մի մասնակցող պէտք է լաւ ըմբռնէ թէ ինչ մեծ կոչումն ունի իւրբև թէ ինչ սրբազան գործի յաջողութեան կարող է նպաստել, եթէ սիրալիր կերպով վերաբերի Ժողովի նպատակներին, եռանդով աջակցի նորա պարագմունքներին և բարի ցանկութիւն ունենայ նորա մէջ լսածներից և տեսածներից օգուտ քաղել և աշխատել նոյնն իւր գործունէութեան շրջանում գործադրել:

Նա պէտք է միշտ ձգտի կատարելագործուելու, իւր դիտածները և մտածածները հրապարակ հանելու, որպէս զի ուրիշներն էլ կարողանան օգուտ քաղել նորա փորձերից: Նա պէտք է աշխատի խորհրդակցել իւր ընկերների հետ ուսումնարանին վերաբերեալ հարցերի համար և այլն:

Թող ուրեմն ամէն մի ուսուցիչ և ամէն մի մասնակցող իւր սէրը, շնորհքը, ընդունակութիւնները նուիրէ այդ Ժողովին և իւր ընկերակիցների հետ ներդաշնակ գործելով, օգնէ Ժողովի վայելուչ կայանալուն և մենք էլ սրտանց ցանկանալով նորան ամենայն յաջողութիւն, այժմ իսկ շնորհակարարում ենք Հայոց Առաջին Ընդհանուր Ուսուցչական Ժողովի մատաշուտ բացումը:

ԱՐՀԱՌԻՐ.



ՄԻ ՔԱՆԻ ԹՕՒՔ

ՄԵՐ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Քաղուածք հեղինակի հրապարակական դասախօսութիւնից):

Եթէ մի ակնարկ ձգելու լինենք հայ ուսումնարանների վերայ, որ 20-25 տարի առաջ և աւելի վաղ կային մեր մէջ, կը տեսնենք, որ կրթութեան և ուսուցման գործը գտնվում էր հոգևորականութեան ձեռքում և նորա հսկողութեան ներքոյ: Այդ դասակարգը մտաւորապէս ամէնից զարգացածն էր (գոնէ կրօնական, լեզուագիտական և պատմական գիտութեանց մէջ), նորա կոչումն էր այդ և իրաւասութիւն ունէր: Տասն և հինգ դար շարունակ այդ կոչումը և իրաւունքը մնաց հայ հոգևորականութեան ձեռքում: Ինչպէս լաւ յայտնի է ամէնքին:

Մեզ շատ հեռու կը տանէր, եթէ շարունակէինք մի ըստմիտջէ յիշելու, թէ որտեղ և ի՞նչ տեսակ ուսումնարաններ ենք ունեցել և ի՞նչպիսի փոփոխութիւններ է եղել նոցա մէջ ժամանակի ընթացքում: Միայն մի քանի խօսքով ընդհանրապէս ասենք: Թէ քանի տեսակ ուսումնարաններ կային և ինչպէս էին նոքա կազմակերպուած:

Մենք կը տեսնենք, որ նոքա եղել են՝ վանքերի, քաղաքների և շատ սակաւ մեծ գիւղերի ուսումնարաններ:

1) Վանքերում գլխաւորապէս երիտասարդները կատարելագործվում էին այս կամ այն նշանաւոր վարդապետի կամ եպիսկոպոսի ձեռքի տակ հայ (հին ժամանակներն երբեմն էլ ասորոց և յունաց) լեզուի, քերականութեան և ճարտասանութեան մէջ: ուսումնասիրում էին քրիստոնէական վարդապետութիւն, աստուածաբանութիւն, ազգային պատմութիւն, մատենագիրները, սուրբ գրոց մեկնութիւնները (երբեմն էլ տրամաբանութիւն և փիլիսոփայութիւն). սովորում էին շարական երգել, վարժվում էին տաղաչափութեան և գեղագրութեան մէջ: Ուրիշ գիտութեանց նշոյլներ շատ քիչ էին նշմարվում այդ տեղերում և այդ գիտութիւնք չը կային էլ Հայաստանում: Նոքա կրթվում առաքինի բարբի և չափաւոր կեանքի մէջ և պատրաստվում հոգևոր կոչման համար: Վանքերում կրթվում էին երբեմն նախարարների և իշխանների որդիքն էլ:

Մեր ուսումնական վարդապետները, եպիսկոպոսները և կա-

Թողիկոսները մեծ մասով եղել են վանքերի աշակերտներ:

Վանքերի ուսման նիւթի և եղանակի վերայ ամենամեծ ազդեցութիւն ունեցած է բիւզանդական սիւլաստիկան, յետոյ Կիլիկիայում կաթողիկե եկեղեցու հայրերի ուղղութիւնը, իսկ անիշխանութեան վերջին դարերում՝ հայ եկեղեցու հայրերի թողած սուրբ գրքերի մեկնութիւնները:

2) Քաղաքներում առաջնորդների կամ որ և իցէ ուսումնական քահանայի ձեռքի տակ պատրաստվում էին քահանայացուներ և եկեղեցու փոքր սպաժաւորներ: Նորա սովորում էին քերականութիւն, աստուածաշունչ (երբեմն էլ աստուածարանութիւն), քրիստոնէական վարդապետութիւն, շարական, ճարտասանութիւն՝ գլխաւորապէս ոտանաւորներ և ճառեր գրելու համար, գեղագրութիւն և իրրե միջանկեալ թուանշաններ և թուեր գրել, տօմարագիտութիւն և այլն: Այս ուսումնարաններում սովորում էին իշխանների և հարուստ անձանց որդիք:

3) Քաղաքներում, երբեմն էլ գիւղերում, կային տիրացուների (խալֆաների) ուսումնարաններ, որտեղ սկզբնական ուսում և կրթութիւն էին մատակարարվում ժողովրդի որդոց: Այդտեղ սովորացնում էին այբբենարան, սաղմոս, ժամագիրք, յիսուս որդի և նարեկ:

4) Քաղաքներում կային կոյսերի կամ վարպետների կոչուած վարժատուններ (կամ ծաղկոցներ) փոքրահասակ տղայոց և նոյն կամ աւելի հասակաւոր աղջկանց համար, որտեղ սովորացնում էին այբբենարան, սաղմոս, ժամագիրք և երբեմն յիսուս որդի: Աղջիկները բացի դորանից, շատ տեղերում, սովորում էին կար, ձեռագործ և երբեմն տնարարութիւն: Այս տեսակ ուսումնարանները կառավարում էին գլխաւորապէս կոյսերը կամ կարգաւոր ձեռքի շնորհք ունեցող կանայք, մեծ մասով այրիներ:

Կարծեմ սա միակ ձևն է եղել օրիորդական ուսումնարանի, բաց առնելով սակաւաթիւ կուսանաց վանքերը, որտեղ կոյսերն էին սովորում և որտեղ, բացի ձեռագործութիւնից և կարից, եկեղեցական երաժշտութիւնն առանձնապէս ուշադրութեան էր առնվում:

Այս յիշած տեսակների ուսումնարանները մինչև վերջին ժամանակները դեռ գոյութիւն ունէին և դեռ ունեն, մանաւանդ Տաճկահայաստանի մէջ:

Նոյն ինքն Խրիմեան հայրիկի հռչակաւոր Վարազայ վանքի դպրոցը կամ այժմեան մեր վանքերի դպրոցները նոյն վիճակի մէջ են, երբեմն աւելի յետ մնացած գուցէ միջին դարերում եղած վանքերի ուսումնարաններից: Մեր այժմեան վարդապետ

ները և եպիսկոպոսները մեծ մասով այդ տեսակ ուսումնարաններում են պատրաստուած:

Ինչ կենդանի է այն սերունդը և մեր մեծերն են նորա, որոնք ուսել են քաղաքի մեծ ուսումնարանների մէջ մի ուսումնական քահանայի, սարկաւազի կամ վարդապետի ձեռքի տակ:

Տիրացուների կամ խալֆաների ուսումնարաններ ամէն մի հայաբնակ քաղաքում և շատ մեծ գիւղերում սկզբնական գրութեան մէջ կարող էք գտնել:

Իսկ ինչ որ վերաբերում է կոյսերի կամ վարպետների ուսումնարաններին, դեռ այսօր էլ կարելի է տեսնել Հայաստանի ամէն մի քաղաքում իւրեանց նախնական դասընթացով: Իւրեանց առաւելութիւններով ու թերութիւններով:

Միայն այստեղ նկատենք, որ բոլոր ուսումնարանների մէջ մեքենայական վարժութիւնները, առանց բացատրելու և քննելու աւանդելն էական եղանակներն էին ուսուցման, անհասկանալի և միակողմանի բովանդակութեամբ գրքերը անհրաժեշտ միջոցներ էին ուսման: Անողորմ ֆիզիքական պատիժը և խիստ յանդիմանութիւնները, որ երբեմն ժամանակի պահանջներն էին համապատասխանում էին, ամենագլխաւոր միջոցներն էին բարոյական կրթութեան և կարգապահութեան, որ 'ի հարկ է զգալի մեղմանում էր կոյսերի վարժատուների մէջ:

Ներկայ դարիս ընթացքում թէ եւրոպական ընդհանուր լուսաւորութեան և նորա ծաւալման և թէ քաղաքական հանգամանքների պատճառով կամաց կամաց հայերի մէջ սկսվում է նոր ոգևորութիւն, նոր շարժումն եւրոպական նոր կրթութիւնը, եւրոպական նոր գրականութիւնն ու գիտութիւնները տպագրութեան և ուսումնարանների միջոցով տարածելու ամբողջ ազգի մէջ:

Նախ մայր հայրենիքից դուրս հիմնվում են բարեկարգուած ուսումնարաններ և յետոյ փոփոխութեանց են ենթարկվում հայրենիքի մէջ եղածները ու նորից հիմնվում ուրիշները:

Հիւսիսային Հայաստանի ուսումնարանական գործը մանաւանդ մեծ զարկ է ստանում ռուսաց Կովկասի մէջ լուսաւորութիւն տարածող քաղաքականութեան ձգտումից: Հայերը հաւատարիմ իւրեանց նախորդների հետատես քաղաքականութեանը, շուտով ըմբռնում են այդ ձգտումից առաջ գալիք օգուտները և աշխատում են արժանաւոր օգուտը քաղել:

Ուսումնարանական գործի զարգացման շատ նպաստում է և հայ նորածին լրագրութիւնը, որ առանց բացառութեան, հաւատարիմ իւր վսեմ կողման, շարունակ ուսում և կրթութիւն է քարոզում ազգին: Իսկ տպագրութիւնն անընդհատ օգնութեան է հասնում մանաւանդ Աննտիկը, Աիեննան, Պօլիսը, Թիֆլիսը

Լայն բազմաթիւ դասագրքերի հրատարակութիւններով և հեշտացնում է ուսումնարանի յառաջադիմութեան գործը:

Իսկ այժմ հայի համար ուսումնարանն ազգային ամենակարևոր հաստատութիւններից մէկն է և հայ մատաղ սերունդի կրթութիւնն ամենամեծ հոգացողութեան առարկայ է դառել բոլոր դասակարգերի համար. նա մանաւանդ որ եկեղեցու պայծառութիւնն ու բարեկարգութիւնը, ազգի լուսաւորութիւնն ու յառաջադիմութիւնը համահաւասար կախումն ունեն ուսումնարանից:

Ես այստեղ մի կողմն եմ թողնում Յաճկաստանի, Պարսկաստանի և այլ տեղերում գտնուած ուսումնարանների մասին խօսելը, դժբաղդարար աղբիւրներ էլ չ'ունենք մի ընդհանուր գաղափար կազմելու նոցա վերայ և անցնում եմ խօսելու միայն ուսաստանոց ունեցած ուսումնարանների վերայ, որոնք ուղղակի կախումն ունեն հայոց հոգեւոր ծայրագոյն իշխանութիւնից:

Բոլոր ուսումնարանների վարչական իրաւասութիւնը ուսաց պետութեան հիմնական օրէնքի համաձայն, ինչպէս և տան և հինգ դար շարունակ, պատկանում է հայոց հոգեւոր ծայրագոյն իշխանութեան և ուսումնարանները կառավարվում են բացի էջմիածնի ճեմարանից, որ անմիջապէս ամենայն հայոց Ահհափառ Վաթողիկոսի հսկողութեան ներքոյ է գտնվում: Թեմական առաջնորդների և նոցա օգնականների ըստ ուսումնական մասին այսինքն թեմական վերատեսուչների ձեռքով: Իսկ ամէն մի թեմական և վիճակային ուսումնարանի մերձաւոր կառավարութիւնը ժողովրդից ընտրուած և հոգեւոր իշխանութիւնից հաստատուած հոգաբարձութեան և տեսչի ձեռքով: Իսկ նոցա ուսումնական մասը տեսչի և մանկավարժական ժողովի ձեռքով է կատարվում: Ծխական դպրոցների կառավարութիւնը գտնվում է թեմական վերատեսչի և ժողովրդից ընտրուած և հոգեւոր իշխանութիւնից հաստատուած հոգաբարձութեան ձեռքում:

Թեմական դպրանոցի տեսչի ընտրութիւնը լինում է հոգաբարձութեան ձեռքով և թեմական առաջնորդի համաձայնութեամբ ներկայացվում է հոգեւոր ծայրագոյն իշխանութեանն ՚ի հաստատութիւն: Ուսուցիչների ընտրութիւնն անում են հոգաբարձութիւնը և տեսուչը միասին: Իսկ վիճակային և ծխական դպրոցների տեսչի և ուսուցիչների ընտրութիւնը պէտք է լինի ըստ կանոնադրութեան թեմական վերատեսուչների ձեռքով: Թէպէտ դեռ շատ տեղերում այդ կանոնը դեռ չէ իրագործվում, ինչպէս հարկն է, որովհետև թեմական վերատեսուչների ընտրութիւնը և նոցա իրաւասութեան պաշտպանելը դեռ ցանկալի աստիճանի խոհեմութեամբ և հեռատեսութեամբ չէ լինում:

Ուսաստանոց հոգեւոր դպրոցների թիւը, որքան կարողացանք

տեղեկութիւններ ձեռք բերել, հետեւեալ քանակութեամբ է ներ-
ներկայանում:

Մէկ ճեմարան, 6 դպրանոցներ, որոնցից միայն մէկն ունի եօթը
դասատուն և մօտ 250 միջնակարգ և ծխական դպրոցներ: Սոցա-
վերայ կարելի է աւելացնել մօտ յիսունի չափ մանր մոլոր տիրա-
ցունների և վարպետների ուսումնարանները, որոնք սովորաբար պաշ-
տօնական ցուցակների մէջ չեն մտնում: Կ'ունենանք 300-ից աւելի
ուսումնարաններ, որոնց մէջ ուսուցիչների և ուսուցչուհիների թիւը
600-ից անցնում է, թէպէտ նոցա մի մասը կրկին անգամ են յիշ-
վում ցուցակներում: որովհետև դաս են տալիս և օրիորդական ու-
սումնարաններում: Որքան կարողացանք ստացած տեղեկութիւններից
դուրս բերել՝ 230 չափ տղայոց ուսումնարաններ են և մօտ 74 օրիոր-
դական: Աշակերտների թիւն այդ բոլոր ուսումնարաններում մօտ
14,000 և բոլորի վերայ ընդհանուր ծախս թէ ոռճկի և թէ այլ և
այլ ծախսեր միասին մօտ 500,000 ռուբլու է հասնում: Ցաւում
ենք, որ Արարատի մէջ ամէն տարուայ թեմական վերատեսուչների
հաշիւներից քաղուածքներ չեն տպվում: որպէս զի կարելի լինէր
աւելի ճիշտ տեղեկութիւններ տալ: Մի այլ անգամ յոյս չունենք
ընթերցողներին աւելի մօտ ծանօթացնել ուսումնարանական վիճա-
կագրութեան հետ:

Ճիշտ թուեր չ'ունենալու պատճառով, եզրակացութիւններ
անելուց զգուշանում ենք:

Վերջին 20—25 տարիների ընթացքում ուսումնարանների
ներքին և արտաքին կազմակերպութեան վերաբերութեամբ զգալի
փոփոխութիւններ եղան և այժմեան մեր ուսումնարանների մեծա-
մասնութիւնն արդէն հիմնական յատկութիւններով զանազանվում
է մինչև այդ ժամանակ եղածներից և այդ զանազանութիւնն օրըս-
տօրէ աւելանում է. վասնորոյ ես յարմար եմ համարում այժ-
մեան ուսումնարաններին «նոր» անունը տալ «հնից» զանազանե-
լու համար:

ա) Նոր ուսումնարանը նախ և առաջ նրանով է զանազանե-
վում հնից, որ ուսման և կրթութեան գլխաւոր կենտրոնները
այժմ փոխանակ վանքերի գտնվում են հասարակական կեանքի
աւելի զարգացած տեղերում: այն է քաղաքներում իսկ նոցա մէջ
աւանդուած ուսումը և մատաղ սերունդի կրթութիւնը գտնվում է
մեծ մասով աշխարհական անձանց ձեռքում:

բ) Նոր ուսումնարանը միայն տղայոց կրթութեան համար չէ
ծառայում: արդէն բաւականին կան և օրէցօր աւելանում են,
նաև գիւղերում էլ, օրիորդական ուսումնարանները:

Օրիորդական ուսումնարանների խնդիրն այնպէս հեշտ և ազգի
կողմից այնպէս սիրալիբ կերպով և առանց զգալի դժուարութիւն-

ների վճռուեցաւ և իրականացաւ, որ Հայ ազգին, համեմատելով միւս արևելեան ազգերի հետ, մեծ պատիւ բերելու է: Մեզանից ամէն մինը հոգու բերկրութեամբ տեսնում է ապագայ Հայ մայրերի կրթութեան գործի զարգացումը և յոյսերով լցվում է նորա սիրտը:

դ) Նոր ուսումնարանը հասարակաց է և ժողովրդական, նա հասարակաց է, որովհետև հասարակութեան ամէն մի անդամ որդու համար զիւրամատչելի է և նորա նշանաւոր մասի համար էլ ձրի ժողովրդական է, որովհետև նորա մերձաւոր կառավարութիւնը գտնվում է հոգաբարձութեան ձեռքում: Իսկ հոգաբարձութիւնն ընտրվում է բոլոր ժողովրդի մասնակցութեամբ ընտրված պատգամաւորների ձեռքով:

դ) Բոլոր ուսումնարանների կառավարութիւնը ենթարկուած է մի որոշ կանոնադրութեան և գտնվում է կանոնաւոր հսկողութեան տակ թէ ուսումնական և թէ անտեսական կողմից:

ե) Բոլոր ուսումնարանները ստիպուած են հետևելու կանոնաւոր ծրագրի, որի կատարելագործութիւնը ժամանակի պահանջ մտնողների համեմատ միշտ կարելիութիւն ունի: Հետևապէս այժմ աշակերտներն իւրեանց զարգացման և հասակի համեմատ յաջորդող դաստիարակների մէջ են զետեղվում, փոխանակ հին ժամանակ տիրող խառնաշփոթութեանց:

զ) Կրօնական միակողմանի կրթութեանը նոր ուսումնարանի մէջ (զլիւաւորապէս ներկայ դարիս ամենաընտիր ուսումնարաններով յայտնի Գերմանիայի մոտաւոր ազգեցութեան տակ) յաջորդում է բազմակողմանի կրթութիւնը: Կրօնի ու մայրենի լեզուի ուսուցման հետ դասընթացների մէջ նշանաւոր տեղ են բռնել մատեմատիկական, բնագիտական, աշխարհագրական, պատմական գիտութիւնները, խմբովին երգեցողութիւնը և նկարչութիւնը: Իսկ պետական ուսաց լեզուն, իբրև ուրիշ լեզուներից ամենակարեւորը պատուաւոր, համարեա՛ մայրենի լեզուին համահասար տեղ է բռնում դասընթացների մէջ:

է) Մինչև վերջին ժամանակներն ուսուցման սինտեմի մէջ տիրապետող զժուարհասկանալի գրաբառ լեզուի փոխարէն բոլոր ուսումնարանների մէջ աշխարհաբառ լեզուն մեծ դեր է խաղում իսկ վիճակային և ծխական դպրոցների մէջ տիրապետող լեզուն է:

ը) Մայրենի լեզուի դասագրքերն այժմ բազմակողմանի են, զիւրմբռնելի և զարգացողական, փոխանակ միակողմանի զժուարհասկանալի և մինչև անգամ բթացնող գրքերի, ինչպէս առաջ էր:

թ) Մայրենի լեզուի սկզբնական ուսուցման եղանակի փոփո-

խուժիւնը նոր է և օրէցօր կատարելագործուելու շաւղի մէջ: Հին ուսումնարանի մէջ դարերով տիրապետող այբ ու բնէ՛ փոխարէն այժմ Հնչական եղանակն է սովորական դառնում և սոսկ մեքենայական անգիտակցաբար ընթերցանութիւնն այժմ գիտակցական, տրամաբանական և բացատրական ընթերցանութեամբ է փոխարինվում:

Ժ) Առարկաների դասատվութեան մէջ նշմարվում է ընդհանուր ձգտումն հոգեբանական հիմունքների վերայ հիմնուած եղանակներ գործադրելու:

Ժա) Անխնայ և ճնշող վարմունքի փոխարէն ընդհանուր ձգտումն է որ նոր ուսումնարանի մէջ տիրապետող լինի մարդկային արժանաւորութիւնը յարգող, երեխայի անհատականութիւնը և պատուասիրութիւնը չը վերաւորող վարմունք:

Մեզանից որի՞ն յայտնի չէ, թէ մեր հայրերն ինչ դժոճարութեամբ գնում են եղել ուսումնարան, այնինչ մեր ներկայ սերունդըն առաւօտեան ուրախ ուրախ վազում է իւր սիրելի վարժատունը:

Ժբ) Արպէս զի ուսումնարանի շինութիւնն առողջապահական պայմանների համապատասխան լինի, արդէն ընդհանուր պահանջ է այդ ամէն կողմից և այլն և այլն:

Այս միքանի էական կետերը յիշելով, 'ի հարկէ' ես բոլոր զանազանութեանց մասին չը խօսեցի, որ կայ հին և նոր ուսումնարանի մէջ: Բայց կարծեմ զոքա էլ բաւական են նոր ուսումնարանի մասին գաղափար տալու, թէ ի՞նչ ուղղութիւն է ստացել նա և ի՞նչ ճանապարհով զե՞ն գնալու է, մինչև որ կանոնաւոր կերպով կազմակերպուի *):

Չը նայելով, որ նոր ուսումնարանի և հնի մէջ համեմատաբար մեծ և հիմնական զանազանութիւններ կան, բայց քննական հայեացք ձգելով մեր այժմեան ունեցած ուսումնարանների վերայ, կը տեսնենք որ նոցա մէջ զե՞ն շատ թերութիւններ էլ կան. մանաւանդ եթէ համեմատելու լինինք նոցա որևիցէ առաջնակարգ յուսաւորեալ ազգի՝ օր. գերմանացոց, ֆրանսիացոց, մինչև անգամ փոքրիկ Զուիցերիայի ուսումնարանների հետ: Մեր ուսումնարանները

*) Եւսնօթ. Եւրոպայում տեղի ունեցող կլասիկական եւ րեսալական ուղղութիւնների տաք եւ կեհնական նշանակութիւն ունեցող վէճից ազատ է մնացել հայ նոր ուսումնարանը եւ մինչեւ այսօր միայն ամերիկայեացիներն ու օգտակարն է ընդունել իբրեւ ուսուցման նիւթ: Կլասիկական ընտիր գրութիւններն եթէ ոչ բնագրով, գոնէ թարգմանութեամբ մեծ բաւակոմութեամբ կարգում են գրաբառ լեզուի մէջ փոքր ինչ վարժ եղողները. իսկ եթէ նոցա աշխարհաբառ թարգմանութիւնները պատրաստուին, որ շատ ցանկալի էր, ոչ պակաս սիրով, ինչպէն յուսալի է, կը կարգայ հայ մատաղ սերունդը:

Թուով շատ քիչ թերութիւններով լիքը և դեռ չը կաղմակերպուած կարող ենք համարել:

Ժողովրդական դպրոցների նիւթական միջոցների սղութիւնը, լաւ ուսուցիչների պակասութիւնը, ուսումնարանական վարչութեանց իրաւասութեան սահմանի ճիշտ որոշելը և ծրագիրների մէջ ցանկալի աստիճանի միակերպութիւն չը լինելն ուսման և կրթութեան նպատակի վերաբերութեամբ այն գլխաւոր խնդիրներն են, որոնց վերայ անհրաժեշտ է ամենախորին ուշադրութիւն դարձնելու:

Օրինակ. ի՞նչ է գիւղի մի հայ ուսումնարան. մի ողորմելի չորս պատէ շինութիւն, մի երկու $\frac{1}{2}$ արշինանոց բացուածներով, որոնք լուսամուտի դեր են խաղալու, մեծ մասով առանց տախտակէ յատակի, առանց տախտակած առաստաղի: Անձրև եկած ժամանակ շատ անգամ նոյն առաստաղից ջուրն աղբիւրի պէս ներքև է հոսում:

Իսկ ուսումնարանի կահ կարասիքը, Շատ տեղերում մի քանի քար և նոցա վերայ մի հաստ տախտակ արդէն աշակերտների համար սեղանի պաշտօն է կատարում, մի նոյնպիսի կարգ ու սարքով էլ սեղան՝ նստարանի պաշտօն: Օրինակներ կան, որ դրացի տան հացանոցի ծուխն էլ աշակերտների և ուսուցչի աչքերը ժամերով կսկըծացնում են:

Ընդհանրապէս փոքր է այն ուսումնարանների թիւը, որոնք առողջապահական յարմարութիւններ ունեն: Իսկ ուսումնարանի շէնքի յարմար լինելը միանգամայն կենսական հարց է մատաղ սերունդի կանոնաւոր զարգացման համար:

Ուսումնարանական պիտոյքների ժամանակին հոգալը դեռ զգալի դժուարութեանց է հանդիպում: Կան այնպիսի ուսումնարաններ, որոնք նոր դասագրքերի և ուսումնարանական պիտոյքների երես կանոնաւոր կերպով չեն տեսած: Իսկ աշակերտական և ուսուցչական դրադարաններ առհասարակ դեռ շատ քիչ ուսումնարաններ ունեն:

Իսկ ուսուցիչների վիճակը: Հայոց ուսուցիչն երիտասարդ թարմ, ոգևորութեամբ և յոյսերով լի մտնում է ազգային ուսումնարան ծառայելու. անցնում են նորա երիտասարդ տարիքը և նա ըստ մեծի մասին այնքան ապահովուած չէ լինում, որ կարողանայ գերդաստանի համար մտածել: Աշխատում է, չարչարվում և ի՞նչ է սպասում նորան՝ հազիւ քաղցածութիւնից ազատուել ամէն օր, ամէն տարի տեղից զրկուելու տենդով տանջուել և վերջը գուցէ առողջութիւնը կորցրած, ծերացած, մոռացուած և թշուառութեան մէջ օրերն անցկացնելու ստիպուած:

Կան արդէն այնպիսի ուսուցիչներ, որոնք քսանամեայ տաժանակիր աշխատութիւններից յետոյ ազգային զանազան ուսումնարաններում կորցրել իւրեանց առողջութիւնը, մոռացուել են:

ամէնքից և հասել այն դրութեան, որ նոցա համար կարելի է ասել՝ «գործել ո՛չ կարեն և մուրալ ամաչեն»:

Մինչև այժմ ուսուցիչների մեր ազգի այդ պիտանի և ընտիր մշակների ապահովութեան մասին հոգացողութիւն չէ եղել ոչ այն հաստատութեանց կողմից՝ որոնց պարտքն է (իրբև ազգի ետական շահերի մասին հոգացողների), ո՛չ հասարակութեան և ո՛չ էլ մարդասէր կամ ճշմարիտ քաղաքադէտ անհատներին կողմից:

Միւս կողմից լաւ ուսուցիչների թուի բազմանալը կենսական կարիք է հայ ուսումնարանների համար: Բացատրելու կարիք չը կայ: Արքունի դպրոցներից աւարտածների, արտասահմանից վերադարձածների թիւն աննշան է և նորա հարկաւոր են վիճակային դպրոցների և ձեմարանի համար: Իսկ ժողովրդական ուսումնարանների, ծխական դպրոցների համար, որոնց թիւը հարիւրաւոր է, կարևոր են լաւ պատրաստուած ուսուցիչներ:

Այս հարցի մասին խօսելիս մարդ դնահատում է այն բաղտաւոր միտքը, որ պահանջել է միշտ պատրաստուած ժողովրդական վարժապետներ, որին մի մասով բաւականութիւն տալ սկսած է (6—7 տարի) Թիֆլիսի ներսիսեան դպրանոցն իւր VI և VII դասատուների մէջ մանկավարժութեան դասընթացներ սահմանելով: Այսպէս ուրեմն ազգին պատրաստուած ուսուցիչներ տալու գործը մի քայլ արած է արդէն: Ներսիսեան դպրանոցի մանկավարժութեան դասընթացի կարևորութիւնն այնքան աւելի մեծ նշանակութիւն է ստանում, քանի որ Էջմիածնի ձեմարանը դեռ ուսուցիչներ չէ տուել ազգին: Եթէ նա տալու էլ լինի, որ պէտք է յուսանք, բոլոր ծխական դպրոցների զգալի կարիքը երկուսը միասին լրացնելու դեռ շատ տարիների պէտք կ'ունենան, մինչև անգամ եթէ նոցա օգնութեան հասնեն ուրիշ մի երկու թեմական դպրոցներ էլ:

Լաւ ուսուցիչների կարօտութեան մասին խօսելիս, ես ամենեին դիտաւորութիւն չ'ունիմ որեւիցէ կերպով վերաւորել այն անձանց, որոնք մինչև այսօր գործել են կամ գործում մեր ուսումնարանների մէջ: Ընդհակառակն հրապարակով խոստովանելու պարտք կայ, որ հայ ուսումնարանի մշակներն իւրեանց ձեռքից եկածը, իւրեանց ընդունակութիւնները, շնորհքը և սերը չեն խնայած իւրեանց յանձնուած մեծ և սրբազան գործի յաջողութեան համար և արել են այն ամէնը, ինչ որ կարելի էր անել ներկայ հանգամանքներում կամ ինչ որ իւրեանք անել կարող էին: Կան ուսումնարաններ, մինչև անգամ գեղեցիկ ուսումնարաններ, որոնք միայն ուսուցիչների ձրի աշխատութեան և հոգացողութեան արդիւնքն են: Ինչպէս ամէնքին յայտնի է, բազմաթիւ են ուսուցիչների ջանքով և մասնակցութեամբ տուած ներկայացումները, որոնց եկա-

մուտը նշանակուած է եղել միշտ յօգուտ այս կամ այն չքաւոր ուսումնարանի: Անձնուիրութիւնը գոնէ մինչև այսօր զխաւոր յատկանիշն է եղել նոր ուսումնարանի հայ ուսուցչի: Նորանից ամէն տեսակ պահանջներ անողների թիւը շատ է, իսկ նորան պաշտպանողները և օգնողները հազուագիւտ են:

Իսկ ուսումնարանական գործում աշխատողներից՝ այս կարելի է վստահաբար ասել, ո՛չ որ այնքան լաւ և այնքան պարզ չը գիտէ թէ ի՞նչ պահասութիւններ ունին հայ ուսումնարանները, որքան ինքը հայ ուսուցիչը և ո՛չ որ այնքան նախանձախնդիր չէ ուսումնարանի բարելաւութեան, որքան նա ինքը:

Ընդհանուր Աւսուցչական Ժողովի առիթով ցանկալի էր, որ ձեռնհաս անձինք հետաքրքիր լինէին, բացատրէին և միջոցներ առաջարկէին այն երևոյթի վերաբերութեամբ, թէ ի՞նչ է պատճառը, որ մեր ուսումնարաններից շատերի ծաղկէին ու զարգանայը յարատեւ չեն լինում: Ի՞նչ է պատճառը, որ նորա մի քանի տարի յառաջադիմութեան մէջ լինելուց յետոյ կրկին ընկնում են, կրկին կանգնում են և այսպիսով անդադար տատանման մէջ են գտնւում:

Միւս կողմից հոգաբարձութեանց կազմակերպութիւնն ազգի զարգացած և գործող դասի համար կարևոր խնդիրներից մէկը պէտք է լինի և լուրջ քննադատութեան առարկայ: Որպէս զև հայ ուսումնարանը լիակատար կազմակերպութիւն ստանայ, անհրաժեշտ է հոգաբարձութեանց իրաւասութեան սահմանը ճիշտ որոշել ուսումնարանական վարչութեան ամբողջ շրջանի մէջ, որ սկզբունքով բարիք անելու կոչուած այդ հաստատութիւնը չարիքի պատճառ դառնալու առիթ չունենայ և անկարող լինի:

Բացի այս խնդիրներից հայ ուսումնարանների համար, ինչպէս և ամէն մի լուսաւորեալ ազգի ուսումնարանների համար, մեծ և կենսական նշանակութիւն ունի ընդհանուր ուսումնարանական վարչութեան լաւ կազմակերպութիւնը:

Մենք կարծում ենք, որ ժամանակն արդէն եկած է, որ մեր մինչև այժմ ունեցած այդ վարչութիւնը վերակազմուէր: Սինօդի կառավարչական մասն անկարող է այժմ բազմատեսակ բոլոր կառավարչական պահանջներին և խնդիրներին ինչպէս պէտք է իւր ժամանակին բաւականութիւն տալ: Հոգևոր ատեաններն արդէն միայն բաւական են նորա բոլոր ուշադրութիւնը և ժամանակը զրաւելու: Իսկ ուսումնարանների գործերը, ինչպէս հաստատ փաստերից յայտնի է, երբեմն շուտափոյթ կարգադրութեան փոխանակ, տարիներով յետաձգվում են. իսկ այս տեսակ կարգ ու կանոնն այժմեան հանգամանքների պահանջներին նայելով այլ ևս անկարելի է: Եթէ Սինօդի հմուտ անդամներից մէկը յատուկ ուսումնարանական

գործերով զբաղուէր և իւր մօտ մի ուսումնական խորհուրդ ունեւար, մեծ հեշտութիւն եղած կը լինէր ընդհանուր գործի մէջ: Այդ խորհրդի անդամները կարող են լինել ճեմարանի տեսուչը, ճեմարանի յարաններում դասատու մի ուսումնական եպիսկոպոս կամ վարդապետ, նոյն հաստատութեան մէկ կամ երկու աւագ դասատու և մինչև անգամ երևանի թեմական վերատեսուչը: Այսպէս կամ այնպէս այդ տեսակ խորհուրդ կազմելն այժմ այնքան դժուարութեանց այլ ևս հանդիպելու չէ, քանի որ ճեմարանի մէջ այսուհետև պէտք է ուսման և գիտութեանց մէջ առաջնակարգ հմուտ անձինք գործեն:

Այդ խորհրդը կարող էր թեմական վերատեսուչների գործունեութեանց վրայ հսկող և հրահանգներ տուող լինիլ: Նոյն սկզբունքից դուրս գալով կարելի կը լինէր դուրսէ աճէն մի թեմում թեմական դպրանոցի տեսչի կամ թեմական վերատեսչի նախագահութեամբ տեղական ուսումնական խորհուրդներ կազմել և այլն:

Բացի ասածներէցս, շատ ուրիշ հարցեր կան ծրագիրների, դասատուութեան եղանակների, դասադրքերի, ուսումնարանական կարգապահութեան և առհասարակ ուսումնարաններին վերաբերեալ որոնք հետզհետէ լուծուելու են, որ նորանոր հարցերին տեղի տան: Եւ ինչպէս Ընդհանուր Ուսուցչական Ժողովի նախապարտաւորութիւնները հոգացող Կարգադրիչ յանձնաժողովի յայտարարութիւնից երևում է, այդ կէտերի մասին հոգացողութիւն անելը Ուսուցչական Ժողովի գլխաւոր նպատակն է լինելու: Ինչպէս յիշեալ յայտարարութիւնից երևում է, Ժողովի նպատակը լինելու է՝ ա) ծխական և միջնակարգ դպրոցների համար ծրագիրներ պատրաստել, բ) օրինակելի դպրոցում օրինակելի դասեր աւանդել և գ) աշակերտների յառաջագիմութեան, դաստիարակութեան և կարգապահութեան վերաբերեալ մի քանի կարևոր հարցեր պարզել: Մի խօսքով միութիւն ձգել ուսումնարանների մէջ կրթութեան և ուսուցման նիւթի և եղանակների վերաբերութեամբ:

Բոլոր յիշած հարցերն 'ի հարկէ մի Ընդհանուր Ուսուցչական Ժողով իւր կարճ ժամանակեայ տևողութեան ընթացքում անկարող կը լինի լուծել, նա մանաւանդ որ կան հարցեր, որ նորա իրաւասութեան սահմանից դուրս են: Բայց Ուսուցչական Ժողովի ատիթով այդ հարցերը հրապարակ հանելու անհրաժեշտ կարիք կայ եթէ կամենում ենք, որ հայ ուսումնարանն իսկապէս կազմակերպուած հաստատութիւն դառնայ և իւր նշանակութեանը համապատասխան լինի:

ԱՐԻՍՏՈՂՈՄ ԹՈՎՃԱՆՆԻՍԵԱՆ

ԻՆՉ ԾՐԱԳԻՐ Է ՀԱՐԿԱԽՈՐ

ՄԵՐ ԾԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻՆ

(Նուէր Հայոց Առաջին Ընդհանուր Ուսուցչական Ժողովին)

Իրաւամբ ասում են, թէ ուսումնարանն ազգի ծառայութեան համար լինելով՝ պէտք է համապատասխան լինի նորա պահանջներին և գոհացնէ նորա առաջին պէտքերը: Բայց ազգն իւր ներկայացուցիչներով—մամուլով, ուսումնականների, ծնողների և առհասարակ զանազան անհատների բերանով—իւր պէտքերն այնքան տարբեր տարբեր կերպով է յայտնում որ դժուար է նորան ամենայն կողմից գոհացնել և դարմանել: սակայն մինչև որ ուսումնարանն այդ պահանջմունքներն իբրև խուլ բողոք չը լրացած թողնի՝ ազգը չի կարող հաշտ լինիլ ուսումնարանի հետ, և մեր աչքով տեսնում ենք, որ այսօր, կարծես, ուսումնարանն ազգի համար մի բռն և ծանրութիւն է, քանի որ յայտնի է, թէ որքան անխնամ է պահպանում նոցա գոյութիւնը: Մի ժողովուրդ, որքան ստոր աստիճան զարգացում ևս ունենայ, երբէք չի զլանայ իւր խնամքը նուիրել այն բանին, ինչ որ իւր ճանաչած պէտքերին գոհացում է տալիս, եթէ մեր ժողովուրդն իւր ուսումնարանն իբրև խորթ զաւակ է ճանաչում, ապա ուրեմն, տարակոյս չը կայ, թէ վերջինն այսպէս կամ այնպէս դեռ ևս չի կազդուրուել նորա ակնկալութիւնների չափ: Բայց որո՞նք են այդ ակնկալութիւնները, և որքան իրաւացի կամ անիրաւ են ուսումնարանի վերայ դրած պարտաւորութիւնները:

Եթէ մի ակնարկ ձգենք այն հատ ու կտոր և երբեմն հաւաքական կերպով յայտնած գանգատների վերայ, որոնցով որ ամբաստանվում է մեր ուսումնարանը, արդարև վերջինը շատ պէտք է դժուարանայ իրան արդարացնել. այնքան ծանր մեղադրանքներից: —Նախ յիշենք այն պահանջը, որ բաւական չբաղեցրեց մեր մամուլ:

լին, թէ որովհետեւ մեր ժողովուրդն երկրագործ և արհեստով պարագող ժողովուրդ է, ապա ուրեմն նա չի ուղարկի իւր զաւակներին ուսում ստանալու, մինչև որ ապահով չը լինի, թէ այդ ուսումը հաց վաստակելու ճանապարհ կը բանայ մանուկներին: Քաղցածը ոչ տրամադրութիւն և ոչ կարողութիւն ունի լուսաւորուելու. հացի խնդիրը—կենսական խնդիր է, և ուրեմն նախ այս պէտք է լուծուի, որ յետոյ ուսումնարանն էլ ուսում առնողներից դատարկ չը մնայ:—Բացի երկրագործութեան և արհեստի մի և նոյն պատճառաբանութիւններով հետզհետէ ուրիշ պահանջներ էլ յայտնուեցան, նայելով թէ հացի խնդիրը որ տեսակէտից ըմբռնել ուղեցին. զոր օր. շատ ազդու կերպով պահանջուեցաւ ոսերէնի ուսման աւելի շատ բեղմնաւորութիւնը մեր ուսումնարաններում: Մենք շատ պէտք է սխալուենք, եթէ մամուլի այժմեան լուծութիւնից մակաբերել ուղեանք, իբր թէ այդ ձայնը բոլորովին լուել է: Ռոսերէնի քարոզը շատերի սրտի խորքից մի այնպիսի ազազակ էր, որ նա չի կարող լուել, մինչև որ ծնողական հոգացողութիւն կայ զաւակի ապագայի համար: Ծնողների բազմութիւնը որդոց փրկութիւնը ոսերէնի մէջ է մարմնացնում. շատերի երևակայութեան մէջ ոսերէն է այն անսպառ աղբիւրը, որտեղից ամենայն պաշտօն, փառք, պատիւ, հարստութիւն է բղխում: Քիչ չեն այնպիսի ծնողներ, որոնք իւրեանց դժբախտ են համարում, եթէ իւրեանց որդոց այն աստիճանի չեն հասցրել, որ սօքա կարողանան ուսերէնը կտորատել: Նոքա այս նպատակի համար ոչինչ զօհ ծանր չեն համարում, ուստի և շատ հասկանալի բնադրական զօրութեամբ նոքա սովոր են «լուսաւորութիւն և ոսերէն» ուսերէն և լուսաւորութիւն» նոյնանիշ գաղափարներ համարել. Բայց եթէ պարզամտ Հայն մեծ մասամբ զանցառու է գտնուել իւր որդուն մարդավայել ուսում և դաստիարակութիւն տալու, երբեմն բաւական համարելով աղճատուած ոսերէնի կոպիտ գիտութիւնը, և եթէ նա կտորատած ոսերէնը իւր լուսաւորութեան համար բաւական է համարել և նորանից անիրագործելի նիւթական օժիտներ է ակնկալել—նորա այսպիսի տկար հասկացողութեան քիչ կերակուր չեն տուել քսու և անխիղճ մարդիկ, որոնք չեն զագարում պատրուակած կերպով ներկայացնել լուսաւորութեան գործը: Ժողովուրդը եթէ հեշտ է մոլորվում, մոլորութիւնից դժուար է դուրս պրծնում: Եւ իրօք մեր յիշած մոլորութիւնը այնքան արմատացել է շատերի մէջ, որ զրեթէ անհնար է նոցա համոզել թէ մեզ համար ոսերէնի իսկական կարեւորութիւնը ուրիշ աղբիւրից է ծագում, եթէ աչքի առաջ ունենանք մեր քաղաքական վիճակը: Թէ նոյն այդ քաղաքական վիճակը մեզ վերայ պարտք է դնում ոչ միայն լոկ ոսերէնի գիտութիւնը, այլ նախ և

առաջ ամենայն քաղաքացուն վայել կրթութիւնը. թէ այդպիսի կրթութիւն մատակարարելու համար բնութիւնից սահմանուած որոշ ճանապարհ հայ, որից շեղուել ոչ որ չի կարող առանց չարաչար վնասուելու.— Ըստ կարգին պէտք է յիշենք այն զօրաւոր խօսքը՝ որ այժմ շատերի բերանում առօրեայ նշանաբան է դառել այն է՝ թէ «գիտութիւնը—զօրութիւն է»։ «մանուկներին գիտութիւն աւանդեցէք»։ Քիմիա, Ֆիզիքա, Ֆիզիոլոգիա, քաղաքական տնտեսութիւն, և այլն—սորա են նորագոյն պաշտած գիտութիւնները, որոնց ուսումը կամ մի անորոշ մասն արդէն մանկական հասակում կարեւոր է համարվում։ Եթէ ոմանք այս պահանջն աւելի ընդհանուր կերպով են յայտնում, միւսները խնդիրը աւելի մասնաւորելով՝ առանձին առանձին գիտութեանց թարգման են հանդիսանում. օրինակի համար յիշենք «Առողջապահական թերթի» մի յօդուածը «Աւսումնարանների գլխաւոր թերութիւնը» վերնագրով, որը որ ոչ թէ գլխաւոր թերութիւններից մէկը, այլ ուղղակի բացառապէս միակ թերութիւն է համարում՝ առողջապահութեան դաս չը տալը։ Եթէ ընթերցողը փոքր ինչ ընդարձակ երեւակայութիւն չունենայ, նա այդ յօդուածը կարդալով՝ գուցէ առ ժամանակ մոռանայ «գիտութիւնը—զօրութիւն է» խօսքը և չը յիշէ թէ դեռ շատ կան կարգով շարուած ուրիշ գիտութիւններ, որոնք իւրեանց ջատագովներին են սպասում, որ նոյնպէս հաւասար զօրութեամբ հնչակուին և խնամքի արժանանան. Եւ իրօք խնդիրն աւելի ընդհանուր է. յայտնի է թէ սաղմոսների և նարեկների վնասողն այն ուղղութիւնն եղաւ, որ ոմանք «րեալական» կոչեցին, և որ լուսաւորութեան նորագոյն ընթացքի համեմատ մի ուղղութիւն պէտք է լինէր. Թէ և այս ձգտումը, որ և մեր ընթերցարաններում երեւեցաւ, շատ արդիւնք չունեցաւ, որովհետեւ մանուկներն ամենայն բանի մի «փշուր», այսինքն ամենայն իմաստից մի մի «խօսք» էին արտագրում. բայց և այնպէս ժամանակի պահանջի ծնունդ լինելով, դեռ ևս իւր ոյժը չի կորցրել.— Մի անգամ «արդեանց պակասութիւնը», յիշելով իսկոյն զարթնում է մեր առաջ այդ բաղմապլուխ թշնամութիւնը, որի հարուածներից մեր ուսումնարանը շնչասպառ է լինում։ Մերը մտադիր չենք արդարացնել այն ուսուցիչներին, որոնք ամենայն անխղճութեամբ ղլանում են իւրեանց կարողացածը մանուկներին աւանդելու, կամ փոխանակ իւրեանց սեպուհ պարտականութիւնը կատարելու՝ լոկ միայն ազդի նահատակ են ձեւանում։ Տարակոյս չը կայ, որ այսպիսի անհաստեղ կան մեր մէջ, բայց և մեր խորին համոզմունք ենք յայտնում, թէ նոցա թիւն այնքան շատ չէ, որքան որ արտաքուստ երևում է. Ի՞նչ փոյթ պատահական թըղթակցին, եթէ նա ամենայն թիթեւամտութեամբ սեւացնում և նսե-

մացնում է քրտնաջան ուսուցչի թափած աշխատութիւնը, որին վկայ են ուսումնարանի անխօս պատերը և միայն Աստուած: Հայոց ծխական դպրոցի ուսուցիչ...ինչ թշուառ անձնաւորութիւն է. միայն իրան է յայտնի թէ ինչ շարչարանքներ է կրել տարուայ ընթացքում, որ աշակերտներին օր աւուր մի մի քայլ առաջ տանէ. միայն ինքը գիտէ, թէ ինչ քրտինք է թափել, որ հաւատարիմ մնայ իւր լուսագոյն համոզմունքներին...չի մոռացել ոչ երկրագործութիւն և ոչ արհեստ, ոչ ուսաց և ոչ մայրենի լեզու, իսկ նախ և առաջ «րէալականութիւնն» է եղել իւր մշտական հոգսը: Տարին վերջանում է. նա քննում է իւր սաներին, գովասանք է ընդունում թեմական վերատեսչից, ծնողներից և հանդիսականներից, թէ և իրան շատ լաւ յայտնի է, թէ այդ գովասանքը իւր փափագած արդիւնքին համեմատ չէ. նա ինքն անձամբ շուարած է մնում, թէ ինչո՞ւ իւր սաներն այժմ այնպէս թափուր են երևում այն ուսումից, որ տարուայ ընթացքում ինքը նոցա այնքան խնամքով է մատակարարել: Բայց և այնպէս դեռ չի վհատում պակասութիւնները պատահական պատճառներին է վերագրում, մի և նոյն ժամանակ ուխտում է նկատած թերութիւններն ապագայում վերացնել. սակայն...ճակատագրի այդ հարուածը տարեցտարի դարձեալ կրկնվում է, միշտ ի ներքուստ ինքը դժգոհ է իւրեանից, ելք չը գտնելով, թէ և բարի կամք բնաւ չի պակասիլ իւրեան: Մենք նկարագրեցինք վարժապետի ստացած գովասանքը, բայց ի հարկ է երեւնն աւելի անախօրժ ընծաներ են թափվում նորա գլխին: Մանաւանդ եթէ աշակերտն ուրիշ ուսումնարան է մտնում, ասենք թեմական դպրոցը: Այս տեղ աշակերտի գիտեցածը դատապարտվում է ամենայն խստութեամբ և առ ոչինչ է դրվում, գործ դրած ժամանակը կորած, եղած արդիւնքը ոչ միայն թերի, այլ և վնասակար ուսման շարունակութեան համար: Մեզ այնպէս է թւում, թէ այս տեղ ուսուցիչն է քաւում այն ընդհանուր տարածուած գաղափարների մեղքը, որոնք որ ուղղակի նորա կեղծ վիճակը ստեղծում են, բայց որոնք դեռ էլի կատարեալ գաղափարներ են համարվում: արդարեւ ուսուցչի վիճակը և ծիծաղելի և սարսափելի է, եւ իրօք ամենայն կողմից նորանից պահանջում են արհեստ, երկրագործութիւն, մայրենի և ուսաց լեզու, րէալականութիւն իրրեւ պսակ գործի. իւր նշանաբանն էլ միշտ միայն այդ է եղել, ինքն էլ դէպի այդ է ձգտել, այդ է գուրգուրել իւր սրտում...բայց էլի անխիղճ են գուրս բերում իրան: Արդ միայն այս խճճուած հանգոյցը, կեղծ դրութիւնը, գաղափարների շփոթութիւնը որքան թշնամութեան պատճառ է դառնում. մի ուսումնարան միւսին է նախատում, ծնողն ու ուսուցիչը հաշտ չեն, թեմական տեսուչ իրրեւ իշխանաւոր և իրրեւ պատասխանատու երկու տարբեր անձնա-

ւորութիւն է դառնում, ուսումնարանի կրած անել նեղութիւններն
 ու մամուլի վաղահաս պատգամներն՝ իրարից տեղեկութիւն չեն
 առնում, և այլն, և այլն: Մի և նոյն խնդիրն իւրաքանչիւրն իւր
 կողմն է ձգձգում, բոլորեքեանք վհատեցնում են միմեանց, որով-
 չեսուե ամենից հեշտ բանը—մեղադրելն է, բայց պարան կոիւնների
 նախառիժը մեջ տեղը դեռ էլի մնում է անխախտ, և մի ընդհա-
 նուր ոյժ չի գումարվում, ուր իւրաքանչիւրը հնար ունենայ քա-
 ջալեր և նպաստաւոր դառնալու միւսին: Մի խօսքով ամէնքն ար-
 զիւնք են պահանջում սակայն մոռանում են, թէ ինչ պայման
 ներուժն են սեղմել ուսումնարանը:—Բայց միւս կողմից մի՞թէ
 յայտնի չէ նախագիծներ ստեղծելու մեր եռանդը, մի՞թէ նախա-
 գիծներն այդ պայմանները պարզելու համար չեն: Եւ իրաւ ո՞ր
 ուսուցիչ և ո՞ր ուսումնարան չի կարող վիպասանել, թէ նոքա
 ամէնքը քանի՞ քանի՞ նախագիծներ են կազմել, որպէս զի կանո-
 նաւորութիւն մտցնեն իւրեանց ուսումնական գործում: Ամե-
 նայն ուսումնարան իւր ճշնաժամերն է ունեցել: նոքա զարկ են
 տուել, որ ուսումնարանի գործողները դարման գտնեն զգացած
 անյարմարութիւնները վերացնելու համար: Ահա այս տեղից են
 ծագել մեր բազմահատոր նախագիծները, ուր ուսումնարանի
 բոլոր պահանջները, բոլոր գեղեցիկ ձգտումները, ընտիր գաղա-
 փարները, բարձր և վսեմ հայացքները մի առ մի արձանագրվում
 են—բայց եթէ յիշենք և այլն, թէ մեր նախագիծները ծնուելով
 իսկոյն թաղուել են, թէ մեր ուսումնարաններն առ միշտ դատա-
 պարտուած են նորանոր նախագիծներ կազմելու և Սիզիփոսի պէս
 անձայր և ապարդիւն կերպով աշխատելու, մի՞թէ այս ապացու-
 ցանում է իբր թէ մենք հաստատաբայլ առաջ ենք դիմում, նոր
 հանգամանքների համեմատ անընդհատ նորոգուելու պէտք ունինք,
 իսկ ընդհակառակը մի՞թէ էլ տարակոյս կայ, որ մենք մեր փորձե-
 րից խրատ առնել չենք սովորել, մեր պահանջներն անիրագործե-
 լի պահանջներ են եղել, թէ մեր թղթագրութիւնը գործ կատա-
 րելու տեղն է բռնել: Մեր նախագիծները մի խոշոր պակասու-
 թիւն են ցոյց տալիս, թէ և զանազան ձևերով, նախագիծի գրաւիչ
 և գեղեցիկ յառաջաբանը—նորա առաջին և հիմնական պակասու-
 թիւնն է, որովհետև իւր ընդհանուր (առաձգական) իմաստներն
 արգելք են դառնում, որ բուն նախագիծի անյարմար կազմութիւնն
 բացորոշ կերպով նկատուի: Սորանով է բացատրվում, որ գոր-
 ծագրութեան մեջ անյարձող և անյարմար դուրս եկած նախագիծը,
 երբեմն ուսումնական խորհրդից ամենայն հեշտութեամբ վաւերաց-
 ուել է, կամ եթէ մի անգամ վաւերացուել է, այնուհետև թողն
 տակ է պահուել առանց գործագրութեան: Յառաջաբանի մեջ աս-
 վում է յարմարուել տեղականին, խնամել ազգայինը, ա-

չակերտի հասակն աչքի առաջ ունենալ, — իսկ նախագիծն որի շտեղի պատճէնն է, նորա մէջ ազգայինն արհամարհուած է, նորա մէջ դիւթական հնարաւորութեամբ փորձուած է 8 տարեկանին աւանդել այն, ինչ որ հազիւ 14 տարեկանին է վայել: Դերձակը երբէք մեծի հագուստը փոքրին չի հագցնի՝ միայն փեշերքն ու թևքերը տակից մկրատելով. բայց մեր նախագիծները մեծ մասամբ այսպէս տգեղ կերպով են ձեւանում: Մենք չենք դժուարանայ 4 տարուայ դասընթացը մկրատել 3 տարուայ դասընթաց կազմելով, — և այս էլ աւելի մկրատել 2 տարուայ դասընթաց կազմելով: Մենք այս չենք ասում միայն մեր մանկավարժներին մեղադրելու համար, այլ աւելի կ'ուղենայինք հաւատացնելի մխիթարութիւն նոցա, թէ փոքր ինչ անզգուշութեամբ մինչև անգամ օտար երեւելի մանկավարժները շտապովի մեծամեծ սխալներ են անում և երեակայական աշխարհներում են փարում: Եւ որովհետև մենք շատ անգամ անզգոյշ կերպով նոցա ասած խօսքերով ենք երդուում, ահա տեսնենք, թէ նոցանից մէկն ի՞նչպէս է ուզում աշխարհագրութիւն դաս տալ 10 տարեկանին, որի օրինակը մեր նախագիծներումն էլ ըիջ չեն երևում: «Աշխարհագրութիւնն այնպէս պէտք է նկարագրուի որ պատկերական տպաւորութիւններ ազդէ մանուկի մտքում: Ուսումը պէտք է սկսել մանուկի բնական տեղի այն տարերքները աւանդելով, որքան որ նորա դիտողութեան ենթարկուած սահմանը կը ներէ, ամենայն խնամով որոշել ուսումնարանից նոցա հեռաւորութիւնը և նոցա դիրքը միմեանց համեմատութեամբ. ուրիմը մանուկի ուշադրութիւնը պէտք է գրուէ՝ բլուրը, սարը, առուն, գետը, դաշտը, անտառը, ճահիճը, հողը, բուսականութիւնը, կղզին, ծովը, ժայռը, հրուանդանը, ամրոցը, դիւղը, քաղաքը, հայրենի երկրի բերքերը և բնակիչները, սոցա պարապմունքը, բարը ու վարքը, կերակուրը, հագուստը, բնակարանը և այլն: Այնուհետև (???) պէտք է վերաստեղծել տալ մանուկի երեակայութեան մէջ ուրիշ աշխարհքերի և կլիմաների համապատասխան մասերը, համեմատել տալով նոյն իսկ այն տարերքի հետ, որ մանուկն արդէն դիտել է հայրենեաց մէջ: Եթէ հնար է, շատ օգտաւէտ է օտար երկիրների բերքերն ու նկարուած պատկերները աչքի առաջ դնել, իսկ (???) մնացած բաներում յոյս կարելի է դնել այն տպաւորութեանց վերայ, որքան որ մեր բանաւոր նկարագրութիւնը գործել կարող է նորա երեակայութեան (???) վերայ»: Մի ուրիշ աւելի երեւելի հեղինակ շատ դժուարանում է հաւատալ, իբր թէ հնար կայ այս եղանակով 10 տարեկան մանուկին առաջնորդել: Այսպիսի ծրագիրը, որ ինքն ըստ ինքեան թղթի վերայ շատ գրաւեչ բան է երևում, նախ այն շտապովի

ենթադրութիւնն է անուամբ իբր թէ մանուկը բաւական դէպքեր է ստանում զանազան վայրեր և առարկաներ իրօք տեսնելու և ոչ միայն դասի մէջ խօսքերով լսելու: Այնուհետև ենթադրում է իբր թէ շրջապատող երկրի վերայ մանուկի սովորական հասցեացքն աւելի արժանաւոր և խորհրդաւոր է դառել նորա համար, քան իւր մանր գուարձութեանց առարկաները, և ուրիշն իբր թէ արդէն ընդունակ է դարձագած մտքով ըմբռնել իւր դիտածը: Աւերջապէս մանկական բնութեան յատուկ է համարում հասունացած ստեղծողական կարողութիւնը, այսինքն այնպիսի վայրեր պատկերացնելու և երևակայելու բարձր կարողութիւն, որոնց զանազան մասերը դիտածից կամ սովորականից բոլորովին տարբեր կերպով են դասաւորուած: Այս բոլորը գուցէ 12 կամ 13 տարեկանի ոյժերին համապատասխան լինի, բայց 10 տարեկանից այսքանը յուսալ միայն անմտութիւն է: Այս մի օրինակը ցոյց է տալիս թէ ո՞րքան զգուշութիւն է հարկաւոր մանկավարժական բառական նկարագրութիւններին չը խարուելու համար, թէ ի՞նչ հեշտութեամբ նախագիծներին մէջ խառնվում և շփոթվում են անհամեմատ մասերը, թէ ինչո՞ւ նոյն նախագիծներն ըստ երևութին գեղեցիկ յօրինուածներ են, իսկ իրապէս մահու են դատապարտուած նոյն իսկ ծննդեան միջոցին: Եթէ դրսից անհամեմատ պահանջներ են դնում ուսումնարանի վերայ—այս հասկանալի և ներելի է, բայց չի ներուի, եթէ ուսումնարանի մէջ դործողներն ինքեանք անհամեստ պահանջներ են ծրագրում իւրեանց նախագիծներում: Մենք տեսանք թէ ինչպէս ուսուցիչները՝ անյարմար ծրագիրներ կազմելով՝ իրանք դժուարացնում են իւրեանց դործը: Բայց շատ անգամ միայն ծրագիրները չեն դանդաղացնում այդ դործը, թէ և դարձեալ նոյն ուսուցիչներն են մեղաւոր հանդիսանում, որոնք կասկածելի աղբիւրից են քաղում իւրեանց մանկավարժական սկզբբունքները կամ քաղածը լաւ չեն մարտում: Մենք չը պէտք է զարմանանք, եթէ բաւական շատ ունինք այնպիսի ուսուցիչներ, որոնք նոր և ժամանակակից միտք ստանում են միայն լրագիրների պատգամներով, ուստի և մասնաւորապէս իւրեանց մանկավարժական սկզբունքներն էլ դարձեալ այն տեղից են քաղում: Լրագիրներից նոքա կարդում են զոր օրինակ թէ մանուկներից «կոյր հնազանդութիւն», չը պէտք է պահանջել, այլ «համոզել», պէտք է նոցա, եւ այս խօսքն ինքն ըստ ինքեան ճշմարիտ է, որովհետև մի թէ ուսումն աւելորդ ծանրութիւն չը պէտք է համարենք, եթէ աշակերտն ուսումնարանից դարձեալ կեանք պէտք է մտնէ իւր պապական կուրութիւնն ու տգիտութիւնն էլի հետը տանելով—չէ՞ որ նորա միտքը բացուած, ինքը համոզուող անձնաւորութիւն պէտք

է դառած լինի: Բայց լրագիրներէց վարժուած ուսուցիչն իւր գործըն այլապէս է նկատում: Ինչ որ իբրև արդիւնք պէտք է արտադրէ իւր լրջախոհ արուեստով նա արդէն առաջին օրից աշակերտի մտքի մէջ սահմանած է տեսնում և ուղղակի սկսում է «համոզել» սորան իբրև համոզող ուղին, երբ սա տարաբախտաբար ոչ միայն մինչև վերջը չի համոզվում, այլ շարունակ միայն խօսքերի ուսում ստանալով նոյն կուրուձիւնն ու տգիտութիւնը իւր կաշու տակ պինդ պահում է՝ մի բան էլ վերագրելով, այսինքն իւր նորահնար ճառամբանութիւնը: Մենք դարձեալ առաջուայ եզրակցութեան ենք գալիս և տեսնում ենք, թէ ինչո՞ւ արգասիքը միշտ ձգտածին համապատասխան չէ լինում: Մենք սկզբունք ենք դնում, չը մտածելով նորա արդեանց վերայ, և այնուհետև արդիւնքը դատապարտում ենք, չը մտածելով, թէ այն գոված սկզբունքից է առաջացել այս դատապարտուած արդիւնքը: — Թէ և, պահանջների կարգը դեռ չէ վերջացել, որոնց տակ որ մեր ուսումնարանը ծանրանում է, բայց եթէ յիշենք մեր սիրած նշանաբաններից մինն էլ, մենք բաւական ամփոփ պատկեր կը ստանանք մեր ուսումնարանի վիճակի մասին: «Ուսումնարան և կեանք» են ասում շատերը, այն ևս շատ տարբեր մտքով, բայց մենք կուզենայինք նորա աւալի մի նշանակութեան վերայ ընթերցողի ու շարունակութիւնը դարձնել: Արդէն սկզբից մի ճաշակ առանք, թէ այս խօսքն իսկապէս ինչ պէտք է նշանակէ. ուսումնարանն իւր աշակերտներին կեանքի համար պէտք է պատրաստէ: Մէկի համար կեանքն արուեստ է, միւսի համար— երկրագործութիւն, երրորդի համար— չինովնիկութիւն, չորրորդի համար— վաճառականութիւն, և այլն, մի խօսքով ուսումնարանն այն կարասը պէտք է լինի, որի մէջ աշակերտը թաթախուելով կամ կարմիր, կամ կանաչ, կամ կապոյտ պէտք է ներկուի, նայելով թէ ո՞վ ինչ գոյն է նախապատուում: Ուրիշներն ուսումնարանի և կեանքի յարաբերութիւններն այլապէս են ըմբռնում: Նոցա հայացքով ուսումնարանը— կեանք պէտք է լինի, կեանքն ուսումնարան է, և ուրեմն ոչինչ տարբերութիւն չը պէտք է լինի քոցա մէջ: Կեանքի մէջ երկար ժամերով մանուկները լուռ ու մունջ չեն նստած, ուսումնարանումն էլ այդպէս պէտք է նստացնել: Կեանքի մէջ բնութիւնը չի շտապում մարդուն խրատել, դար օր, մինչև որ մատը կրակին չը դիպչի, կրակը (բնութիւնը) մանուկին չի խրատում: Թէ պէտք է կրակից զգուշանալ, ապա ուրեմն ուսումնարանն էլ պէտք է սպասէ և համբերէ, մինչև որ մանուկը «համոզուի»: Մի խօսքով ուսումնարանը մի տեսակ զբախտ և պարտէզ պէտք է լինի մանկական անմեղութեան համար: Արքան— որ գրաւիչ լինի այս միտքը, հարկ չը կայ այն էլ աւելացնել, թէ որքան հարկաւոր է, որ մանուկները հասակ առնելով դարձեալ մանուկ-

ներ չը մնան... բեղերով: Այս թողնենք: Մենք ասացինք՝ թէ «ուսումնարան» և «կեանք» ուրիշ նշանակութիւն ևս ունին, որը մեր ուշադրութիւնն աւելի պէտք է գրաւէ: Թէ ուսումնարանը մի ոյժ է—եւ յ՛վ է տարակուսում: Բայց արդեօք նա մի ամենակարող ոյժ է, կամ թէ չափաւոր է այդ ուժի ազդեցութիւնը—այս մասին ասհասարակ շատ շփոթ գաղափարներ է թագաւորում մեր մէջ: Մինչև ուսումնարան մտնելը և նոյն իսկ ուսում առնելու միջոցին դուրսը մի «կեանք» կայ, որի մէջ խմորուել և խմորվում է մանուկը և այնուհետև նա դարձեալ պէտք է մտնի «կեանքը»: Արդ արդեօք ուսումնարանը կարող է իւր բարձր և վսեմ գաղափարներն այնքան սպաւորել և մարմնացնել աշակերտի հոգու և մտքի մէջ, որ սա կեանքի մէջ մտնելով կարողանայ իւր ազատ կամքով և ոչ թէ կեանքի ազդեցութիւններով դրդուած գործել: Արպէս զի չը կարծուի իբր թէ մենք բարոյական ազատութեան վերայ կասկած ենք յարուցանում, նոյն հարցմունքն ուրիշ խօսքերով կ'առաջարկենք: արդեօք միայն ուսումնարանն է կրթում մարդուն, թէ «կեանքն» է ձուլում նորան, որի ամենափոքր մասն է այն ուսումնարանը: Կեանքն արդէն իւր սպաւորութիւններն ազդել է մանուկի վերայ և, շարունակ գործելով, աւելի ևս պէտք է գումարէ նորա մէջ, այն ինչ ուսումնարանը կեանքի այսքան գումարտակած ոյժերի տակ, միայն մի քանի տարի պէտք է գործէ: Այդ ոյժերը որքան զօրեղ, այնքան էլ բազմաթիւ են, և գուցէ նոցա շարքում ոչ մէկը նուազ չէ ուսումնարանից, որի ոյժը միշտ իրականից բարձր ենք երևակայում: Ազգութիւն, ժառանգականութիւն, լեզու, կրօն, ընտանիք, դասակարգութիւն, հասարակութիւն, պետութիւն, ժամանակի ոգի, պատմական վիճակ, քաղաքակրթութիւն, գրականութիւն, մամուլ և այլն... և ուսումնարան, սոքա են այն հզօր ոյժերը, որոնք միասին այն տիեզերական կեանքն են կազմում: Արդեթէ ասենք, թէ նոր սերունդն անբարոյական է, անկրօն է, անընդունակ է քաղաքակցութեան, մարդատեսաց է, կամ որ ևիցէ ուրիշ արատ ունի, մի՞թէ զանցառութիւնը միայն ուսումնարանին պէտք է վերագրուի, և ոչ ամբողջ կեանքի վնասակար ազդեցութիւններին, որոնց թուում գուցէ և ուսումնարանն անմասն չի եղել: Միայն այս է ստոյգը, թէ այնքան ոյժերի մէջ ոչ մէկը որոշ նպատակով դիտմամբ, գիտակցութեամբ չի գործում, ինչպէս որ ուսումնարանին վայել է գործելու և կարող է գործել: նոքա ամենքը ընութեան երևոյթների պէս անդիմադրելի ընթացքով են գործում, կամ ճիշդն ասել գործում են կուրօրէն և ոչ թէ խորհրդով, ինչպէս ուսումնարանը: Ուստի ինքն այն կեանքը, որ հեղեղի պէս ամենայն բան իւր հետ քաշում տանում է, բայց մի որոշեալ չափով արուեստին դիմանալ կարող է, ուսումնարանի

վերայ սեպուհս պարտականութիւն է դնում, այսինքն, որովհետև ուսումնարանը նոյնպէս մի ոյժ է, բայց ոյժ վաղանցուկ, ժամանակաւոր, արուեստական,—ուստի կեանքը պարտաւորեցնում է նորան իւր արուեստը հանձարեղ կերպով գործ դնել, սուղ ժամանակը զուր չը սպառել և տնտեսութեամբ շահեցնել, այնպէս որ էլ ոչ որ չ'ափսոսայ այն թանկ ժամերի կորուստը, որոնք կեանքի մեջ էլ չեն երկրորդւում:

* * *

Այս օրինակներից երևում է, որ մի կողմից շատ ծայրայեղ, միակողմանի շփոթ, անիրադրծելի պարտաւորութիւններ է դնւում ուսումնարանների վերայ, որոնց լրում տալու և հաճոյանալու համար ևս սոքա, միւս կողմից, առանց հաշուի ձգտում ցոյց տալով—երկուստեք գործն ապարդիւն լինելու են դատապարտում: Տարակոյս չը կայ, որ թէ պահանջողները և թէ ուսումնարանները մի ամենազիւաւոր հանգամանք պարզ չեն գաղափարացնում և ըմբռնում: ուստի և առաջանում է մի կողմից աւելորդ պահանջ, միւս կողմից պակասաւոր արդիւնք: Մենք այնպէս ենք կարծում, թէ պահանջը և արդիւնքը միշտ անհամեմատ կը լինին, մինչև որ պարզ չի որոշում այն հասակի պաշարը, որով մանուկն ուսումնարան է մտնում, և այն հոգեկան, զօրութիւնները որ ուսում առնելիս մանուկը հետզհետէ արտայայտում է: Մանուկի հոգեկան վիճակով պէտք է որոշուի իրան ուսում մատակարարելու չափն ու տեսակը, ուստի և համառօտութեամբ կը յիշենք այն հոգեբանական իրողութիւնները, որոնք անմիջապէս մեր խնդրին են վերաբերում: Աւր մեզ էլ առաջնորդ կ'առնենք Բէնի հետազօտութիւններն այս մասին, որ իւր հոգեբանական վերլուծութիւններով այժմ առաջնակարգ տեղ է բռնում:

Ծնողը, մանկավարժը և առ հասարակ ուսումնարանի ամենայն նախանձաւոր նախ և առաջ չը պէտք է մոռանայ, թէ մանուկի միտքն ինչպէս ծնելիս, նոյնպէս և ուսում առնելու հասակում, արդէն վերջնականապէս զարգացած չէ, այլ անդադար զարգանում, աճում և փոփոխւում է նոր նոր կերպարանք առնելով: Եւ զարգացումն այնպէս չը պէտք է հասկանալ, իրր թէ կայ ժամանակ, երբ մանուկը դեռ ծանօթութիւններ ու տեղեկութիւններ չ'ունի, ուստի և անզարգացած է, և ընդհակառակն իրր թէ ուրիշ ժամանակ էլ կայ, երբ նա այն պաշարն ամբարեցով սկսում է զարգանալ: Ափսոս, որ շատերն ուղիղ այսպէս են ներկայացնում հոգու էութիւնը, Երանի այդպէս լինելու այն ժամանակ ուսման գործը շատ որոշ և հեշտ կը լինէր, եթէ ուղեղն այդպիսի վիճակի մեջ լինէր, մենք կարող էինք մխիթարուած ասել, թէ նա արդէն զարգացած է, միայն դեռ դատարկ է: Մեզ միայն կը մնար ու-

րեմն, որ հետզհետե մեր ուզած պաշարն ամբարեկնք և դատարկութիւնը լցնէինք: Այն ժամանակ ուսումը կը սկսէինք ուղղակի տարրական մասերն աւանդելով, հետզհետե յայտնի ծանօթութիւններից կ'անցնէինք անյայտներին և մեր բռնած ուղիղ շաւղից մի շուղ անգամ չը շեղուելով, կը հասնէինք աւելի բարդ և ընդարձակ ծանօթութիւններին ճիշտ այնպէս, ինչպէս համալսարաններումն են անում, այսինքն տրամաբանական ոճով: Սակայն հոգին այլ տեսակ և աւելի բարդ հանդէս է ներկայացնում: միտքը (և նիւթապէս ուղեղը) երբ որ ծանօթութիւններ է ամբարում՝ մի և նոյն միջոցին իւր էական կազմուածքով փոփոխվում է, անդադար կարողութիւններով աճում է, նոր նոր գործարաններ է հաստատում, որոնց թիւ ու համար չը կայ, ուստի և կարող ենք ստել թէ նա ոչ միայն պաշարով լցուել է, այլ այն հրաշքը, որ այժմ կարող է գործել, առաջ չէր կարող գործել, թէև տանապատիկ աւելի ևս լցուած էլ լինէր: Բայց ո՞ր է այն հայելին, որ երբ ուղենանք՝ հնար էլ ունենանք մէջը պարզապէս տեսնելու, թէ արդեօք յիշեալ գործարաններից ո՞րն արդէն կազմուել, ո՞րը շարունակ կազմվում է, և ո՞րը դեռ ևս բնաւ չի կազմուել: Մենք չունինք այդպիսի հայելի: Մենք միայն գիտենք, թէ միտքը ծովի ալիքների պէս մի տեղ լեռնանում, միւս տեղ դաշտանում է, հետեւեալ նուագին իւր կոհակները քանդում և այլապէս է շարում, (ահա համեմատութեան պակասութիւնը այս տեղ է) ... բայց, ասում ենք, անդադար ընդարձակվում է տարածութեամբ և բարդութիւններով ծովն ովկիանոս է դառնում: չոք չի կարող բուշակել թէ ո՞րտեղ ո՞րքան կը քանդուի և ո՞րքան կը շինուի, սակայն յայտնի է, թէ նա քանդելու և շինելու մեջ բնութեան մեծ զորութիւնների պէս իւր հաստատ որոշ օրէնքներով է գործում, որոնք շեղուել չը գիտեն. բայց հարկաւ դրօխց այս ամէնը մեզ համար աննկատելի է մնում, իսկ երբեմն այնպէս ցնորում ենք, իբր թէ ինչ ուղղութիւն ուղենանք՝ մտքին ևս տալ կարող ենք: Այսքանը ճշմարիտ է, որ եթէ մենք նորա օրէնքները չենք ըմբռնում, մենք արգելքներ ենք դնում նորա առաջ, բայց նա դարձեալ գործում է, թէև հակառակ կողմը, և այնպիսի արգիւնքներ է տալիս մեզ, որ մեր սպասածից բոլորովին տարբեր են լինում: Այս բաւական չէ, այլ մենք մեր նկատած սխալը միշտ ուղղել չենք կարողանում: Թորովհետև մտքի այն ներգործական աճումն անսահման չէ, այլ նա դադարում կամ զգալի կերպով նուազում է արբուների ժամանակ կամ չափահասութեան միջոցին: Եւ այն ժամանակ նա իւր հասունացած պտուղներն է արձակում և էլ առաջ չի գնում, այսինքն այնուհետև միայն արտադրում է և էլ չի զարգանում (մեր յիշած իմաստով): Միայն այն ժամանակ մենք մտաւարկապէս ամենայն մարդու

մտաւոր կարողութիւնը չափել կարող ենք, բայց կրկնում ենք, թէ զարմանալի է այն իրողութիւնը, որ թէ մինչև այդ ժամանակ յայտնի չափով մտքին հաստատութիւն և կորովութիւն չենք տուել, այն ու հետև գրեթէ հնար չը կայ կորուստը վերագարձնելու: Ստոյգ է որ մարդ ամենայն հանճարեղ գործ այս երկրորդ հասակումն է արտագրում, բայց այն էլ անհերքելի է, որ այդ կարողանում է անել միայն այն առաջին հասակում գարգացուցած զօրութիւններով, ուստի և այս վերջիններն ամբողջ կեանքի համար մեծ խորհուրդ ու նշանակութիւն են ստանում: Ուսումնարանի ղգուշութիւնը միշտ այս պէտք է լինի, թէ արդեօք ո՞րքան է կարողանում այդ զօրութիւնները գործ անել և ժամանակի յարմարութիւնը զուր չը փախցնել: Եթէ այդպէս դժուարանում է ուսումնարանի գործը, որ նորան յանձնվում է դեռ և սշարունակ աճող և ոչ թէ արդէն վախճանական կերպով զարգացած միայն—անշուշտ նորա առաջին պարտականութիւնն այն պէտք է լինի, որ ճշգրտութեամբ որոշէ մի կողմից, թէ այդ ժամանակ մտքի ո՞ր տարերքն են գործում իսկ միւս կողմից, թէ մինչև այդ ժամանակ ո՞րոնք են եղել գործող, որպէս զի ըստ այնմ ևս իւր կարճատև անելիքը հաստատ և արդիւնաւոր կերպով կատարել շարունակէ: Գժուար չէ նկատել, թէ մեր ուսումնարանները միշտ աւելի սիրում են սկսել, քան շարունակել:

Մի երկրորդ մոլորութիւն, որ առաջինի հետ սերտ կապուած է, նոյնպէս մեզանում շատ է ընդհանրացած: Ասում են, թէ մանկական հասակի թարմութիւնն ամենայն բան կարող է վերցնել, ուստի և ճգնում են մանուկներին ամենայն բան սովորեցնել—ո՞վ, ի՞նչ, և ի՞նչպէս կարող է: Ճիշդ է, թէ այն հասակը շատ ձեռնտու հասակ է բան սովորեցնելու համար, բայց սովորեցնելով կարելի է թէ մեքենայացած և թէ բանական էակներ դուրս բերել ուսումնարանից: Մենք զարմանում ենք թռչունների մրջիմների մեղունների արհեստական գործերի վերայ, անշուշտ սօքա ծագում են մի տեսակ գործողութիւններով, որոնք նման են և յիշեցնում են մարդկային հոգեկան գործողութիւնները, բայց և այնպէս հաստատապէս պնդում ենք, թէ դոքա բանական գործեր չեն: Մարդս էլ իւր արհեստում միշտ հասնում է կենդանեաց արհեստների կատարելութեան չափին, բայց նա ունի կատարելութեան ուրիշ պնդուղներ, որից կենդանին զուրկ է: Ահա այս երկրորդ մասում մարդը կատարելապէս անգամալուծուած կարող է հանդիսանալ կեանքի և ուսումնարանի շնորհքով, ինչպէս և շատ յաճախ պատահում է: Ուսումնարանի ծառայութիւնը հէնց այս պէտք է լինի, որ կարողացածի չափ իւր հնարներով մարդուն այդ վտանգից փրկէ: Արդէն բնախօսութիւնը պարզ ապացուցանում է, թէ մարդն այդ եր-

կու տեսակ հոգեկան գործողութիւնները տարբեր գործարաններով է կատարում. նորա ստորին կարգի գործողութիւնները նեարդային կարճ ճանապարհով են կատարվում, այն ինչ բարձր կարգի գործողութիւնները կատարվում են նեարդային կրկին ճանապարհներով, այսինքն նեարդային թէ երկար և թէ կարճ ճանապարհներով. Այս հանգամանքն աչքի առաջ ունենալով, այժմ մի համառօտ հայեացքով ծրագրենք հոգեկան զարգացման բնական ընթացքը:

Ում յայտնի չէ, թէ մանկական մտքի կազմութիւնը հետըզհետէ մեծամեծ փոփոխութիւններ է կրում, նոր նոր կարողութիւններ արտադրելով: Բայց և այնպէս շատ դժուարանում ենք որոշ գաղափար կազմել և համապատասխան խօսքեր գտնել այդ կարողութեանց իսկական կարգը նշանակելու համար: Ընդհանրապէս մենք նկատում ենք, որ մանուկը շատ սիրում է գործել և ուզում է, որ անդադար զբաղուած լինի. չի սիրում երկարատե զբաղմունք. հակում չ'ունի իւր միտքը մի առարկայի վերայ կենդրոնացնելու. ի բնէ կայտառ լինելով սիրում է խաղալ և ուրախանալ. նորա զուարճութեանց աղբիւրը զբայարանքների գործողութիւնից է ծագում: Հետաքրքիր է և նորա հետախուզութիւնը հասնում է մինչև այն աստիճան, որ պատրաստ է ամենայն բան քանդել, կտրել, աւերել, շատ տրամադրութիւն ունի ուրիշներին նմանելու. վերին աստիճան հաւատացող է. հնարագէտ և հնարամիտ է, և սիրում է ինքնահնար (թատերական) ներկայացումներ. բնածին մտերմութիւն ունի և սիրում է հաղորդակցութիւն: Յատկապէս մտաւոր յատկութեանց գալով՝ մանուկը հակում ունի գիտողութիւններ անելու, բայց վերացման յօժարութիւն չունի, նորա յիշողութիւնը մեծ է, դատողութեան կարողութիւնը—թոյլ:

Դժուար չէ նկատել, թէ այս նշանների մէջ նկատվում է՝ առ հասարակ շարժում, հինգ զբայարանքների տպաւորութիւններ, զգացական յոյզեր և մտաւոր կարողութիւններ, որոնք հոգեբանութեան առանձին առանձին գլուխներ են կազմում, որ և մենք նոյն կարգով կը բնենք: Նախ՝ գործունէութիւն կամ շարժում: Մանուկը գործում է ինքնագիտի և գրէթէ առանց դադարելու, բայց այս գործունէութիւնն աննպատակ, անորոշ և փոփոխական է, և ծագում է ներքին բնական աշխուժի լիութիւնից: Կրթութեան գլխաւոր նպատակն այն պէտք է լինի՝ որ այդ աստանդական գործունէութեանը պիտանի ուղղութիւն տայ, սակայն ոչ թէ նոյնը ճնշելով, բռնաբարելով կամ սանձելով՝ այլ նոյնը շարունակել խրախուսելով ճիշտ այն միջոցին, երբ որ նա ինքրն անձամբ լաւ ուղղութիւն է բռնում, ուրեմն յաջող հանգամանքներից օգուտ քաղելով: Դառնանք հինգ զբայարանքներին: Արովհետև դոցա տպաւորութիւնները թարմ են լինում, ուս-

տի և զգայութիւններն ակտիւօրէն և միշտ ցանկալի են մանուկի համար: Այս է պատճառը՝ որ մանուկները խիստ անձնատուր են դրսի տպաւորութիւններին և իւրեանց զգայարանքներից օգուտ քաղել են սիրում: Բայց սկզբիցն այդ տպաւորութիւններն աւելի յուզում են մանուկին, քան խաղաղ կերպով մտաւորապէս զբաղեցնում: Յայտնի է, որ միտքը զարգանում է տպաւորութիւններն իրարից նուրբ զանազանելով, և այս զանազանելու կարողութիւնը դեռ չէ զարգացած մանկութեան հասակում: Իսկ զգացական յոյզերը մասամբ նախապատրաստում և մասամբ խափանում են մտաւոր ոյժը՝ այսինքն յուզած ժամանակ մարդ մի կողմից լաւ է նկատում ինչով որ յուզուած է, միւս կողմից յուզուած վիճակը մշտքին դադար չէ տալիս, որ բան նկատէ: Եւ երբեմն մենք տեսնում ենք, որ շատ տպաւորութիւններ մտքի համար մանկութեան ժամանակ կորչում են, մեր ասած իմաստով: Երրորդ՝ մենք պէտք է զանք բուն յոյզերին կամ բուն զգացումներին, որոնց չը պէտք է շփոթել հինգ զգայարանքների տպաւորութեանց կամ զգայութեանց հետ: Մեզ յայտնի են բուն ընկերավարական զգացումները կամ յոյզերը, զոր օր. սէր և մտերմութիւն, նոյնպէս և ներհակ բնաւորութեան յոյզեր, զոր օր. բարկութիւն, եսականութիւն, իշխանասիրութիւն, և այլն, վերջապէս—երկիւղի յոյզ: Այս բոլոր յոյզերը մանկութեան հասակից արդէն զարթնում են, և կըրթութիւնը միշտ կարող է դոցա զօրութիւնը հարկաւոր դէպքերում մասամբ առաւելացնել կամ նուազացնել, այս կամ այն առարկաների և գաղափարների զուգորդութեանց աղբեցումները: Զորրորդ՝ դառնանք մտքին: Սորա հիմնական կարողութիւնները կամ գործողութիւնները—այսինքն զանազանումը, նմանութեան ճանաչումն ու մտապահութիւնը—արդէն սկզբից յայտնի երևում են մանուկի մէջ, բայց և այնպէս դոքա խափանւում են աւելի գործող յուզողական զարգացմամբ, թէ և սա էլ, ինչպէս արդէն ակնարկեցինք, այն հասակում մասամբ նպաստում է այնպիսի նիւթոգովելու, որ ապագայում անշուշտ պէտք կը լինի: Թէ մանկութեան միջոցին արդէն որոշ մտքի գործողութիւններ կան՝ ապացոյց կարող է լինել այն հասակի հետևեալ բարդ կարողութիւնները.—երևակայութիւնը, ցնորքը, հետամտութիւնը, թատերագործութիւնն ու նմանագործութիւնը, Որտեղից երևում է, թէ մինչև անգամ իւրաքանչիւր առանձին գիտողութեան համար մտքի բարձր գործունէութիւն է հարկաւոր: Գործունէութեան, զուարճութեանց (որոնց աղբիւրը զգայարանքներն են) և յոյզերին ուղղութիւն տալը բարոյական դաստիարակութեան կը պատկանի, Բայց մտաւոր կրթութիւնն էլ հիմնուած է այդ նպատակ ոյժերի վերայ, միայն նորա յաջողութեան համար գլխաւորապէս հարկաւոր է զեկավարուել մտաւոր ոյ-

Ժ եր ի յաջորդող աճման կարգով, որ և այժմ կը նկարագրենք:

Մեր ծանօթութեանց սկիզբն առ հասարակ ինքնին ծագում է գործունէութիւնից և զուարճութիւնից, որոնք մանուկին յատուկ են, բայց նոքա իւրեանց կատարին կը հասնեն միայն այն ժամանակ, երբ որ կարողութիւն է զարթնում կամ աւել ուշադիր լինելու նաև այնպիսի առարկաներին, որոնք ինքն ըստ ինքեան չեզոք կամ անհետաքրքիր բաներ են, որոնք ուրեմն ինքնին զուարճութիւն չեն պատճառում և ազդու չեն են գործում: Ծանօթութիւններն այսպէս էլ ձեռք բերելու աստիճանները սոքա են: Մենք տեսանք, որ առաջին քայլերն անում ենք ինքնապիմի, լիութեան ծայրին հասուցած ներքին աշխուժով և գործունէութեան միջոցին, այն ևս մեզ հետաքրքրող տպաւորութեանց ազդեցողութեամբ, ուր մի և նոյն ժամանակ մեծ զուարճութիւն ենք զգում: Այս հասակում սկսում ենք շատ առարկաների ծանօթութիւն ստանալ իսկ ամենայն գիտութիւն ծանօթութեամբ է սկսվում: Սակայն մանկական մտքի առաջին գիտակցական ձգտումը ծանօթութիւն չէ, այլ նա նախ և առաջ հետամուտ է անմիջական զուարճութեան: Եթէ իւր առաջև համեմատաբար աւելի հաճոյական բան ունի, նա էլ ուշադրութիւն չի դարձնում պակաս հաճոյականի վերայ: Մինչև որ զուարճութիւնը շարունակվում է, միայն այնքան էլ շարունակվում է գիտողութիւնը, ուշադրութիւնը, կենդանացումը, և բնաւ ոչ աւելի: Կէնց որ մի բանի հետաքրքրութիւնն սկսում է թուլանալ, իսկոյն ուրիշ բան է ցանկալի դառնում: Եթէ անախորժ զգացմունքը գերակշռում է ախորժական զգացմունքին, ուշքը դառնում է ուրիշ առարկային: Այս բոլոր պայմանները գիտութիւն ստանալու համար հարկաւ աննշան չեն և բաւական ձեռնտու են. շատ առարկաներ մեր ուշադրութիւնն այդպէս են գրաւում թէև շատ անգամ պատահամբ միայն: Մինչև անգամ եթէ անախորժ բաներից մեր ուշադրութիւնը շուտ ուրիշ կողմն ենք դարձնում, զոնէ չենք մոռանում, թէ որոնք են անախորժները: Ախորժ կամ անախորժ սաստիկ տպաւորութիւնը միշտ մի ոյժ է: Գործունէութիւնն էլ, որ մենք առաջ ասացինք, թէ աննպատակ է լինում, նոյնպէս միշտ այն կողմն է հակվում, ուր որ մի զուարճութեան յոյս կայ: Շարժող գործարանները գործում են ներսի գրգիշներով, քանի որ այնտեղ (կենդանական) ոյժ կայ: Երբ որ շքին սպառում է, գործն էլ վերջանում է: Ի ներքուստ ուժի ներգործական սպառումը մեզ միշտ մի զուարճութիւն է պատճառում, բայց գործունէութիւնն ու զուարճութիւնը կը կանգնեն, եթէ վերջացել է նետրոգային և մկանանց ուժի սպառումը: Այսպիսի գրգմամբ ծագած շարժումները միայն պատահամբ կարող են օգտաւէտ բան առաջացնել, որովհետև դեռ հնար չը կայ կա-

մաւ այնպիսի բարդ շարժողութիւններ կազմելու, որ կարողանան այս կամ այն բանական նպատակին ծառայել: Բայց տարակոյտ չը կայ, թէ շարժումները հետզհետէ պատրաստվում են այդպիսի բարդութիւններ գոյացնելու համար: Մենք դիտենք, թէ ինչպէս մանուկը նախ պատահամբ շարժել է սկսում ձեռքերը, գլուխը, իրանը, աչքը, բերանը, լեզուն, իսկ այնուհետև հետզհետէ խորհուրդ են ստանում այդ շարժումները, որոնք երբեմն բաւական բարդ են: Այս խորհրդաւոր շարժումներն էլ դարձեալ ծագել են միշտ հաճութիւններին ձգտելովը և անհաճութիւններից խորշելովը:

Բայց ինչպէս ասացինք, մտքի հրահանգութիւնը մի երկրորդ աստիճան ևս ունի, որ աւելի նշանաւոր է մեզ համար, այսինքն՝ անտարբեր (չեզոք) առարկաների իւրացնելը, թէ կրաւորական տպաւորութիւններով և թէ ներգործական ուժով (Յ զգայարանք և դործունէութիւն): Այս ձգնաժամի ծանօթութիւնը շատ կարևոր է, ուսման գաղտնիքը սորա վերայ է հիմնուած. սա այնքան նշանաւոր է, ինչքան որ համարվում է թանձրացեալից վերացեալին անցումը: Բայց որ ոմանք մի դիւրեւան ուստիւնով կատարել ցնորում են:

Մենք դարձեալ պէտք է կրկնենք, թէ հնար չը կայ, որ ինքն ըստ ինքեան չեզոք բանը մեզ գրաւել կարողանայ, բայց հարկաւ եթէ նա ինքն ըստ ինքեան անտարբեր էլ լինի, նա կարող է գրաւիչ դառնալ գոնէ իբրև հնար մի որ և իցէ նպատակի համար: Մեծ տարբերութիւնները մեզ միշտ զարմացնում են, ուստի ինքնին գրաւում ու տպաւորութիւն են գործում մեզ վերայ, զոր օր, սենեակի լուսաւորութեան խիստ փոփոխումը, ձայնի յանկարծակի առաւելանալը կամ նուազելը: Բայց եթէ փոփոխութիւնը շատ նուազ է, տպաւորութիւնը կորչում է մեզ համար. այսպիսի տպաւորութիւնները նկատելու համար մանուկը ոչ կարողութիւն և ոչ կարիք ունի: Մի սենեակից միւսն անցնելով, ուր տասն աստիճան աւելի ցուրտ կամ տաք է, տարբերութիւնն անզգալի չի մնայ. բայց ամենայն մարդ չի նկատում մի աստիճանի տարբերութիւնը, թէ և կարողութիւն ունի այդ անելու. այսպիսի տարբերութիւն նկատելու համար էլ մի առանձին գրդում պէտք է լինի:

Միտքը մի քայլ առաջ է գնում, երբ որ սկսում է ոչ միայն բուն առարկաների վերայ, այլ և նոցա շրջապատող հանգամանքների վերայ ուշք դարձնել: Մանուկը ծանօթութիւն է առնում ոչ միայն ուտելու և հաճելի եղած առարկաներից, այլ և այն ամենայն հանգամանքից, ինչ որ գուշակում է նոցա երեւոյթը: Այս ճանապարհով շատ ընդարձակվում է յիշողութեան պաշարը, ուր դրդիչը ինչպէս տեսնում ենք, դեռ էլի շահասիրական բնաւորութիւն ունի, այսինքն նա դեռ էլի զուարճութեան ձգտումն է և անա-

խորժ զգացումից ազատուելու ցանկութիւնն է: Միայն այն տարբերութեամբ, որ թէ զրգումները նոյնն են մնացել, արդէն նոցա գործունէութեան շրջանը շատ ընդարձակուել է: Որքան լայն է մեր զուարճութեանց երկրորդական հանգամանքների ասպարէզը, այնքան խոր է ազդում դրդիչը մեր ուշադրութեան վերայ, որ և գրավում է հեռաւոր ծանօթութիւններ առնելու համար: Մի թոյլ ձայն, որ իրրև զարկ աննկատելի է և ոչինչ զուարճութիւն չի տալիս, կարող է մեր սիրած անձի դալուստը գուշակել տայ, ուստի անշուշտ կը զգացուի և նկատելի կը դառնայ:

Մենք Նկարագրեցինք մանուկի այն վիճակը, երբ նա ինքնագործ է և միայն իւր ներքին շարժառիթներին է հպատակվում, և մենք տեսանք թէ այդ ժամանակ միտքն ինչպէս է զարգանում մեր յիշած զրգումներով: Գանք այժմ ուսումնարանին, ուր մանուկի ուշադրութիւնն արուեստական կերպով պէտք է ուղղուի օտարի առաջնորդութեամբ և հրամանով: Հարկ չը կայ ասել, թէ զրդիչները նոյնը պէտք է մնան, բայց այլ կերպով պէտք է շարժուին. մտաւոր աշխատութեանց հեշտացնող պայմանները, նոյնպէս և բոլոր զգուշութիւնները, դարձեալ նոյնը պէտք է լինին: Եթէ մինչև այստեղ մանուկը պատահաբար էր զարգանում, այսուհետև նորա ուշադրութիւնը պէտք է դարձնուի այնպիսի նուրբ զանազանութեանց վերայ, որոնք զեռ աննկատելի են մնացել, նա պէտք է նկատէ գոյների, ձայների երկու, երեք, չորս նրբութիւնները, և մանաւանդ այն վերին աստիճան տաղտուկ բերող տարբերութիւնները, որ գիր կոչուած ձևերն են ներկայացնում: Այստեղ ոչ մերձաւոր և ոչ հեռաւոր զուարճութեան յոյս կայ, ոչ հիացուցիչ տպաւորութիւն, ոչ ներքուստ ծագող հրճուանք: Ել ի՞նչպէս ուշադրութիւնը պէտք է գրաւուի, կամ մանաւանդ ուշիմ կենդրոնացում հաստատուի. այստեղ էլ ուրիշ ազդու հընար չը կայ, բացի վարժապետի լայս է հրամանս: Անկարելի է այս նոր հանգամանքը չ'ընդունել. բայց ի հարկէ սա էլ պայմանաւորուած է, և զեռ էլի վաժապետը բաւական պէտք է մտածէ, թէ ինչպէս պէտք է գործէ, որ թէ՛ յաջող վախճանին գայ և թէ ցանկալի մեղմութիւն պահպանէ, որքան որ իւր արուեստը ներում է: Նախ դաստիարակն իւր ազդեցութիւնը վստահալի հիմունքի վերայ պէտք է հաստատէ. նա պէտք է իւր հեղինակութեամբ իշխէ մանուկի վերայ, առանց երկիւղ յարուցանելու և սարսափեցնելու, որչափ որ այս կարելի է: Այս յայտնի է: Այնուհետև հարկաւոր է այնքան խորխուսել փոքր հասակից երևան եկած բնական հակումները, որ, տեղն եկած միջոցին, կարելի լինի շարժել և գործ, զնել մանուկի ներքին զրդիչներն, և սանելու համար: Այս էլ անյայտ չէ: Ա. երջուպէս պէտք է վճռապէս խոստովանել, թէ այնու այմենայն է

մենք էլի ստիպուած կը լինինք դէմ յանդիման կանգնելու այն պիսի անհետաքրքիր առարկաների առաջ, որոնց չենք կարողանայ ոչ մէկ դիւրացուցիչ և ճարտար հնարներով քաղցրացնել և հաճելի անել: Ուրեմն անկարելի է խուսափել գառն աշխատութեան ջանքերից: Բոլոր հնարները սպառել են, որոնք կարող էին պոք ծանրութիւնից ազատել: Ել ի՞նչ է մնում ուրեմն անելու: Ատր է փորձել մանուկի ընդունակութիւնը թէ որքան կարողանում է տանել բռնի կենդրոնացած ուշադրութեան ջանքերը: Այդ ընդունակութիւնից լիովին օգուտ պէտք է քաղել, բայց և առանց դէպի չարը գործ դնելու, ուրեմն հարկաւոր միջին ճանապարհն ընտրելով: Ատր է մանուկին ճաշակել տալ և այն դառն հրահանգութիւնը, որի լծի տակ վաղ թէ ուշ կեանքը նորան անշուշտ կ'առնէ. թող նա հետզհետէ սովորի անգրաւիչ անհաճոյ և դժուար աշխատութիւնները, բայց ի հարկէ մի և նոյն ժամանակ զուրկ չը մնայ հարկաւոր հանգստութիւններէ, ու զուարճութիւններէ, որով հոգին անշուշտ զուարթանում և կեանքը բեղմնաւորվում է:

Մանկանց մտքի աճումն այսպէս ծրագրելուց յետոյ՝ կը մնայ կարճ խօսքով աւելացնել, թէ ամենայն մարդ մի գաղափարով չի ձուլվում, միայն թէ զարգացման ճանապարհը բոլոր մարդկանց համար մի և նոյնն է: Ուստի անհատական տարբերութիւնները բնաւ չը պէտք է մոռանալ զարգացման այսպիսի միակերպ ընթացքի մէջ: Նախ եթէ մանուկի մի որ և է զգայութեան նշանաւոր գործարանը լիովին կամ մասամբ պակասում է, որ զոր օր տեսութիւնը կամ ուրիշ գործարանը, այն ժամանակ զգայութեանց մի ամբողջ դասը բոլորովին կամ մասամբ անզարգացած պէտք է մնայ նորա մէջ, և ուրեմն կրթութիւնը մի մեծ թերութիւն կ'ունենայ: Երկրորդ՝ եթէ բոլոր զգայարաններն էլ լինին, նոքա դեռ ևս գուցէ այնքան թերի կերպով են զարգացած, որ կրթութեան մէջ իւրեանց պաշտօնը կատարեալ կերպով չեն կարող կատարել: Բայց ինչ որ այս օր թերի է, գուցէ մի տարի կամ երկու տարի անցնելուց յետոյ, իւր կատարելութեանը հասնի: Երրորդ՝ եթէ մտքի ըմբռնողութեան համար ոչինչ արգելք չը կայ, որ առարկաները և նոցա յատկութիւններն ըմբռնէ, շատ կարելի է, որ ուշադրութեան ոյժը դեռ չէ կազդուրուել, եթէ այսպիսի դէպքում ընդունակութիւնները խիստ աշխատեցնենք, և այսպէս ֆիզիքական աճման արգելք դառնանք: մենք միայն ի զուր կ'աշխատեցնենք ոյժերը: Ատրջպէս՝ եթէ ըմբռնումն ու ուշադրութեան ոյժը կազդուրուած էլ լինին, շատ կարելի է, որ համապատասխան զրգումները դեռ չեն ազդում, ինչպէս հարկն է: Երգէն վերելք տեսանք, թէ երբեմն զգացումն ու հակումն առ ժամանակ մտաւորականը խեղդել կարող են:

զուարճութեան յոյզն այնքան կարող է զբաղեցնել հոգուն, որ արտաբուստ եկած տպաւորութիւնները մտքի համար պատահական վաղանցուկ կամ բոլորովին խաբէական կը դառնան. այստեղ երեւակայութեան գործունէութիւնը կը գերակշռէ իրողութիւններն իւրացնելու գործունէութեան վերայ. Ամենայն վարժապետ այս բոլոր դէպքերը չը պէտք մտնանայ, որովհետեւ անդադար պատահում են.

Այժմ փորձենք մեր գլխաւոր խնդրին վերաբերեալ մի քանի հարցեր լուսաբանել, որոնք մտաւոր կարողութեանց զարգացման յաջորդութիւններից կախում ունին:

Ե՞րբ պէտք է սկսել առհասարակ ուսումը և մասնաւորապէս ուսման այս կամ այն մասը. Ենք անտեղի կերպով շտապում ենք գործելով, եթէ մեր նպատակին հարկաւորացած կարողութիւնները դեռ չեն զարգացել և հասունացել կամ եթէ այս արգելքն էլ չը լինի, մենք էլ շտապում ենք, եթէ մեր մատակարարած ուսումը մտաւոր ուժից աւելի սպառում է պահանջում, քան եթէ չը շտապելով ուսումը փոքր ինչ յետաձգէինք. Բայց ի հարկէ միւս կողմից մենք ուշացնում ենք մեր գործը, եթէ ուղիղ այն միջոցից օգուտ չենք քաղում, երբ որ կարեւոր տպաւորութիւններն ամուր հաստատուել կարող էին առանց վտանգի առողջութեան համար. Մանուկը պէտք է սովորի լեզուներ, զանազան ուսմունքներ, մեքենայական արուեստներ, բարոյական կանոններ. Ե՞րբ կարելի է մանուկին այնքան պատրաստ համարել այս բոլոր ստացումների համար, որպէս զի նա իւր ուժերից բարձր աշխատութիւններով չը ճնշուի. Այս բոլոր ստացումների համար սկզբնական հակումն ինքնաբերական է և ինքնին է արտայայտվում այնուհետեւ փոքր առ փոքր փորձեր պէտք է փորձուին, որ այդ հակումն իմաստուն ուղղութիւն առնէ. Ընդհանրապէս կարելի է ասել, թէ այն ստացումը, որ միայն ներքին գործունէութեամբ կարող է ձեռք բերուիլ, ժամանակով առաջ պէտք է սկսուի միւս տեսակ ստացումներից. ամենայն ուսում, որի մէջ մեքենայական գործունէութեան տարր կայ, վաղօրօք պէտք է սկսուի, ուր անանձին ուշք պէտք է դարձնել համապատասխան գործարանի զարգացման աստիճանի վերայ. Մինչև ուսումնարան գալը նախ ձայնն է սկսել վարժուել, ապա ձեռքի ճարպիկութիւնը, ապա աչքը, որ լաւ նկատել է տեսանելի շարժումները, մեծութիւնը, ձևը, և այլն, մի խօսքով պատրաստ է նախ լեզուն, ապա ներգործական ձգտում շրջապատող առարկաներն ու անձինքներին դիտելու, և վերջապէս բռնն ու առարկան իրար հետ կապակցելու. Որքան մանուկն աւելի քայլեր է արել այս երեք ուղղութիւններով, այնքան աւելի պատրաստ է կանոնաւոր ուսում ստանալու համար:

Նշանաւոր է նմանապէս այն հարցը, թէ յիշողութիւնն

ե՞րբ է աւելի զօրեղ, և թէ այն մտաւոր ստացումները, որոնք բացառապէս յիշողութեան վերայ են հաստատուած, ե՞րբ պէտք է տեղ ստանան միւս կարգի մտաւոր ստացումներից առաջ Այս հարցից է կախուած լեզուի ուսումը, որի ներհանն է այն ծանօթութեանց գումարը, որոնք շատ թէ քիչ վերացական, ընդհանրացուցած, ապացուցական, կապակցական կերպւորանք ունին, այսինքն գիտութիւնները, Տարակոյս չը կայ թէ ծխական դպրոցի, եթէ ոչ ամբողջ, գոնէ սկզբնական հասակում մտածողութեան դժուարին գործողութիւնը շատ աննշան արդիւնք կարող է տալ: Իսկ միտքը հէնց այդ ժամանակ ամենամեծ աճեցողութեան զօրութիւն ունի և հատ հատ տպաւորութիւններ հաւաքելու կարողութիւն, այնպէս որ երևի յիշողութիւնն այդ հասակում գերազանց ոյժ ունի լեզու ձեռք բերելու համար, բայց ոչ միայն անունները և առարկաների հետ նոցա կապակցութիւնը սովորելու, այլ և նախադասութեանց կապուած շարքերը, ամբողջ պատմութիւնները, երգերը, և պատրաստ գիտնական բանաձևերը (ֆորմուլաները): Կան այնպիսի պարզ իրողութիւններ և ծանօթութիւններ, որոնց մէջ ընդհանրացումը միայն այնքան է, որ աւելի գրաւիչ է անում նոցա ուսումը և յիշողութեան աշխատութիւնը հեշտացնում են, զոր օր, աշխարհագրական իրողութիւններն ու հեշտ պատմութիւններն աւելի յիշողութիւն են պահանջում, քան որևիցէ ուրիշ բարձր մտաւոր կարողութիւն, ուստի և այսպիսի ծանօթութեանց մտակարարելը վաղ պէտք է սկսուի, Իսկ աւելի դժուարագոյն ուսմունքները, ինչպէս որ են՝ քերեկանութիւն, ուսումնական թուաբանութիւն, ֆիզիքաւ և այլն, հարկաւ աւելի ուշ էլ պէտք է դաս տրուին, նախ այն պատճառով, որ դեռ կանխաւ միտքը պէտք է հարստանայ թանձրացեալ ծանօթութիւններով, որպէս զի ուսածը հաստատուն լինի, ապա և այն պատճառով, որ ամենայն խնամով գաղափարներ կապակցելու և իրարից անջատելու հմտութեան մարզութիւնը պակասումէ, այսինքն մի այնպիսի հմտութեան, որի համար հասակը դեռ հասել չէ և դեռ անզօր է: Յիշողութիւնն ամենայն բան կարող է տանել, սակայն այդ հասակում այդ գիտութիւններն էլ միայն յիշողութեամբ կը պահ պանտուին, և ոչ թէ մտքի մարզմամբ, — ուրեմն իբրև անգործագրելի բեռն եղած: Բայց արգեօք չե՞նք կարող մտքի այդ աճեցական զօրութիւնից օգուտ քաղելով մանուկին շատ լեզուներ սովորեցնել, ինչպէս որ սովորաբար մեծատուններն անում են: Ի հարկէ կարող ենք, բայց դժուար չէ հասկանալ և այն, թէ ո՞րքան փնասվում է մարդ յիշողութիւնը սաստկութեամբ աշխատեցնելով, Յիշողութեան մեծագոյն ուժից օգուտ քաղելու միջոցին, մի և նոյն ժամանակ փոքր ինչ միւս կողմն էլ պէտք է խնամք տանենք, որպէս զի առա-

ջացնենք մտածողութեան ոյժը, թէ՛ և զգուշութեամբ և առանց շտապելու: Մենք առաջ ասացինք, թէ որքան վտանգաւոր է եթէ բանականութեան աստիճանն անտեղի կերպով շտապեցնուի: Եւ այժմ պէտք է աւելցնենք, թէ բանականութեան ուշանալը ոչ պակաս վնասակար է: Սրովհետեւ՝ անկարելի է բոլոր ընդունակութիւնները զբաղեցնել միայն բառեր սերտելու: Ճնշող աշխատանքով մինչև անգամ կարելի է այս ընթացքով անունների ներքին իմաստի հասկանալու կարողութիւնը բոլորովին սպանել: որով մտածողութիւնը կրկնակի խափանուած կը մնայ:

Աւերջապէս մեծ նշանակութիւն ունի մտքի այս աճեցականութիւնը բարոյական տպաւորութիւնները խոր ազդելու համար: Պատուէրները, կանոնները, բանաւոր խրատները լաւ պահպանվում են յիշողութեան մէջ, մինչև անգամ աւելի դժուարամարտ կրօնական վարդապետութիւնները կարելի է խոր տպաւորել փոքր հասակում: Սակայն այս ամէնը վարքի և բարքի միայն արտաքին կողմն է: Աւելի խնամք պէտք է ունենալ հնազանդութեան յօժարութիւնը հաստատելու համար: համակրութեան ու բարքի հակումները զարգացնելու համար: հեռաւոր հետեանքներ գուշակելու կարողութիւնը հնարաւոր կացուցանելու համար: Քանի որ մանուկը թոյլ և զգայուն է, հնազանդութիւնը բաւական կարող է առաջանալ երկիւղի հրահանգութեամբ, եթէ ուրիշ մեղմ հնարները չեն ազդում: Աւելի դժուար է բարոյական միւս մասը, այսինքն, համակրութեան և հակումների զարգացումը: բայց որովհետեւ աճեցական աստիճանում միտքը նոր նոր հաճելի զուգորդութիւններ է հաստատում, և որովհետեւ համակրութիւնն ու հակումները նոյնպէս այբորինակ զուգորդութիւններից է կազմուած, ապա ուրեմն տարակոյտ չը կայ: թէ այդ հասակը շատ յաջող հասակ է նաև այն երկրորդ մասի համար: բայց և պէտք չէ մոռտանալ թէ որովհետեւ զուգորդութիւնները մտաւոր ուժի մեծ սպառումն են պահանջում: ուստի և դոցա յաջողակ յառաջադիմութիւնները մեծ մասամբ 2 կամ 3 տարուայ ընթացքում գրեթէ աննշմարելի են մնում: ապա ուրեմն համբերութեամբ պէտք է սպասել արդիւնքների երևալուն: Գալով հետեանքների գուշակութեան, այս մասում մանուկը մեծ զորձ կատարել չի կարող: Սորա համար մտածողական բարձր զարգացում է հարկաւոր: որը որ յայտնի կերպով աւելի ուրիշ հասակումն է երևում:

Մանուկը ապէս մտքի զարգացման աստիճանների հետ ծանօթանալուց յետոյ և բոտ այնմ մի քանի կարևոր հետեւութիւններ հանելուց յետոյ, այժմ մի հայեացք ձգենք այն ուսմունքների վերայ, որոնք կոչուած են այդ զարգացմանը նպաստելու: Ամենայն ուսումնական կարող է ունենալ: նա կամ հազորդու է և ի

րողութիւններ և ծանօթութիւններ, և այս կը լինի բուն ուսումնասիրումը. բայց եթէ դասը հանձարեղ կերպով է ականդում՝ նա միւս կողմից կը թուէ է այսինքն զարգացնում է աշակերտի մտաւոր դժբերը, կատարելագործում է ըմբռնման, յիշատակութեան, համեմատութեան, դատողութեան գործողութիւնները, որոնք՝ այն սահմանից դուրս՝ աւելի շատ ընդարձակ շրջաններում կարող են գործ դրուիլ քան որքան որ ուսուցումը շօշափել է: Իժուար չէ այնպիսի տեղեկութիւններ ականդել գիւղատնտեսութիւնից, պարտիզականութիւնից և կենդանաբուժութիւնից, որոնք ինքն ըստ ինքեան շատ օգտակար են, ինչպէս որ նոքա ժողովրդականացած գրքերում արգէն հաղորդում են, բայց դոքա կը լինին միայն տեղեկութիւններ, մտքի անշահական կոյտեր, և ոչ աւելի: Բացի այս նոյն տեղեկութիւնները կարելի է զարգացնող ուսումնասիրել, կարևոր կը թուութիւններով հանդերձ, որով ուսումը հարկաւ դաստիարակութեան կերպ կ'անէ: Այլ խնդիր է, եթէ երբեմն ըստ հանգամանաց աւելի կը թական մասը, և երբեմն իրողութեանց միայն աւանդելը տեղի պէտք է ունենայ. բայց անխտիր կերպով ամենայն ուսմունք արժանաւոր և պիտանի կը համարուի եթէ նորա հետ այնպիսի եղանակներ և կը թուութիւններ են միացած, որոնք այդ ուսմունքի սահմաններից դուրս ևս օգտակար կարող են դառնալ: Սորա վերայ է հիմնուած այն տարածուած դաղափարը մանկավարժութեան մէջ, թէ ուսումնարանի աւանդած ընդհանուր կը թուութիւնը բարձր պէտք է դասել քան լոկ տեղեկութիւնների մատակարարութիւնը: Թուաբանութիւնը զոր օր, չորս գործողութիւն է սովորեցնում, որ կարևոր ծանօթութիւն է — բայց նա ունի և կը թող գործութիւն: Արիչ ոչ մէկ ուսմունք այնպէս աշակերտին ուսուցանել չի կարող թէ ճշմարտութիւն պէտք է համարուի միայն այն, ինչ որ լինի անպարտաւարացուած է. բայց մի թէ կարելի է մի քայլ առաջ գնալ գիտութեանց մէջ — աւանց այս հզօր սկզբունքի: Բնագիտութիւնն այն գիտութեանց տիպն է, որ հակումն է զարգացնում ճշմարտութեան գիմելու իրական գիտողութիւններով և ոչ թէ ցնորական երեւկայութիւններով. բացի այս դորա մէջ անդադար երևան եկող նոր նոր գիւտերը միշտ խրատում են զգուշացնում են շտապովի եզրակացութիւններ անելու վտանգներից. բնական պատմութիւնը հանձարեղ դասակարգութիւններ կազմելու վարժութիւններ է տալիս, որ անհասարակ կանոնաւոր մտածողութեան համար անհրաժեշտ կարևոր մի հնար և հմտութիւն է: Ծխական դպրոցի մէջ այնպիսի բարձր նպատակներին հասնելի հարկէ կարելի չէ. այնտեղ կատարեալ գիտութիւններ ուսուցանելու ոչ ժամանակի տեղողութիւնը և ոչ հասակը պէտք է ներքէ: Բայց ուսուցիչն ուսմունքների այս բարձր հրահանգիչ հանգամանքն-

ընն աչքի առաջ պէտք է ունենայ, որ ըստ այնմ նոցա տարերքն առանց վրիպելու աւանդէ: Ծխական գպրոցն աւելի անել չի կարող, բայց այս էլ քիչ բան չէ, եթէ բարեխղճութեամբ է անում: Որովհետեւ եթէ մանուկն այնուհետեւ միջնակարգ ուսումնարան մտնի, նա կարողութիւն կ'ունենայ այն տեղ շարունակել և իւր տարերքից պարզ շէնք կազմել իսկ եթէ ուղղակի կեանքը մտնի, այստեղ էլ կը շարունակէ նոյնը, թէև ոչ այնպէս կանոնաւոր կերպով, բայց և այնպէս կը շարունակէ, որովհետեւ անք չը պէտք է կարծենք, իբր թէ միայն ուսումնարանն է զարգացնում մարդուն, այլ ընդհակառակն հասակը միշտ այդ օժիտն իւր հետ բերում է թէ՛ ուսումնարաններում և թէ՛ կեանքում, ուստի և մանուկը երկու դէպքի համար էլ հաւասարապէս պատրաստ պէտք է լինի: Այսպէս թէ այնպէս—ծխական գպրոցն երկու դէպքումն էլ միայն մի տեսակ նախապատրաստութիւն կարող է տալ և պէտք է տայ, այն է տարերք աւանդէ, և չը պէտք է ցնորէ, իբր թէ ըստ հարկի կարող է նաև միջնակարգ ուսումնարանի դերը խաղալ, ինչպէս որ մի քանի նախագիծներ այլախիսի անիրագործելի ձգտմամբ են կազմվում և իւրեանց կուտակուած տեղեկութիւններով աշակերտին միայն մտաւոր թմրութիւն են պատրաստում: Բայց շարունակենք զաստանդիքների արժէքների գնահատութիւնը: Բոլոր ուսումնարաններում գիտութիւններն ու լեզուներն առաջին տեղն են բռնում—մտաւոր զարգացման նպաստելու համար: Ահգուրի մասին վերջն առանձին կը խօսենք: Այժմ աւելացնենք, թէ մի քանի մեքենայական հմտութիւնները և զգայարանքների նուրբ վարժութիւնը պատահաբար կամ նաև կանոնաւոր կերպով ուսումնարանի մէջ աւանդվում է, արդի՛նչ իրաւունքով: Նախ յայտնի է, որ արդէն մանուկն իւր ինքնագիմի գործունեութեամբ վարժեցնում է իւր ձեռքերը և ուրիշ գործարանները, այնուհետև սկսում է մեծերին կապկութեամբ նմանել, և վերջապէս սկսում է նոյնը կանոնաւոր սովորել (արհեստ): Երկրորդ՝ ամենայն ուսումնարան մեքենայական վարժութեանց մի մասը միշտ աւանդում է, որովհետև ուրիշ բարձր նպատակներին անհրաժեշտ կարևոր է համարում այն է՝ զրի նկարչութեան, խօսելու, երգեցողութեան վարժութիւնները: Բայց ի հարկէ այսքանով ումանք չեն բաւականանում: Յայտնի է որ ճարտար ձեռքեր ունենալը միշտ օգտուէտ ձիրք է համարուել: Եթէ մանուկներին վաղօրօք մանկական պարտեզներում են սովորեցնում, գլխաւոր նպատակներից մէկն էլ այն է, որ նոցա կանխաւ հմտութիւն տրուի իւրեանց ձեռքերից օգուտ քաղելու: Բայց և այնպէս, դպրոցական ուսուցիչն աւելի ժամանակ չը պէտք է սպառէ այս վարժութեանց համար, քան ուրիշ նպատակներից պահանջած չափով: Թէև մանուկն միշտ կարելի է հետա-

բերել որ և իցէ մեքենայական զբաղմունքով, ուր նա անշուշտ հարկաւոր յաջողութիւն էլ կը ստանայ, բայց մեծ սխալը հէնց այն կը լինի, եթէ թողնենք, որ մտքի ստորագոյն զօրութիւններն իշխեն մանցուկի վերայ—ի վնաս բարձր զօրութիւններին: Նոյնը պէտք է ասել առհասարակ զգայարանքների նուրբ վարժութեանց համար: Այստեղ էլ պէտք է զանազանել ընդհանուր հրահանգութիւնը, որ ամենին կարևոր ու օգտակար է, և մասնաւոր հրահանգութիւնը, որ միայն մասնաւոր արհեստներումն է հարկաւոր լինում: Անխորհուրդ եռանդով կարելի է այս տեղ էլ այնքան զբաղեցնել միտքը, որ կը խանգարուի հաւասարակչութիւնը և կը սպանէ ուրիշ աւելի կարևոր զբաղմունքների համար հակումը:

Վերջապէս կրօնական, բարոյական, գեղասիրական կրթութեանց մասին բաւական պէտք է համարուի այն, ինչ որ վերը մի անգամ արդէն ակնարկուեցաւ: Գուցէ այսքանը հարկաւոր է աւելացնել, թէ ոչ միայն խրատներն ու քարոզները, այլ ուսմունքների պարզ հասկանալի դասաւորութիւնը և աշակերտների աշխատանքի վերայ բանական հսկողութիւնը կրթում են բարի հակումներ, խիղճ, համեստութիւն, քրիստոնէական սէր, պարտաճանաչութիւն, վայելչասիրութիւն, մաքրութիւն և ուրիշ առաքինութիւններ, որոնք թէև կարծես բոլորովին այլ դասերի են վերաբերում, բայց և այնպէս ոչ մէկ ուսմունքի դասերի մէջ դոցա սերմերը չը պէտք է պակասեն: Բայց թէ ծխական դպրոցի վերջի տարին (որ մենք չորրորդն ենք համարում) մի փոքր քրիստոնէական չը պէտք է պակասի, և որը որ իբրև պիտանի տեղեկութիւն կարող է յիշողութեան աւանդուել, մենք ոչ միայն աւելորդ, այլ և կարևոր կը համարենք, որովհետև միայն վերջին տարին յարմար ենք դատում ուսումնամոհոփել նաև այնպիսի կարևոր տեղեկութիւններով, որ առաջ տայ հնար չի լինում:—Գալով լեզուին, մենք արդէն տեսնք, թէ քանի որ լեզուի գործարանները պէտք է շարժուին, նա ճիշտ մեքենայական վարժութիւն է, բայց որովհետև նա իմաստ պէտք է յայտնէ, նա ուրեմն մտաւոր զարգացման կարևոր նեցուկ ևս է, ոչ պակաս: քան գիտութեանց տարերքների ծանօթութիւնը, մինչև անգամ այնքան աւրնչականութիւն ունեցող նորահետ, որ եթէ նոցանից որևիցէ մէկը պակասի, միւսն էլ գոյութիւն ունենալ չի կարող: Լեզուի սկզբնական ուսման դժուարութիւնները, որոնք անդադար զգալի են լինում, հէնց այս տեղից է ծագում, որ նորա աւանդածը կը կնակի տարր ունի, այսինքն նորա մէջ գաղափարը միացած է բառի հետ, իմաստը խօսքի հետ: Լեզուն ոչինչ բան է, եթէ գաղափար չէ արտայայտում: Այս է պատճառը, որ մանուկի միտքն երկու կողմ պէտք է բաժանուի, փոխանակ մի

կողմը կենդրոնանալու և միւսն առ ժամանակ մտանալու: Անհերքելի է այն իրողութիւնը, թէ մարդու միտքը երբ էլ լինի միշտ կարող է միայն մի բանով զբաղուիլ թէև երբ ուզենայ կարող է ամենայն արագութեամբ ուշքն ուրիշ կողմ դարձնել և ուրեմն հերթով շատ առարկաների վերայ կենդրոնացնել: Բայց ուսման ժամանակ, ուր առարկաները խնամով պէտք է իւրանան, մարտուին և ոչ թէ կուտակուին:— անհրաժեշտ կարևոր է, որ կենդրոնացումը միշտ միայն մէկ բանի վերայ հաստատուի, այն ևս յընթացս որոշ ժամանակամիջոցի, իսկ եթէ առարկան կրկնակի կողմ ունի, ուշագրութիւնը նախ մի կողմը դառնայ, և այս ըմբռնելուց յետոյ՝ միայն՝ ապա և միւս կողմը: Այստեղից երևում է մայրենի և օտար լեզուի ուսման կարևորութեան չափը: Թէ մեկը և թէ միւսը յիշողութեամբ է ձեռք բերվում, բայց որքան տարբեր շախիզներով: Նախ և առաջ երկուքն էլ սարսափելի կերպով սպառում են մտքի աճեցական կարողութիւնը և երկուսի համար էլ հարկաւոր են մտապահելու բոլոր յաջող հանգամանքները, որոնց մասին մենք այս տեղ լուրթեամբ կ'անցնենք, բայց մեր խնդրին վերաբերեալ ամենաէական մասը պէտք է որ յիշենք: Շատ բազմաթիւ են այն զուգորդութիւնները, որ միտքը պէտք է կազմէ լեզու ուսանելու ժամանակ, ամենայն լեզու հազարաւոր բառեր ունի, շատ բառերն էլ մի քանի նշանակութիւն ունին, Բացի այս՝ որոշ նախադասութիւնները, գաղափարները կամ բառերի խմբակցութիւններն այնքան բազմաթիւ եղանակով են կազմվում, որ յիշողութիւնից անշուշտ նոր նոր ջանքեր կը պահանջեն: Օտար լեզուի ուսման ժամանակ յիշողութիւնը զբաղուած է նորանով, որ մի բառ միւս բառի հետ է կապակցում (XԱՅՕՏ-հայ), իսկ մայրենի լեզուի ուսումը մեծ մասամբ առաջանում է բառերի զուգորդութեամբ ուղղակի առարկաների կամ գաղափարների հետ: Ուրեմն այս երկու դէպքի մտաւոր գործողութեան օրէնքները մի և նոյն չեն: Երբ որ մի բառ միւսի հետ է կապվում, այստեղ մենք ունինք զուտ խօսքի յիշողութեան օրինակ, որ միայն ականջով կամ միայն աչքով է գործվում (ձայն—գիր): Լեզու ուսանելու այս եղանակը, այսինքն միայն յիշողութեամբ առաջանալը, ամենանուազ արդիւնք է բերում: Հայերէն բառը համապատասխան ոսերէն, Փրանսերէն բառի հետ զուգորդելով, մենք մեր զուգորդելու ոյժերի ամենագորեղը չենք գործ զնում, այս դէպքում մեր մտքում ամենահաստատ կապեր չենք հաստատում, մանաւանդ որ այս մտաւոր աշխատութեան մէջ հետաքրքրութեան օժանդակութիւնից էլ օգուտ չենք քաղում: Արպէս զի այս խօսքերը հասկանալի լինին, դառնանք հակառակին: Լեզուն մեծ արագութեամբ է իւրանում, եթէ բառն ուղղակի և անմիջապէս զուգորդվում է իւր բովանդա-

կուժեան կամ իմաստի հետ: Մանուկը մայրենի լեզուն այսպէս է սովորում: Նա տեսնում է մի առարկայ— ծաղիկ, շուն, — և մինչդեռ իւր ուշադրութիւնը տեսածով գրաւուած է, լսում է անունը: որ և մտքի մէջ առնելով՝ արագութեամբ զուգորդում է առարկայի հետ: Քանի առարկան աւելի ազդուութեամբ է գրաւում զգայարանքները, այնքան աւելի շուտ է տպւորվում բառը. թէ կայծակի, յանկարծական աղաղակի, արագ շարժման նոյն իսկ միջոցին համապատասխան բառը արտասանուի: Հազիւ թէ այնուհետեւ էլ հարկաւոր դառնայ նոյնը կրկնելու, — այնքան խոր կը տպւորուի: Նա մտքի մէջ, Մանուկը ինքը կ'ուզենար մի զարմացական ձայն հանել: բայց բառը լսելով, արդէն բառ է արտասանում իւր զարմացական փոխարէն: Հասկանալի է ուրեմն, թէ ինչ նշանակութիւն ունի իմաստի հասկանալը լեզուն յաջողութեամբ սովորելու համար, որիչ խօսքով այս նշանակում է, թէ առարկայի ծանօթութիւնը միշտ պէտք է կանխէ բառի և նախադասութեան լսելուն: Օտար լեզուի վաղ և հասունանալը միայն նորանով անյարմար չէ, որ լոկ բառական յիշողութեամբ է ձեռք բերվում: այլ և նորանով որ անդադար բառեր պէտք է սովորել որոնց գաղափարների ծանօթութիւնը դեռ չէ ձեռք բերուած: Այլ է մայրենի լեզունով սկսել ուսումը ուսումնարանի մէջ, Մանուկն արդէն այդպիսի ծանօթութիւններ հետը բերում է, նաև համապատասխան բառեր, կը մնայ, որ իւր լեզուն, (իսկապէս բառերի կապակցութիւնը) աւելի հարստացնէ, ազնուացնէ, բարդ մտաւոր շղթաների համար բանաւոր արտայայտութիւններ գտնէ իւր գիտեցած տարրական մասերով: Բայց մի թէ մանուկը չը գիտէ, թէ ի՞նչ է «տրեխ», որ հասկանայ և ΠΑΤΗ բառը, կամ թէ ի՞նչ է «տուն», որ ΠΟՅԱ բառով թարգմանենք նորան: Գիտէ, բայց էլի միտքը շփոթվում է, որովհետև ուսաց տրեխը մեր կաշուէ տրեխը չէ, և մեր գիւղացու տունը գերանների միապաղաղ շէնքը չէ, իսկ այսպիսի տարրերութիւնները նախադասութեանց վերայ առանձին գոյն են դրոշմուած, որով նախադասութիւններից էլ կազմուած ամբողջ պատմութիւնը բոլորովին անծանօթ աշխարհք է նկարագրում: Երկու լեզուի բառերի նշանակութեանց այսքան տարբերութիւնները ոմանք անօչին են սեպում: թէև մտքի կանոնաւոր ընթացքն ուղղակի կախում ունի այսպիսի նրբութիւններից, որոնք աննշան են թուում: Բացի այս, ասացինք, թէ օտար լեզուի ուսումը խօսքի յիշողութեան վերայ հիմնուած կը լինի. այս խօսքերի իմաստն այն է, թէ մանուկի եօթը տարուայ մտաւոր պաշարն այնուհետև անգործ կը կանգնի, և ինչ որ նա աղաա գործունէութեամբ տանն էր ուսել, այն նորից պէտք է սկսէ սովորել, այն ևս արտաքին ազդեցութեամբ, այսինքն ինչ որ կեանքի մէջ զօրեղ տպւորութիւններ

ըննէին գործում, այժմ նոցա փոխարէն՝ վարժապետի դանդաղ քաշ-քրտտելը պէտք է անէ: Մի խօսքով այս այն պայմաններն են, որով ուսումնարանը շատ անյաջող հանգամանքների մէջ պէտք է գործէ, և ուրեմն բոլորովին փնասակար հաստատութիւն պէտք է դառնայ մանուկի մտաւոր յառաջադիմութեան համար: Եթէ օտար լեզուն այն ժամանակ է ուսումնասիրվում, երբ որ նորա հետ առարկաները դժուարութեամբ կամ բնաւ չեն կապվում, այն ժամանակ ամենայնայնոյ յիշողութիւնն էլ կը ճնշուի այդ լեզուի ծանրութեան տակ: Գեւ շատ առարկաների ծանօթութիւններ պէտք է ձեռք բերուի (և գիտէք թէ որքան աւելի հեշտ է այս անել մայրենի լեզուով), որ այնուհետեւ օտար լեզուն էլ շատ կամ քիչ յաջողութեամբ նորան հետեւի: Ծխական ուսումնարաններում սերէնը քաղաքական հարց չէ, այլ մանկավարժական հարց է, և մենք կարճ կը վերջացնենք, թէ նորա ուսումը Յ-դ տարուց առաջ սկսելը ոչինչ օգուտ, բայց ահագին անուղղելի փնաս կ'առաջացնէ և սերէնի օգուտն էլ պահանջում է, որ փոքր ինչ ուշ սկսուի, որովհետեւ միտքը կանոնաւոր զարգացում ստանալուց յետոյ՝ աւելի ազատ կը լինի նոր գործ սկսելու, նոր լեզու սովորելու: Այսպէս մենք տեսնում ենք, որ մայրենի լեզուն այն բնական հնարն է, որով ուսումնարանի կըրթական գործը անտեսվում է, որ, ինչպէս տեսանք, բաւական ընդարձակ գործ է ծխական դպրոցի կարճատեւ 4 տարուայ ընթացքի համար:

Արժական գործի երկրորդ կատարելութիւնն այն կը լինի, որ կենդրոնացուցական ոճ գործածուի դասատուութեան ժամանակ: Այս ոճը համառօտ կերպով նկարագրելու համար, մենք պէտք է կրկնենք, ինչ որ առաջները բաւական ակնարկուեցաւ: Տպաւորութիւն պահելն ամէնից մեծ ջանք է պահանջում ուղեղից, մեր նեարդային գործունէութիւնից, քան դատողութիւնը, վերացումը և այլն. ուրիշ ոչ մէկ մտաւոր գործողութիւն ուղեղի այնքան ոյժ չի պահանջում, որքան տպաւորութեանց հաստատութիւնը յիշողութեան մէջ, բայց այնպէս, որ հարկաւոր եղած ժամանակ նոքա առանց դժուարութեան կատարելապէս վերատեղծուին: Այս է պատճառը, որ միշտ ձեռնտու է դասատուութեան առարկան մի անդամից ամենայն մանրամասնութիւններով չաւանդել, այլ մի քանի անգամ դառնալ նորան, իւրաքանչիւր անգամ նոր նոր լրացումներով: Երբ որ մի զուգաւորութիւն տպաւորեցինք մտքում, դժուար գործը արդէն յաղթել ենք. մնում է որ նորան հաստատութիւն և դիւրաշարժութիւն տանք պէսպէս վարժութիւններով և կրկնութիւններով: Այնուհետեւ մտքի ներքին ճարտարագործութիւնը բաւական պատրաստուած կը լինի, որ ինքը շարու-

նակուի, իսկ այն ժամանակ գործն աւելի քիչ ջանքեր անելու էլ կարօտութիւն կ'ունենայ. ահա այսպիսի կրկնութեան ժամանակ պէտք է աւանդել և նոր ծանօթութիւնները, կենդրոնացման եղանակն այս սկզբունքի վերայ է հիմնուած, որ թէ տարուայ ընթացքում պէտք է կատարուի և թէ յաջորդող տարիների ընթացքում. իսկ կենդրոնացման նիւթը շատ տեսակ կարելի է ընտրել, թէև այնպիսի ընտրութիւն կայ, որի դէմ վիճելը միայն բժախնդրութիւն կը լինի, և այնպիսի ընտրութիւն էլ կայ, որ սկզբունքի խնդիր է, այսինքն արդիւնաւորութեան և ապարդիւն լինելու խնդիր է. Մենք էլ շնք ուզում այս մասին երկարաբանել. ընթերցողին արդէն յայտնի է, որ մենք այդ կենդրոնացումը փորձել ենք մեր ընթերցարանների միջնորդութեամբ, ուր մանուկին ծանօթացնում ենք մարդկային ընկերական վիճակների հետ, հետզհետէ ընդարձակելով նիւթի բարձրութիւնը մանկական հասողութեանց վիճակի համեմատ, բայց միշտ ազգային բանաստեղծական մատենագրութիւնից առնելով նիւթը,—պ. Բահաթրեանը սկսում է նոյնը գերմանական հքեթաթներով, միւսները ոսերէն յորուածները թարգմանաբար աւանդելով, Այսբան տարբեր ուղղութեանց մէջ աւելորդ չէ յիշեցնել, թէ «ազգային կրթութիւնը» մեղանում լեզուի զուարճութեան խաղ է դառել, մեր գործը մեր խօսքին չի համապատասխանում. այն ինչ ազգային կրթութիւնն էլ միայն մի ուժնասիրութիւն չէ, այլ իրօք մի կենսական խնդիր, ուրեմն նոյնպէս մանկավարժական խնդիր է, ինչպէս և լեզուն. Մի՞թէ ուրեմն մայրենի լեզուով արդէն ուսումնարանն ազգային չի դառնայ, կ'ստեն մեզ. ո՛չ և ո՛չ բնաւ. Ահա գերմանական հքեթաթ հայերէն բառերով, սա մի՞թէ ազգային կրթութիւն և ոչ գերմանական է, ահա լապտին և իզբան մի՞թէ նոյն տրեխն ու օճախը չեն. անշուշտ ոչ. Կամ եթէ Հայոց պատմութեան փշուր կտորներ աւանդենք. սա էլ ազգային կրթութիւն չէ. Ա՛յ ազգային կրթութիւնը—ազգային հոգին է, որ միայն հատ ու կտոր տեղեկութիւններով, լոկ արտաքին ազգային բառերով, կամ միայն լոկ անորոշ իմաստներով չի աւանդուի, այլ նա մտքի և սրտի աւելի խոր զուգորդուած արմատներից է ծագում: Մանուկը զարգանալով հետզհետէ գաղափարներ է ամբարում իւր մտքի մէջ, որոնց մեխելու համար իւր մտքում նորան լեզու է հարկաւոր. ամէն բառի հետ կապվում է որոշ իմաստ, ամէն նախագասութիւն որոշ աշխարհ է զարթեցնում մտքի մէջ: Մանուկն այդ աշխարհայեացքն իւր հետ է բերում և զուրջ ուզում էք գերմաներէնի և ոսերէնի աշխարհայեացքով նորա մտքի և սրտի թելերը զարկել տալ. Ազգային բանաստեղծա-

կան մատենագրութիւնը Հէնց նորանով է անփոխարինելի, որ նա ուղղակի մանուկի մտքի այն թելերն է զարկում, որ նորան ընտանի, հասկանալի, ախորժ, ներգաշնակ են, և որոնք վաղուց արդէն նորա մէջ լարուած են: Երբ որ մանուկը լսում է, թէ հերոսը թշնամուն «եօթը գազ գետինը իջեցրեց», դուք չը կարծէք, թէ նորա մտքում միայն այս չորս բառի բառացի իմաստն է շարժվում (եօթ գազ-գետին-իջեցնել), այլ նորա երեւակայութեան առաջ ստեղծվում է մի հիանալի պատկեր հազար ու մէկ գոյներով, և միմիայն այդ չորս բառերի դիւթական զորութեամբ: Ամենայն ազգ իւր մտաւոր պաշարի համեմատ իւր լեզու է ստեղծում, և լեզուի հոգին, որ մի գաղտնիք է, միայն բառերում չի ամփոփվում: Ազգային կրթութիւնը միայն հայոց բառերով չի մատակարարուի, այլ ազգային հանճարով, որ ազգային մատենագրութեան մէջ է ամփոփվում: Ահա ուրեմն լաւ կամ վատ ընտրութիւն ազգային ստեղծողութեանց մէջ կարելի է որոնել բայց ոչ սորանից դուրս: Մենք փորձի համար առաջարկեցինք «Ազգային ընտանեկան աշխարհք», «Ազգային դիւցազնական աշխարհք», «Նահապետական աշխարհք և Հայրենիք», շուտով ի լոյս կ'ընծայենք «Ազգային պատմական աշխարհք»: ահա եթէ վատ ընտրութիւն ենք արել, պէտք է աւելի լաւագոյնն ընտրել, բայց դարձեալ ազգայինից, և էլ ոչ օտարից: մի բայլ առաջ արդէն արել ենք, էլ նորից յետ չը գնանք:—հերիք, որքան մուրացինք, և ապերախտ չը գտնուինք մեր բուն ազգայինին:

* * *

Մեր յօդուածը շատ է երկարում, ամփոփենք սկզբունքները: Ծխական դպրոցի ուսումը չը պէտք է տևէ 4 տարուց պակաս: Բայց եթէ մի գիւղ այնքան հարուստ չէ, որ այսպէս ընդարձակ ուսում աւանդէ, թող մի և նոյն ծրագրի մի մասն աւանդէ և ոչ թէ մէկ տարեկան, երկու տարեկան ուսման ընթացքով նոր նոր ծրագիրներ կազմէ:

Ուսումը կրթական և դաստիարակական լինի:

Աչքի առջև ունենալ ուղեղի աճեցական աստիճանը. յիշողութիւնը պէտք է զարգանայ, և ոչ մտքի բարձր կարողութիւնները, բայց այնպէս որ ոչ մէկը ծանրաբեռնուի և ոչ միւսները խեղդուած մնան:

Մայրենի լեզուն մտքի զարգացման տնտեսութեան խնդիր նկատել:

Ռսերէնը հարկաւոր գիտելիք սեպել, բայց նորա ուսումը 3-դ տարուց առաջ չ'սկսել:

Բնագիտութիւնն ու բնապատումը կամ նկատողական ուսումը

ոչ թէ կարգացնելով ուսուցանել, այլ կանոնաւոր դասերով և դիտողութեանց չափով:

Թուաբանութիւնը մտքի հրահանգիչ ուսմունք համարել չը բարդել գործողութեանց թիւը, որ մանուկի մտքին աւելի պարզ է ներկայանում:

Վարժապետի գործունէութիւնը մանրամասնութիւններով և մեքենայօրէն չը ծրագրել, այլ այնքան անատութիւն թողնել նորան, որ նա կարողանայ հոգով և հանձարով գործել:

Ի վախճան ամենայնի ուսումն ազգային լինի և մանուկի կեանքին ընտանի, ոչ բաւով, այլ հոգով:

Միւս խնդիրներն էլ չենք յիշում, որովհետեւ վիճելին միայն սորա են:

Ս. ՄԱՆԳԻՆԵԱՆ.

ԿՐՕՆԻ ՈՒՍՈՒՅՉՈՒԹԻՒՆ

Չընայելով որ կրօնի դասատուութիւնն ամէն տեղ և անխափան լինում է, այնուամենայնիւ մեր դպրոցներում կըրթուող սերունդի մէջ կրօնական դիտութիւնը շատ պակաս է և անտարբերութիւնը հետզհետէ կարծես թաղաւորում է: Ի՞նչ է սորա պատճառը: Եթէ կեանքի միւս հանգամանքները բաց առնենք և միմիայն դպրոցն ի նկատի ունենանք, մեզ այնպէս է երևում, թէ այդ երևոյթին մեծապէս նպաստել են նոյն իսկ կրօնի ուսուցիչները: Շատ վաղուց է, որ մենք առաջնորդվում ենք այն գաղափարով թէ կրօնի ուսուցիչն անպատճառ պէտք է եկեղեցական անձն լինի. ներկայումս անգամ շատ շատերը՝ մինչև անգամ դպրոցների ղեկն իրանց ձեռքն ունեցող բարձրաստիճան անձինք՝ տոգորուած են այդ գաղափարով և չեն ուզում լսել դորա հակառակը: Այդ սահմանափակ գաղափարի շնորհով կրօնի դասաւանդութիւնը բացառապէս եկեղացականների ձեռին է. սորա մեծ մասամբ չնչին ուսումն առած տգէտ անձինք են, զուրկ ամենայն մի դպրոցական կանոնաւոր կրթութիւնից, և չունենալով

մանկավարժական հայեացք կրօնի վերայ՝ այլ սողորուած գոլով դպիրների ձևապաշտութեամբ, ըմբռնել ու պաշտում են միմեայն կրօնի արտաքինը և ծխականը: (Բացառութիւնների մասին՝ խօսք չունինք:)

Ո՞ւր է հասել արգեօք կրօնի դասաւանդութիւնն այդ անպատրաստ — դաստիարակների շնորհով. — մի ամենաթշուառ վիճակի. — և ահա ինչպէս. նոքա փոխանակ կենդանի բարբառով՝ աւանդելու՝ մեծ մասամբ ուսուցել են գրաբառ. աշակերտն այդ բարբառը չըհասկանալով՝ սովորել է անգիր անել իւր դասը և թութակի պէս պատասխանել. նոքա փոխանակ դիւրընտել եղանակներ որոնելու, արմատացուցել են դասաւանդութեան միջնադարեան եղանակը, այն է՝ հարց ու պատասխանով դասեր պատրաստել. աշակերտն այդ եղանակին ընտելանալով՝ դիւրեաւ մոռացել է և ազատ մտածելն ու ըմբռնելը: Նոքա փոխանակ տրամաբանական առողջ դատողութեան հիմունքների վերայ հաստատելու իրանց դասախօսութիւնները՝ զարմանալի ջանասիրութեամբ դիզել են աշակերտի լիշողութեան վերայ անթիւ վկայութիւններ ու ապացոյցներ Ս. զբքից՝ անհասկանալի լեզուով և շատ անբնական դասաւարտութեամբ. աշակերտն իւր լիշողութեան, այլ ոչ հասկացողութեանն. ապաստան եղած, անգիր է արել այդ բազմաթիւ անկապ նախադասութիւնները և թութակի նման ասել: Թող զկանայս և զմանկունս...

Սյսպիսի դասաւանդութեան շնորհով կրօնի դասերը մեր դպրոցների մէջ թմրութեան և տաղտկութեան ժամեր են եղած. ոչ սք մեզանից կարող չէ առանց անախորժ լուգմունքի մտաբերել այն ժամերը, որ պէտք է իրօք մեր դաստիարակութեան շրջանում ամենաքաղցր վայրկեանները լինէին. և որ աշակերտը սիրով կապուած է այն ժամերի հետ, երբոր կրօնի դասեր էր լրսում մեր դպրոցներում. ո՞վ այդ ժամերին չէ քնել. ո՞վ այդ ժամերին լրագիր կամ օտար գիրք չէ կարդացել. ո՞վ այդ ժամերին արտագրութիւններով կամ այլ օտարոտի գործերով չէ պարապել. միմիայն նա, որին ուսուցիչը կամեցել է դաս հարցնել:

Խօսք չըկայ, որ այսպիսի պարագաների մէջ աշակերտի

աչքում կրօնն աննշան և մինչև անգամ տաղտղակալի բան է երևում, կրօնի դաս պատրաստելը միմիայն մի ակամայ բեռը, իսկ կրօնի ուսուցիչը զուրկ ամենայն համակրութիւնից և թուանշանի զօրով միայն՝ իւր դիրքը պահպանող:

Ուսուցիչներն թերութեանը վերագրելով կրօնագիտութեան աղքատութիւնը մեր մէջ, մեզ հարկաւոր է հետախուզել թէ ի՞նչու ուսուցիչներն այսպէս են. մի՞թէ եկեղեցականի տարագից անբաժան են այն թերութիւնները, որ նոքա ունին ուսուցչութեան մէջ. մեղաւոր են եկեղեցականները, որ իրանց վերայ պարտք են դնում կրօն ուսուցանելու (ի հարկէ վերոյիշեալ գաղափարով առաջնորդուած) ի՞նչ աղբիւրներից են առել նոքա իրանց գիտութիւնը, ո՞վ է հոգացել նոցա ուսման և դաստիարակութեան վերայ, ո՞ր են այն վարդապետարանները, որոնց աշակերտած են նոքա և որոնց ճշմարտութիւնը կամ մոլորութիւնն է, որ իբր առաջնորդում է նոցա: Ահա հարցեր, որոնք եթէ լուծելու լինինք, մասամբ կը թեթևանայ կրօնուսուցչների վերայ բարդուած դատապարտութեան բեռը և կը ծանրանայ նոյնը մեր վերայ: մեր անտարբերութիւնը չէ՞ արդեօք բոլոր վերոյգրեալ թշուառութիւնների պատճառը:

Եթէ մենք կրօնի գիտութեանն այն բարձր դաստիարակական նշանակութիւնն ենք տալիս, որին նա հասել է լուսաւորեալ ազգերի մէջ և որին նա արժանի է և եթէ մենք մեր եկեղեցու անարատութեան և ապահովութեան վերայ սրտով անկեղծութեամբ հոգս ենք անում, ուրեմն պէտք է յանձնենք կրօնի դասատուութիւնը նորան, որ լաւ գիտէ և լաւ է ուսուցանում, լինի այն եկեղեցական թէ աշխարհական անձրն, այլ ոչ բացառապէս նորան, որ ունի այս ինչ կամ այն ինչ տարազը: Եթէ մենք հետևում ենք ուրիշ ազգերի օրինակին և կամենում ենք միմիայն եկեղեցականի տարագին ընծայել այդ արտօնութիւնը, մենք պարտաւոր ենք հոգալ՝ զոնէ բացառական միջոցներով փոխելու եկեղեցական դասի կրթութեան եղանակը և ժամանակակից պահանջների կէտին բարձրացնելու ի՞նչ հնարքով և կարելի դատուի.

Կար ժամանակի եւ այդ ժամանակը շատ հեռու չէ մեզանից, երբ Հայաստանի ու Հայոց վերայ խօսելիս՝ բաւականանում էինք յոկ մի քանի թեթեւ իրողութիւններ, կիսատ թերատ տեղեկութիւններ առաջ բերելով, որոնց ազբատութիւնը պարտկելու համար՝ զանազան արտաքին միջոցների էինք դիմում եւ գեղեցիկ խօսքերով ընթերցողի ականջը գգուելով թոյլ չէինք տալիս որ մտքը որոնէ մի բան գտնել բովանդակութեան մէջ: Փորձի համար բացէ՛ք ու թերթեցէ՛ք տասնհինգ քսան տարի առաջ հայ լեզուով հրատարակուած գրքերը եւ մանաւանդ պարբերական թերթերը՝ մերկայրէք նոցա մէջ պարունակուած յօդուածներն իրանց հռետորական զարգարանքներից, մի կողմ գրէք նոյնպէս այլ եւ այլ վերացական դատողութիւնները՝ որոնց երեք քառորդը խնդիրն չեն վերաբերում եւ ի՞նչ կը մնայ այդ գրուածների մէջ. — մի քանի ընդհանուր ճշմարտութիւնների, հաղար անգամ ծամած ու ծամմամծ խօսքեր, այնպէս որ առաջին բառերից արդէն կարելի է գուշակել թէ ինչ պիտի ասուի վերջին տողերի մէջ: Եւ այլուպէս չէր էլ կարող լինել, քանի որ առաջարկուած խնդիրն օրինաւոր կերպով ուսումնասիրելու սովորութիւն չըկար եւ խօսքերն իրողութիւններից ու փաստերից մեծ արժէք ունէին: Առէ՛ք մի շատ սովորական խնդիր, օրինակի համար կրթութեան խնդիրը, որի վերայ հրատարակուած գրութիւններն ամբողջ հատորներ կարող են կազմել. տեսէ՛ք թէ որպիսի ծանրութեամբ խօսվում ու գրվում էր «ազգային լուսաւորութեան», Հայի «հսկայաքայլ յառաջագիմութեան» վերայ մինչդեռ ոչինչ գրական տեղեկութիւններ չըկային հայ ազգի բարոյական ու նիւթական վիճակի վերայ՝ ոչինչ որոշ

գաղափար հայ հայրենիքի բուն պիտոյքների վերայ: Մեր ծանօթութիւնն այնքան սակաւ էր մեր հայրենիքի մասին, որ ամենաբազմամարդ հայ տեղերի անուններն անգամ խորթ էին հնչում մեր ականջին՝ եւ ազգ ստելով՝ հասկանում էինք ընդհանրապէս օտար կենտրոններում հաւաքուած գաղթական Հայոց, որոնք մեծ մասամբ վաճառականութեամբ են պարապում: համարեա բոլորովին մուսուլման տալով ազգի ստուար մեծամասնութիւնը, որ մինչեւ այսօր բնակում է իւր պայերի հողի վերայ եւ չը նայելով իւր կրած զրկանքներին՝ շարունակում է երկրագործութիւնն ու արուեստները մշակել, աշխատասիրութեան ու տնտեսութեան օրինակ տալով իւր հետ ապրող այլացեղ ժողովրդներին:

Եթէ այսքան էր ծանօթութիւնը նոր հայութեան մասին, հասկանալի է թէ ինչ խեղճ պիտի լինէր եւ է տակուին մեր ունեցած գիտութիւնը հին Հայոց կեանքի մասին՝ որի երեւոյթները պարզաբանելու համար շատ աւելի մեծ աշխատութիւն է պահանջուում: Այս կողմից չափազանցութիւն չի լինիլ, եթէ ասեմ թէ մեր գրականութիւնը մի տխուր անապատ է հանում մեր առաջ: Որովհետեւ ի՞նչ են ներկայացնում այն մի քանի գրուածները՝ որոնք դասագրքի կամ «գիտնական» աշխատութեան անունով, լոյս են տեսել մեզանում:—անմշակ ժողովածուներ՝ գուրկ ամենայն ինքնուրոյնութիւնից, միմեանց հակառակ մտքերի կուտակում՝ առանց ներքին կապակցութեան կամ որ եւ է սխտէմի: Այստեղ էլ մեր գրագէտները միջոց գտան թեթեւ աշխատութեամբ մեծ գործ կատարելու: Աչքի առաջ ունենալով այն ճշմարտութիւնը որ ազգերը կղզիացած չեն սպրել, այլ գրացի, յաճախ նաեւ միմեանցից հեռու ընկած պետութիւններն իրարու հետ յարաբերութիւն ու գործ են ունեցել—նօքա հայ կեանքի երեւոյթներն օտար ազգերի կեանքով են բացատրում, իբրեւ թէ Հայն ամենեւին ինքնուրոյն կեանք, ինքնուրոյն քաղաքակրթութիւն չէ ունեցել: Կասկած չըլիայ որ մեր նախնիքն ամենահին ժամա-

նակներում շատ քան փոխ առել, սեպհականել են Ատոր-
 ետտանցիներից ու Բաբելացիներից, Պարսիկներից ու Պար-
 թեւներից եւ վերջերը Հռոմայեցիներից, Յոյներից, Արա-
 բացիներից. բայց բոլոր խնդիրը նորանումն է, թէ
 ի՞նչ ձեւ, ի՞նչ կերպարանք են տուել նոքա օտարից սեպ-
 հականածին, մինչեւ որ աստիճան իրանց հանճարի կնի-
 քը գրոշմել են նորա վերայ: Ի՞նչպէս չըզարմանա ուրեմն,
 երբ տեսնում ես հայ պատմական անձինք ճիշտ պարսկա-
 կան, յունական կամ հռոմէական հանդերձներով հան-
 դէս բերուած, եւ հայ յիշատակարաններ Պարթեւոնի ու
 Կապիտոլիոնի ճարտարապետութեամբ գծագրուած, մինչ-
 դեռ հին գրամների ու արձանների, նախնի հայ մայրա-
 քաղաքների մնացորդների հետազօտութիւնը կարող էր
 ցոյց տալ մեզ թէ ի՞նչ էր Հայոց հագուստը, զէնքը, ճար-
 տարապետութիւնը, եւայլն: Եթէ այսօրուան մեր գիւ-
 ղացու կացութեան մէջ շատ կողմից յոյն Քսենոֆոնի
 քրիստոնէութիւնից մի քանի հարիւր տարի առաջ նկա-
 րագրած հայ գիւղականների կեանքի պատկերն ենք նշմա-
 րում, ի՞նչ գաղտնիքներ չըպիտի հանեն մեր առաջ այն
 հնութիւնների հետազօտութիւնը, որոնք ամէն մի քայ-
 լափոխում ծածկում են Հայաստանի դաշտերը կամ զա-
 նազան տեղերում թաղուած եւ տակաւին անձեռնմեր-
 ձենալի մնացած են...

Պէտք է խոստովանել սակայն, որ այն անապատի մէջ
 որին արդի հայ գրականութիւն ենք անուանում, հան-
 դիպում ենք մի քանի ուխտիւնների, ուր հայ մարդը կա-
 րող է ազատ շունչ քաշել. հանդիպում են մի Ալիշանի,
 մի Այաբեանի, որոնց պատմական—աշխարհագրական
 ու լեզուաբանական ընտիր հետազօտութիւնները ցոյց են
 տալիս թէ ինչպէս պիտի մշակուին հայկական գիտու-
 թիւնները: Մասամբ այս ականաւոր մատենագրների, մասամբ
 էլ եւրոպական գիտութեան ազդեցութեան շնորհով ներ-
 կայումն մեր մէջ երևում են անձինք, որոնք իրանց գոր-
 ծունէութիւնը նուիրում են հայկական հնագիտութեան
 այս կամ այն ճիւղը մասնագիտօրէն ուսումնասիրելու:

Մէկը փորձում է ազգային պատմութեան ուսումը նոր սկզբունքների վերայ դնել, միւսը ճգնում է սեպածեւ արձանագրութիւնները խօսեցնել, երրորդն աշխատում է լեզուի պարունակած գաղտնիքները պարզաբանել, եւ այլն. եւ թէպէտ այս հետազօտութիւնների արդիւնքը տակաւին յայտնի չէ, որովհետեւ դեռ շատ բան չէ էլ հրատարակուել, բայց եւ այնպէս եղած ջանքերից կարելի է գուշակել, թէ մօտ է այն ժամանակը երբ հայկական գիտութիւնների մէջ մի մեծ յեղափոխութիւն պիտի լինի:

Ոչ նուազ յարգանքի արժանի են եւ այն անձինքը, որոնք զանազան տեսակ նիւթեր են մատակարարում առաջիններին իրանց հետազօտութիւնների համար: Այս կարգի անձինքներէն է եւ պ. Յ. Քիւրքճեանը, որին ամենայն իրաւամբ վերաբերում է մեր հայրենիքի նուիրական հնութիւնները լուսանկար պատկերներով առաջին անգամ ազգին ծանօթացնելու պատիւը:

Անիի աւերակների ծաւալագիտական տեսարանների հրատարակութիւնն այնպիսի նշանաւոր երեւոյթ է մեր ազգատիկ կեանքի մէջ, որ չէր կարող առանց ուշադրութեան անցնիլ: Մամուլն իւր ժամանակին պարտաւորութիւն համարեց պ. Քիւրքճեանի օգտակար ձեռնարկութիւնը ծանօթացնել հայ հասարակութեանը եւ ամէն կարգի անձանց համակրութիւնը շարժել դէպի հեղինակը եւ նորա գեղեցիկ գործը: Երեւեցան մի շարք յօդուածներ, որոնց մէջ նկարագրուեցան «հազար ու մէկ եկեղեցիների» մայրաքաղաքի մի քանի հրաշակերտները՝ որոնք ժամանակից ու չարագործ ձեռքերից անվնաս մնացել հասել են մինչեւ մեր օրերը. գովասանքով խօսուեցաւ հմուտ լուսանկարչի եռանդի ու անձնուիրութեան վերայ, որ ոչինչ չըխնայեց իւր ծանր ձեռնարկութիւնը գլուխ տանելու, ժամանակի հետ զոհելով եւ իւր նիւթական միջոցները եւ մինչեւ անգամ կեանքը փտանգի ենթարկելով: Մեր դիտաւորութիւնը չէ այստեղ այդ բաները նորից կրկնել, այլ կամենում ենք ընթերցողի ուշադրութիւնը դարձնել մի կարեւոր կէտի վերայ եւ ցոյց տալ

Թէ ինչ օգուտ կարելի է քաղել այս տեսակ հնութիւններից կրթութեան գործի մէջ մեր ուսումնարաններում եւ յատկապէս ազգային պատմութեան դասատուութեան մէջ:

Պատմութեան ուսուցչին յայտնի է թէ մեր մանուկները որպիսի օգեւորութեամբ սիրում են լսել ու պատմել մեծամեծ աշխարհակալների գործերը. Նինոսների, Սեսոստրիսների, Կիւրոսների, Աղէքսանդրների ու Կեսարների յաղթական արշաւանքներն իրանց բոլոր մանրամասնութիւններով այնպէս սաստիկ ազդում են նոցա մատաղ սրտի վերայ, այնպէս խոր տպաւորվում են նոցա թարմ մտքի մէջ, որ միշտ կենդանի կը մնան նոցա յիշողութեան մէջ: Բանական է որ ուսուցիչն աշխատի նոյն ոգեւորութիւնը վառ պահել իւր սանիկների մէջ, երբ բանն ազգային պատմութեանն է գալիս, ջանալով համանման անձինք ու դէպքեր ներկայացնել նոցա մեր հին կեանքից: Եւ պէտք է խոստովանել որ նա մասամբ հասնում է իւր նպատակին, երբ Արամների, Տիգրանների, Արտաշէսների ու Տրդատների պատմութիւնն է անում նոցա: Սակայն մեր պատմութեան մեծագոյն մասն այնպիսի բնաւորութիւն ունի, որ ուսուցիչը չէ կարող երկար ժամանակ նոյն լեզուն բանեցնել, եթէ չէ կամենում ճշմարտութիւնը թաքցնել եւ անդադար հակասութիւնների մէջ ընկնիլ: Ի՞նչ պիտի ասէ նա, օրինակի համար, Ասորեստանցոց, Պարսից, Հռոմայեցոց, Յունաց եւ Արաբացոց հզոր պետութիւնների ժամանակակից Հայոց պատմական անձանց եւ անցքերի վերայ, երբ մեր երկիրը ոչ միայն երկրորդական դեր էր խաղում, այլ երբեմն նաեւ հարկատու ու հպատակ էր օտարին: Ել չեմ, խօսում մեր պատմութեան այն շրջանների վերայ, երբ օտարական լուծը ծանրանում էր Հայոց վերայ եւ Հայաստանը մի ողբալի տեսարան էր ներկայացնում աշխարհին: Կասկած չը կայ որ ուսուցիչը չէ կարող լուութեամբ անցնիլ այդ շրջանների վերայ, ոչ էլ ուրիշ գոյներով ներկայացնել մեր պատմութեան այդ դժբաղդ ժամանակները. այդ ոչ միայն

կեղծ հայրենասիրութիւն կը լինէր, այլ եւ կը շեղէր մեզ մեր գլխաւոր նպատակից, որ է ազգային պատմութեան ուսումը գիտակցական կերպով աւանդել մատաղ սերունդին:

Այս անբնական դրութիւնից ազատուելու միայն մի ելք կայ. ցոյց տալ թէ ինչու մենք է կայսնում իսկապէս մեր անցեալ կեանքի էութիւնը, որպէս զի իմանա՞նք թէ Հայերն ինչ անգ են բռնում պատմական ազգերի շարքում: Սորանով մենք շատ անկի նշանաւոր բան արած կը լինինք. Հայոց նշանակութեան համար, բան էթէ շարունակէինք այնպիսի յատկութիւններ տալ նոցա որ երբէք ունեցած չեն: Նախ եւ առջ պէտք է իստատովանել որ Հայերն իրանց պատմութեան ոչ մի շրջանում աշխարհակալ ազգ չեն եղել: Բացառութիւն կարելի է համարել միայն Տիգրան Բի ժամանակը, երբ Հայոց ղէնքերը մի քանի ազգեր նուաճեցին եւ Հայաստանի ազգեցութիւնը տարածվում էր արեւմտեան Ասիայի մեծ մասի վերայ: Բայց այս մի ժամանակաւոր բան էր, եւ դուցէ յարմար է իբրեւ ապացոյց բերուել թէ Հայերը կարող էին ուրիշ շրջակայ ազգերի պէս մի մեծ զինուորական պետութիւն կազմել, եթէ իրանց երկրի գիրքը եւ արտաքին քաղաքական հանգամանքները ներած լինէին: Հայաստանն իւր լեռնաշղթաներով եւ բազմաթիւ գետերի հստանքներով նպաստեց որ այս երկրում հէնց սկզբից ձեւացան այլ եւ այլ մեծ ու փոքր իշխանութիւններ, որոնք անգաղաք պատերազմի մէջ էին մէկ կողմից միմեանց դէմ, միւս կողմից կենտրոնական իշխանութեան դէմ՝ ձգտելով միշտ անկախ մնալ Արարատեան թագաւորների ազգեցութիւնից: Սեր ամբողջ հին պատմութիւնը ոչ այլ ինչ է ներկայացնում, եթէ ոչ անվերջ պատերազմների շարունակութիւն. թագաւորների եւ իրանց վասալների մէջ երկրի քաղաքական միութեան համար, որ սակայն անկարելի եղաւ գլուխ բերել: Այս անյաջողութեան գաղտնիքը ոչ այնքան կենտրոնական իշխանութեան թուլութեամբ է բացատրվում, որքան այն հանգամանքով որ մեր

Թագաւորները միեւնոյն ժամանակ ստիպուած են եղել պաշտպանուելու այն զինուորական պետութիւնների դէմ որոնք հետզհետէ կազմուեցան մեր հայրենիքի շուրջը. նախ ասորա—քաղաքական ու մարա—պարսկական պետութիւնների դէմ, ինչպէս որ հաստատուում է Վանի, Խորոպատի ու Բիսութունի բեւերագիր արձանագրութիւններով, եւ ապա Սասանեանց, Բիւզանդացոց եւ Արաբացոց դէմ, ինչպէս որ միաբերան վկայում են մեր պատմագիրները. Բայց եւ այնպէս իրողութիւնը միշտ իրողութիւն է մնում եւ մենք ստիպուած ենք խոստովանելու, որ Հայերը քաղաքական տեսակէտից միշտ երկրորդական դեր են խաղացել ասիական ազգերի պատմութեան մէջ.

Սակայն եթէ Հայերն իրանց հարաւային ու արեւելեան դրացիների նման աշխարհակալ ազգ չեն եղել, մեծ անիրաւութիւն կը լինէր կարծել, թէ նոքա ընդհանրապէս պատերազմի դաշտում փառ զինուորներ են եղել, թոյլ ու անարի մարդիկ եղել, ինչպէս որ մեր անցեալ պատմութեան անճանօթ օտարները կարօղ են ենթադրել, մեր ներկայ փրճակն աչքի առաջ ունենալով: Հայոց պատմութեան էջերը բարձրաձայն վկայում են, որ Հայն երբէք իւր արիւնք չէ խնայել, երբ հարկ է եղել իւր հայրենիքը իւր մարդկային ու ազգային իրաւունքները պաշտպանել, եւ այս աննշան քաղաքական առաքինութիւն չէ: Օրինակները պակաս չեն: Հէնց սկզբում մեր պատկառելի նախահայրը չէր որ իւր գեղեցիկ օրինակով սովորեցրեց մեզ քաղաքական ազատութեան գին դնել, դեռ նոր ձեռք բերած հայրենիքի համար իւր եւ իրաւորների կեանքը փառնգի ենթարկելով: Հայկանման Արամը չէր այն հայրենասէրը, որի մասին պատմութիւնը բնա առ բնա ասում է, թէ «աւելի լու էր համարում մեռնել քան թէ Հայաստանը տեսնել օտարներից ոտնակոխ եղած, եւ իւր հայրենակիցներին օտարի լուծի տակ ընկած»: Արա գեղեցիկը չէր այն առաքինի իշխանը, որ իւր համեստ հայրենիքը չրկամեցաւ փոխել օտարի բոլոր մեծութիւնների հետ, եւ Ասորեստանի աշխարհակալ թագուհին միայն նորա դիա-

կի վերայ անցնելով կարողացաւ Հայաստանի տէր դառնալ: Այնուհետեւ գալիս են Ասորեստանցոց ու Պարսից գերիշխանութեան ժամանակները, երբ Հայերը նոյն իսկ օտարական արձանագրութիւնների վիպութեամբ, ամենամեծ յամառութեամբ կռուել են իրանց անկախութեան համար՝ թօթափելով օտարի լուծը, որին ենթարկվում էին երբեմն մեր հայրենիքի մի քանի գաւառները, եւ շարունակ պահպանելով ազգային ինքնուրոյնութիւնը: Արշակունեաց օրով, Արտաշէսի ու Տիգրանի յաջողութիւններից յետոյ, Հայերը միեւնոյն զգուանքով խորշեցան ինչպէս Հռոմայեցիներից նոյնպէս եւ Պարթեւներից, եւ երբէք կատարելապէս չենթարկուեցան ոչ առաջինների եւ ոչ վերջինների իշխանութեանը: Ել չեմ խօսում քրիստոնէութեան ժամանակների վերայ. Վարդանեանց եւ Վահանեանց շրջանների Հայոց պատմութիւնը կարող է ամէն ազգի պատմութեան պատիւ բերել. . . . Արաբական խալիֆների օրով, չընայելով որ եսականութեան ու երկպառակութեան սերմերը Հռոմայեցոց, Յունաց ու Պարսից շնորհով բուն էին գրել Հայոց մեծամեծների մէջ, բայց եւ այնպէս Հայերը անգագար սպստամբում են երբեմն Արաբացիներից, երբեմն Յոյներից, — եւ այս շարունակ ապստամբութիւնները ցոյց են տալիս որ անկախութեան սէրը գեռ չէր հանգել նոցա մէջ, — մինչեւ որ վերջապէս յաջողեցան մի քանի փոքրիկ իշխանութիւններ կազմել: Բայց այս վերջին ճիգը սպասուած արդիւնքը չը տուեց. Հայոց քաղաքական ազատութիւնն երկու դար տեւելուց յետոյ անդառնալի կերպով ընկաւ Բիւզանդական Յոյների եւ Սելջուկեան Թուրքերի հարուածների տակ: Այնուհետեւ Չինկիզխանների ու Լանկթամուրների բարբարոսական արշաւանքները եւ վերջերն Օսմանցոց ու Պարսից անգթութիւնները Հայաստանը աներակ դարձրին եւ խորտակեցին Հայոց վերջին յոյսերն իբանց հայրենիքի վերականգման համար:

Այս հարեւանցի տեսութիւնից երեւում է որ Հայոց քաղաքական դժբաղդութեան պատճառը ոչ թէ հայրենասիրութեան կամ արիւնթեան պակասութիւնն է եղել:

այլ ուրիշ հանգամանքներ, որոնց մէջ գլխաւորը կը մնայ միշտ այն վարչական ձեւը, որ Հայաստանի դիրքը եւ Հայոց բնական հակումն իսկզբանէ անտի նպաստել են հաստատելու երկրի մէջ, այն է՝ ավնուապետական միապետութիւնը: Այս սիստէմը, որ իւր լաւ կողմերն ունի եւ յարմար է միայն քաղաքականապէս հասունացած ազգերի համար, ուր մարդիկ գիտեն ընդհանուր շահերը մասնաւոր շահերից բարձր դասել, չէր կարող օգտակար լինել մեզանում: Ուր նախարարական տոհմերը հլու հպատակ էին երկրի վեհապետին՝ երբ սա զօրաւոր էր, եւ օգուտ էին քաղում միշտ նորա թուլութիւնից՝ նորանից անկախ, երբեմն նա եւ նորա հակառակ գործելու համար: Սակայն ինչ որ քաղաքական զօրութեան նկատմամբ վնասակար էր, նոյնը ոչ սակաւ նպաստաւոր կը գտնենք Հայոց համար, եթէ խնդրի վերայ քաղաքակրթութեան տեսակէտից նայելու լինինք: Հայաստանի վարչական կազմակերպութեան գլխաւոր արգիւնքն այն եղաւ, որ երկրի մէջ գանազան մեծ ու փոքր կենդրոններ կազմուեցան, որոնք ոչ սակաւ նպաստեցին ժողովրդների տնտեսական, բարոյական ու մտաւոր յառաջագիմութեանը: Իւրաքանչիւր նահանգի ու գաւառի իշխան աշխատում էր իւր երկրի բնական հարստութիւնները մշակել, երկրագործութիւնը, վաճառականութիւնը, ճարտարութիւնն ու արուեստները ծաղկեցնել: Ամէն մի իշխան իւր դրացի իշխանի հետ մրցում էր հաղորդակցութեան ճանապարհների, կամուրջների, հիւրանոցների, շքեղ պալատների ու տաճարների շինութեամբ, որոնք անշուշտ այնքան առատութեամբ երկրի ամէն կողմերը չէին շինուիլ, եթէ ամենայն նախաձեռնութիւն լսկ թագաւորների կողմից եկած լինէր: Սենք խորին կերպով համոզուած ենք, որ եթէ Հայոց այդ անցեալ մեծագործութեան մնացորդներն այսօր օրինաւոր կերպով հետազօտուին, համեմատելով նոցա դրացի ազգերի հնութեան մնացորդների հետ, մի որոշ գաղափար կը կազմենք ոչ միայն Հայոց հանճարի էութեան, նոցա ճաշակի նրբութեան եւ ընդհանուր զարգացման աստի-

ճանի վերայ, այլ եւ այն կարեւոր խնդրի մասին՝ թէ ինչո՞ւմն է պարունակւում Հայոց պատմական նշանակութիւնը, ինչ է եղել նոցա մարդկութեան մատուցած ծառայութիւնը: Արդէն Մ. Խորենացին իւր Պատմութեան վերջին էջի մէջ Հայոց աշխարհի անկման վերայ ողբալով, այդ աշխարհը «հանուրց Հիւսիսականաց վեհագոյն» է անուանում: Մեր կարծիքով այս կարծիկ խօսքը կարող է իբրեւ բնաբան ծառայել Հայոց անցեալ նշանակութիւնը բացատրելու: Հայերն անընդհատ պատերազմական եւ առեւտրական յարաբերութիւններ ունենալով աշխարհի ամենալուսաւորեալ ազգերի հետ, հետզհետէ ծանօթացան նոցա քաղաքակրթութեանը եւ իրանց երկիրը տեղափոխելուց յետոյ՝ այդ քաղաքակրթութեան արդիւնքները տարածեցին հիւսիսային սահմանակից ազգերի մէջ—Վրաց, Աղուանից, Գուգարաց, Աբխազաց եւ մինչեւ իսկ Կովկասեան լեռնականների մէջ: Եթէ գեռ բաւական իրողութիւններ չը կան այդ բանը գրականապէս ասելու նախնական դարերի նկատմամբ, պատմական փաստերը լիովին հաստատում են մեր ասածի ճշմարտութիւնը քրիստոնէական դարերի վերաբերմամբ: Բաւական է յիշել որ քրիստոնէութիւնը Հայաստանից տարածուեցաւ Վրաց ու Աղուանից երկրներում, եւ Հայերն եղան այս եւ ուրիշ «հիւսիսականաց» առաջին ուսուցիչները: Նոյնպէս Հայ հանճարը ստեղծեց Վրաց եւ Աղուանից տառերը՝ եւ այս վերջինների եկեղեցական ու գրական լեզուն երկար ժամանակ հայերէնն եղաւ:

Մի ուրիշ ուշագրութեան արժանի կէտ էլ այն է՝ որ Հայերը չբաւականացան օտարի քաղաքակրթութիւնն ընդունելով եւ ուրիշների մէջ տարածելով, այլ եւ իրանց սեպհական հանճարի կնիքը գրոշմեցին այդ քաղաքակրթութեան վերայ, ինչպէս որ երեւում է նոյն իսկ պ. Քիւրքճեանի ժողովածուից: Յայտնի է որ Հայերն Արաբացիներից գրականութեան մէջ ընդունեցին յանգաւոր տաղաչափութիւնը, գիտութեան մէջ բժշկութիւնը, իսկ գեղարուեստների մէջ ճարտարապետութիւնը, բայց այս վերջի-

նի մէջ յատկապէս նորա յաջողեցան, արաբական, բիւզանդական եւ մասամբ գոթական ճաշակների ներդաշնակ միաւորութիւնից մի նոր ճարտարապետական ոճ ստեղծել: որին այսօր մասնագէտները հայկական անունն են տալիս:

Ահա այս բաների վերայ ուշադրութիւն պէտք է դարձնել հայրենագիտութեան ուսումնասիրութեան մէջ: Բայց որովհետեւ հնութիւնը հնութեամբ միայն կարող է լաւ լուսաբանուիլ, պէտք է ժողովենք ամենայն խնամքով մեր հնութեան մնացորդները: համոզուած լինելով որ ամէն մի ճարտարապետական շինութիւն, ամէն մի արձան, մի վէճիք, մի գործիք, շատ աւելի բան կարող է հասկացնել մեզ քան այն բոլոր ենթադրութիւններով լի գրուածները: որոնք խնդիրը պարզելու տեղ աւելի մըթնացնում են նորան: Այս կողմից պ. Քիւրքճեանի գործը մի գեղեցիկ սկզբնաւորութիւն է: որ պէտք է անշուշտ իւր շարունակողներն ունենայ հնագիտութեան ամէն ճիւղերի մէջ: «Անիի աւերակները», հայկական ճարտարապետութեան այս կատարելատիպերը, յոյց են տալիս ընդհանրապէս թէ ինչ աստիճանի զարգացման էր հասել մեր ազգը, որովհետեւ անկարելի է ենթադրել գեղարուեստի մի ճիւղի զարգացումն անկախ նորա միւս ճիւղերից: Երբ անցեալ տարի պ. Քիւրքճեանն իւր «Ժողովածուն» ներկայացրեց Թիֆլիսի Հնագիտական ժողովին, նշանաւոր պատմագիր Ելիայտիկին հիացմամբ բացագանչեց. «Արդար եւ Հայերը քաղաքակիրթ ազգ են եղել»: Այս անկեղծ խոստովանութիւնը մի օտար գիտնականի կողմից չէ կարող նշանակութիւն չունենալ մեր աչքում: Մեզ համար մեծ պարծանք է եթէ այս կարծիքը հաստատուի ու համոզմունք դառնայ: Թէ մեր նախնիքը քաղաքակիրթութիւնը սիրող ու տարածող են եղել. թո՛ղ նորա աշխարհակալ եղած չլինին: Բայց դորա համար, կրկնում ենք, հարկաւոր է մեր հնութեան մնացորդները լոյս աշխարհ հանել եւ ծանօթացնել նոցա նախ մեր մտտալ սերունդին:

դպրոցական ամբիոնից, եւ ապա գիտնական աշխարհին մամուլի միջնորդութեամբ:

Մնում է մեզ ցանկալ որ առաջիկայ Ուսուցչական ժողովում ազգային պատմութեան եւ ընդհանրապէս հայրենագիտութեան ծրագրի վերայ խօսելիս՝ ձեռնհաս անձինք յանձն առնէին բայտարել հայկական հնութիւնների կարեւորութիւնը մեր ուսումնարանների համար, ժողովականների առանձին ուշադրութիւնը դարձնելով Անիի աւերակների Հաւաքածուի վերայ: Այս անհրաժեշտ է անել մանաւանդ այն պատճառով, որ մինչեւ այժմ, որքան մեզ յայտնի է միայն Վեց ուսումնարան եօթն օրինակ ձեռք են բերել այդ ժողովածուից: Գործի թեթեւութեան համար լաւ կը լինէր որ Կարգադրիչ Յանձնաժողովը ժողովի դահլիճին կից մի տեղ զնէր այդ պատկերները ծաւալագիտակով հանդերձ, որպէս զի մեր ուսուցիչներն անձամբ կարողանային ծանօթանալ ու Գիւրքճեանի գործին:

Ս. ԳԱԼԱՍԱՆԵԱՆ



Մ Ա Տ Ե Ն Ա Ի Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Սրբազան պատմութիւն հին եւ նոր կտակարանի, աշխատասիրեց Հայոցի,
Թիֆլիս, 1882. հրատարակութիւն Կենտրոնական Գրապահանարանոցի:

Եթէ չենք սխալուում Սրբազան պատմութեան առաջին ձեռնարկը, որ լոյս տեսաւ 1838. ին Ս. Էջմիածնում: Իսահակ ա. ք. Սահառունեանի ռուսերէնից թարգմանած 104 պատմութիւնն է. այս ձեռնարկը բովանդակում է պատմութիւններ Հին եւ նոր կտակարանից գրաբառ լեզուով. իւրաքանչիւր պատմութեան վերջին աւելանում են «օգտակար խրատք» եւ «պտուղք բարեպաշտութեան» որոնց նպատակն է: նախընթաց պատմութեան բարոյականը հետեւացնել եւ տպաւորել աշակերտի մէջ: Ս.յգ Սրբազան պատմութեան լոյս տեսնելուց մինչեւ օրս քառասուն եւ չորս տարի է անցել. մի պատկանելի շրջան, երբ կարելի էր յառաջագիմութեան քայլեր անել եւ անհամեմատ աւելի բարւոքել կրօնի դասաւանդութեան եղանակը: սակայն այդ շրջանում մենք շատ սակաւ ենք շահուել ժամանակից. Հ. Սահառունեանի Ս. պատմութիւնից աւելի կամ պակաս արժանաւորութիւններով ձեռնարկներ այնուհետեւ շատ հրատարակուեցան, մենք յիշում ենք մօտ 12 այգալիսի ձեռնարկներ Վենէտիկ, Վիէննա, Թէոդոսիա, Երուսաղեմ, Մսքոլա, Տիֆլիս, Էջմիածին եւ այլն տպուած. ոմանք գրաբառ, եւ ոմանք աշխարհաբառ արեւելեան կամ արեւմտեան բարբառով. ոմանք հարց ու պատասխանով, ոմանք համառօտ եւ ոմանք ընդարձակ. բոլոր այդ ձեռնարկների պատմութեան եղանակը մի է. տարբերութիւնը միմեանցից այն է, որ բարբառը փոխվում է եւ հետզհետէ աւելի կանոնաւորվում: մանաւանդ արեւելեան բարբառով յօրինուածները. դոցա մէջ փոքր ի շատէ յարմար ձեռնարկ է՝ եւ այն էլ

միմիայն ծխական դպրոցների համար՝ «Արբազան պատմութիւն հին եւ նոր ուխտի եկեղեցւոյ՝ համառօտեաց Ս. ա. ք. Մանգինեանց, Վաղարշապատ 1871:» Միւսների կարգում ամէնից գերազանցն է վերելք խորագրի մէջ յիշուած Հայորդու Սրբ. պատմութիւնը՝ որ լոյս տեսաւ ներկայ 1882 թուին Վենդրոնական Գրավաճառանոցի հրատարակութեամբ. այդ աշխատութիւնը բաղկացած է երկու գրքից—ա) հին կտակարան եւ բ) նոր կտակարան. ունի մաքուր տիպ եւ ձեռնտու գին (1 րուբլ.) քանակութեան համեմատ զիջումներ եւս նշանակուած են: Հայորդու Սրբազան պատմութիւնն իբրեւ ձեռնարկ երկու առաւելութիւն ունի նախորդներից. առաջինը՝ որ այստեղ պատմութեան լեզուն աւելի կոկ եւ կանոնաւոր արեւելեան—աշխարհաբառ է. տեղ տեղ սգեւորիչ եռանդ է ներշնչում եւ շարժում է տրամադրութիւն գէպի պատմութեան նիւթը. եւ երկրորդը՝ որ պատմութեան նիւթին կենդանութիւն տուող խօսքերը շատ տեղ նոյնութեամբ առնուած են Ս. Գրքից աշխարհաբառ թարգմանութեամբ: Այս երկու առաւելութիւններն են, որ ծածկում են Հայորդու աշխատութեան մի քանի թերութիւնները՝ սրտեք առհասարակ բուն նպատակի նկատմամբ երկրորդական են, ուստի եւ միառմի նշանակելն սւեյորդ է. (զորօրինակ՝ տեղտեղ շատ երկար պարբերութիւններ է բանեցնում)՝ տեղտեղ վերացական ածականներ է դնում, մեծ մասամբ Աստուծոյ անունը տալիս մի ածական էլ մօտն է կցում եւայլն)։

Զընայելով այսպիսի գերազանցութեան Հայորդու աշխատասիրութիւնն եւս զուրկ չէ նախորդների ընդհանուր թերութիւնից: Մեր կարծիքով մինչեւ այսօր լոյս տեսած բոլոր Սրբ. պատմութիւնների ընդհանուր թերութիւնն այն է, որ նոցա մէջ բովանդակուած է միմիայն Ս. Գրքի պարունակութիւնը: Գոտագիրքը նշանակիլում է աշակերտի ընթերցանութեան համար. ուրեմն գա մի ուսումնասիրութեան աղբիւր է: Մենք մի այլ տեղ առիթ ենք ունեցել ընդարձակօրէն յայտնելու մեր հայեացքը թէ ի՞նչպէս

պէտք է ուսումնասիրել պատմութիւնը, որ աւելի լաւ տպաւորուի եւ հասկանալի լինի*) մենք այնտեղ ասել ենք որ պատմութիւնը հարկաւոր է ուսումնասիրել իսկական աղբիւրներով. նոյնը կրկնում ենք մենք այստեղ, ամփոփելով մեր միտքը հետեւեալ կերպով: Չոր ու ցամաք պատմելով ս. Գրքի պարունակութիւնը կարելի չէ գալափար տալ հին եւ նոր օրէնքների վերայ. նոյնպէս կարելի չէ անուններ ու տեղեր թուելով կրթել մանուկի մէջ կրօնական զգացմունք եւ զարգացնել նորա ճանաչողութիւնը: Այդ երկու կարեւոր նպատակներին կարող է ծառայել Արք. պատմութեան ուսումնայն ժամանակ, երբ ընտրուած են Ս. Գրքի կրթիչ եւ բաղմարովանդակ մասերը, երբ նոքա պատմուած են նոյն իսկ Ս. Գրքի խօսքերով աշխարհաբառ թարգմանած, երբ գոքա գասաւարուած են ոչ թէ ժամանակի եւ նիւթի մեքենայական յաջորդութիւնը ցոյց տալու համար, այլ բարոյական եւ բնական օրէնքների ծագումը, նոցա մրցումը եւ հաշտութիւնը պատկերացնելու:

Մենք մեր միտքը չափազանցութեան հասցրած չենք լինի, եթէ ասենք, որ աշակերտն աւելի մեծ տպաւորութիւն կը ստանայ եւ շահ կ'ունենայ, եթէ կարգայ նոյն իսկ ս. Գրքից երկու տող քան եթէ ստիպուի կարգալ սյգ երկու տողի իմաստն արտայայտող մի ամբողջ գլուխ պատմութիւն: Արեւմն հարկաւոր է միջոց տալ աշակերտին որքան կարելի է կանուխ եւ հիմնաւոր կերպով ծանօթանալու Ս. Գրքին անմիջապէս. կարեւոր լուսաբանութիւնները նա կարող է լսել, եթէ պէտք լինի նոյն իսկ իւր ուսուցչի բերանից: Պէտք չէ խորհրդածութիւններով, շինծու բառերով եւ լուսաբանութիւններով ձգտել փոխել աշակերտի տրամադրութիւնը, որ իսկապէս մոլորեցնել է նշանակում այլ մօտեցնելով նորան Ս. Գրքի հետ՝ տալ միջոց ինքնին իւր եզրակացութիւններն անելու եւ ինքնին հաշիւ տալու իւր կարգացածի մասին. մենք

*) Տես Հիւսուածք, Գ. գիրք, յառաջաբան.

Համոզուած ենք, որ նա ինքն էլ Ս. Գրքի ապաժի վերայ իրանից բան աւելացնելու (կամ պակսեցնելու) հարկ չի դրալ: Եւ քանի որ մեր կրօնի միակ ազբիւրը Ս. Գիրքն է, ի՞նչ հարկ կայ արտաքին պատմիչների, սրօնք ազատութիւն են տալիս իրանց լեզուին ու ճաշակին, իրանց դատողութեանն ու հայեացքներին եւ այդպիսով չեն կարող վաստակել այն հեղինակութիւնն ինչ որ ունի Ս. Գիրքը:

Այսքանն ասելուց յետոյ՝ այսուհետեւ գօնէ մենք իրաւունք ունինք ցաւելու, եթէ մեր կրօնի ձեռնարկները չըփոխեն իրանց հին ուղղութիւնը եւ չըգիմեն մեր բացատրած եղանակին: Այն ժամանակ առնուազը մենք այս պիտի մտաբերենք, որ կրօնի գաստառութիւնն ընդունուած է եւ լինում է ոչ թէ կրթութեան ու գաստարակութեան նպատակով, այլ միմիայն ձեւի համար:

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆ

ՆՈՐԱԳՈՅՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԳՐԲԵՐ

(Բահաթրեանի, Գամառ-Բատիպալի և Աղայեանի)

Նատ ժամանակ չէ անցել, ինչ որ մեր մամուլն ընթերցող հասարակութեան ազգու կերպով զբաղեցրեց ազգային բուն բանաստեղծութեան խնդրով: Ինչ որ Արքայեանն իբրեւ բանաստեղծ, Ախվերդեանն իբրեւ ուսումնական սկիւսել էին՝ կարծես անցաւոր երկներեւութի պէս պէտք է անհետանային, եթէ «Կռունկ» իբրեւ հրատարակախօս բարձրազարակ չը բարոզէր այդ երեւոյթների խորին նշանակութիւնը մեր նորածին գրականութեան համար: Բայց եւ այնպէս յափշտակութեան աշխոյժը յարատեւութիւն չունեցաւ, թէ եւ այնուհետեւ մի քանի փորձեր փորձուեցան այն վառած լապտերին ձէթ տալու համար (Ոսկան Յով-

Հաննիտեանի, Միտնոսարեանի, եւ ուրիշների հրատարակած
 երգարանները): Ինչպէս ստացինք, միայն նորագոյն ժա-
 մանակ նորոգուեցաւ նոյն զուարթութիւն բերող զարկը
 եւ այնպէս ուժգին կերպով, որ ապահոված պէտք է Հա-
 մարուի նոր ուղղութեան ոգին: Եւ զարմանալին այն է,
 որ այդ զարկն այն կողմից ստացուեցաւ, որ կողմից ա-
 մէնից քիչ էինք սպասում: Մենք արարատեան Հայերս վա-
 ղուց արհամարանօք խօսում էինք Տաճկահայոց վերայ, թէ
 նոքա ֆրանսիական բօմանների թարգմանութիւններից ա-
 ւելի ոչինչ չ'արտագրեցին իրանց սքօլաստիքական ուղղու-
 թեամբ, ուր մենք արդէն ազգային փայլուն բանաստեղ-
 ծութեան սկզբնաւորութեամբ պարծենում էինք: Յան-
 կարծ մի Տաճկաստանցի Հայ, այն եւս արեղայ մարդ, այդ
 սքօլաստիքական մթնոլորտից մեզ ընծայեց իւր նուրբ ճա-
 շակն ու բուն ազգային ոգու փշրանքները: Սրուանձտեան
 (իբրեւ մատենագիր) արդէն պատուաւոր եւ արժանաւոր
 տեղ բռնեց մեր մատենագրութեան պատմութեան մէջ: «Մշա-
 կի» Մելիքզադէն, «Սեղուի» Տ. Ալէքսանդրեանը եւ «Փոր-
 ձի» Գրիշը միաբերան աւետեցին մեզ այդ նոր երեւոյթը,
 մեզ, որ աւելի ճաշակ ունենալն էինք երեւակայում, բայց
 եւ այնպէս իսկոյն խոստովանեցինք Սրուանձտեանի մեծ
 ծառայութիւնը: Նա ժողովրդական բանաստեղծութեան
 բոլոր տեսակներից ընտիր ընտիր օրինակներ ներկայաց-
 րեց, թէ երգ, թէ առակ, թէ հէքիաթ, թէ զուարճա-
 խօսութիւն, եւ թէ մի դիւցազներգութիւն (Սասունցի
 Դաւիթ), որ չը լսուած բան էր մեզ համար: Մի՞թէ մեզ
 համար դոքա այնքան նորութիւն էին, որ Սրուանձտեա-
 նին այնպէս երկինք բարձրացուցինք. մի՞թէ մեզ յայտնի
 չէին եթէ ոչ միւս մասերը, գոնէ հէքիաթները: Անշուշտ
 յայտնի էին, բայց ցաւն այն էր, որ մինչդեռ տեսակա-
 նապէս մենք գիտէինք, թէ որքան յարգ ունին ժողովրդ-
 դական բանաստեղծական երգերը քաղաքակիրթ ազգերի
 մէջ, մինչդեռ Գրիմմի հռչակը մեզ էլ էր հասել, մենք չէինք
 կարող գործով ցոյց տալ գոնէ մի հէքիաթ մեզանում, որ
 այն զուարճութիւնը պատճառէր, ինչ որ տեսականապէս

յնորում էինք, թէ գոքա պէտք է որ զարթեցնել կարողանան: Ուստի եւ կամ սկսում էինք այն յարգն անտեղի անհամութիւն համարել, կամ կարծում էինք, թէ մեր ազգը զուրկ է լաւ հէքիաթներից, եւ մենք պատրաստ էինք ազգային բանաստեղծութեան հրապոյրներից հրաժարուելով հրաժարուել... ապացոյց՝ մեր «ընթերցարանները»: Սրուանձտեանի ծառայութիւնը եւ մեծ ճաշակը հէնց նորանումն է, որ մի հարուածով անհաւատներին հաւատքի բերեց, այն հրապոյրներն իրանց առաջն իբր օրինակ դնելով: Նորա ժողովածուն բոլորովին ազգային հոգու շնչով է շնչում: որ տեղ ե՛ւ ճաշակ կայ, ե՛ւ իմաստ, ե՛ւ հանճար՝ ե՛ւ բարոյականութիւն, — եւ այս բոլորը մերն է, մեր հայկականը, եւ ոչ օտարինը: Գոքա անհերքելի ապացոյց են, թէ ժողովրդական բանաստեղծութեան անփոխարինելի ազգեցութիւնը որքան կախուած է հաւաքողի շնորքից, որ իւր նուրբ եւ հանճարեղ ճաշակով գիտէ ընտիրն անպէտքից ջոկել, բուն ազգայինը թաթարացած բանդագուշանքից: մանաւանդ որ, այսպէս մի տգէտ ազգ, ինչպէս որ Հայոց ազգն է, որ Արաբների, Մոլոյրների, Պարսիկների եւ Թաթարների մահացուցիչ ազգեցութիւններով է ձուլուել: հարկաւ իւր միտքը պէտք է պղտորէր ճիւղաղական, դիւական նախապաշարմունքերով, եւ ինքը կարողութիւն էլ չը պէտք է ունենար իւր անարատ գանձն այս եկամուտ ժանգերից զատել, եւ երկուսն էլ անխնամ կերպով աւանդեց որդէ ցորդի:*) Անշուշտ ինչ որ Սրուանձտեանը մեզ աւանդել է, մի աննշան մասն է մեր ազգային այն գանձից, որ դեռ բերանէ բերան աւանդվում եւ Սրուանձտեաններին է մնում՝ որ հետըզ-

*) Բաւական է Սրուանձտեանի հաւաքածուն համեմատել Տ. Նաւասարդեանի հաւաքած «հէքիաթների» հետ (որի մի փոքր մասը «Արարատումն» էր տպագրվում և առանձին տետրակով ևս լոյս տեսաւ), — որ զարմացմամբ ասենք, թէ մի թէ երկուսն էլ մի և նոյն ազգի, մի և նոյն Հայու ծնունդն են: Երիտասարդ աշխատաւորի վերայ արատ դնել բնաւ չենք ուղղում, որ պէտք է հաւաքէր, ինչ որ միայն գտնում էր, բայց և այնպէս յուսանք, որ նորա հե-

Հետէ գրի անցուցանուի քայց եւ այնքանն էլ բաւական էր որ իսկոյն գործադրութիւն գտնէր պատուգներ առաջացնելու համար։ Եւ իրաւ թէ նա կենդանութեան շունչ ունի՝ ինչո՞ւ համար նոյնը կաթիլ պէս չը լուսուի մանուկներին որոնց որ կ'ըզենը խելացի կերպով զարգացնելու ուրեմն մի պզդու ոյժ է որով մտցնուցաւ զարգացման ճանապարհը և ճեղք հեշտանայ եւ կը հախթուի Այս պիտի կրթական տարրից առաջ մենք զուրկ ենք քայց ամենայն ազգ ուրիշ պայմանների հետ ապաւիտի կրթական տարր էլ պէտք է ունենայ եւ նորանից օգուտ քաղէ որ յառաջագիմութիւններ եւս անէ զարգացման ճանապարհի վերայ։ Այժմ երբ Սրուանձտեանը մեզ այգ ընծայեց՝ մենք պէտք է ապերախտ չը գտնուէինք եւ նորա ընծայածն իւր տեղը հասուցանէինք—այսինքն մտնուկներին եւ այդ պատիւը պարծենալով ենք ասում մեզ վիճակուեցաւ։ Մեր «Ազգային ընտանեկան աշխարհքը» եւ նորա միւս շարունակութիւններն այդ սկզբունքի ծնունդ են։ Մենք մերն անելով համոզուած էինք թէ շարունակուած ենք մի բնական պատմական ընթացք որով հետեւ մատենագրութեան մէջ էլ քայլեր կան ուր առաջիններից յետոյ յետիններն են քայլում։ Բայց ահա մեզ ուզում են ապացուցանել թէ մենք լաւ չենք արել եւ թէ աւելի լաւ է մատենագրութեան մէջ նոր շաւիղներ բանալ աւելի լաւ է ազգայինն արհամարհել եւ օտարինը հռչակելայ Գրիմի հէքիաթները մեր մանուկներին աւանդել Բայց առաջ քան շարունակենք ահամայ յիշում ենք Վաւառ-Քատիպայի մի խօսքը՝ մեզ ներելով մի սոյգի փոփոխութիւնը։

Մարդ չէ կրկու է բու վանեան
 Ար սեպհական չունի բուն

տեւայ տետրակներն աւելի ընտրովի գաբարտրած կը լինին յիշեցնելով նորան թէ ամենայն պատմող արժանի չէ որ նորա պատմածը գրի անցուցանուի քայց եւ միւս կողմից ինչ որ տպուի անպիտիս պէտք է տպուի միայն հում նիւթ տալով բանասերներին։

Թուօակ է քու գոված տղան,
 Որ ծանօթ չէ Հայ հոգուն:

Ասենք թէ Գրիմմն երեւելի հէքիաթախօս է, բայց
 ինչո՞ւ աթորունք կոտորատենք... ինչո՞ւ մոռանանք, թէ Հայ
 հոգուն հայկական հէքիաթ է հարկաւոր:—

Պ. Բահաթրեանի «Առաջին ընթերցարանը» 2 մասից
 է բաղկացած, որոնցից 2-դը բացառապէս Գրիմմի հէ-
 քիաթներ է բովանդակում, եւ ամէնից առաջ այս հէքիա-
 թը, որ տեղ նստը գրեւոր մենք ենք նշանակում, ընթերցո-
 ղի առանձին ուշադրութիւնը դարձնելու համար:

ՈՍԿԻ ԱՍՏՂԵՐ

«Կար չը կար մի փոքրիկ աղջիկ. դորա հայրն ու մայրը մե-
 շտել էին:

«Նա շատ աղքատ էր. տուն չունէր, որ մէջը բնակուէր,
 ւանկողին չունէր, որ մէջը բնէր. նորա ունեցած չունեցածը իւր
 զվրայի զգեստներն էին ու մի կոբէ հաց, որ բռնած ունէր իւր յե-
 թւ որովհետեւ նա այժմ բոլորովին միայնակ էր մնացել, գլուխ
 վեր առաւ գնաց, մտածելով, որ ողորմած Աստուածը ինձ կ'օգնէ:

«Ճանապարհին նորա առաջ դուրս եկաւ մի ծեր մարդ և ա-
 սաց. „Քոյրի՛կ, փոքրի՛կ հաց տուր ինձ, ես շատ քաղցած եմ“:
 «Փոքրիկ աղջիկը իւր Բոլոր հացը տուաւ նորան ու գնաց. Գնաց,
 գնաց, նորա առաջը դուրս եկաւ մի երեխայ և ասաց. „Քոյրի՛կ,
 տուր ինձ քանակը, ի՞նչ գլուխս մտնում է“: Աղջիկը վեր առաւ
 իւր գտակը և տուաւ նորան. Եւ երբ մի փոքր ինչ էլ յառաջ
 գնաց, եկաւ էլի մի երեխայ, որ վերջին չունէր. Փոքրիկ աղջիկը
 «հանեց իւր վերարկուն տուաւ նորան ու գնաց. նորա առաջ դուրս
 «եկաւ մի աղջիկ» որ պարեգօտ չունէր իւր վերայ և ասաց. „Տուր
 ինձ քանակը պարեգօտը“, նա էլ հանեց իւր պարեգօտը և տուաւ նո-
 րան: Ի վերջոյ նա հասաւ մի մեծ անտառ: Այս տեղ արդէն սկսել էր
 զմայրաւ. յանկարծ դուրս եկաւ մի ուրիշ աղջիկ էլ և ինչո՞ւն է
 զարմանք: Առաքինի աղջիկը յարածէն արդէն մութ էր ինձ այստեղ ոչ
 ոք չի տեսնել. ես ի՞նչ շապիկս էլ կը տամ:

«Երբ նա այսպէս կանգնած էր և ոչինչ չունէր իւր հագին,
 «յանկարծ երկնքից վայր թափուեցան աստղերը մի մի ոսկե՛ դարձած,
 «Բոլոր հէք նա ստացաւ նաև նոր զգեստներ, հագնեց ոսկիները,
 «հագնեց նոր զգեստները և շատ հարստացաւ»:

Բահաթրեանի բերած հէքիաթների մէջ, սա ամէնից
 յարմարն է թարգմանութեան համար. հայերէնում այն-

պէս է կարգադրուած որ կարծես, թէ մեր մէջ էլ այսպէս բան կարող է պատմուել, բայց եւ այնպէս այս տեղ էլ կան այնպիսի նրբութիւններ, որոնք բնագրում երբէք այնպէս սուր կերպով չեն նշմարուի իբրեւ անյարմարութիւններ, որով մենք խրատ պէտք է առնենք, թէ հէքիաթի բնագրի լիզուն եւ ազգայնութիւնն էլ մեծ նշանակութիւն ունի, երբ որ նա «սաս-ցման նի-թ» է դառնում: Մենք չենք ուզում բժախնդիր լինել եւ խոստովանում ենք, թէ առհասարակ պ. Բահաթրեանի թարգմանութիւնը լաւ է, բայց մեր ասելիքն այն է, թէ գերմանականը բնաւ հայկական լինել չի կարող: Այս ինչից է երեւում մեր օրինակում: ահա—ինչից՝

Նախ ով որ առաջին անգամ է կարգում այս առակը, երեւի իսկոյն մի ներքին ազգով կիմանայ վերնագրի անյարմարութիւնը, եթէ եւ իսկոյն չընշմարէ բանի էութիւնը, որ շատ պարզ է: Ինչո՞ւ. աստղը ոսկի է դառնում, որով եւ կազմուել է «ոսկի աստղեր» վերնագիրը: Գերմաներէն կոչուած է՝ Sternthaler, որ մօտաւորապէս «աստղամանէթ» պէտք է ասենք. գերմանացոց թալերները մեր արծաթէ մանէթների պէս էին. մեր մայրերն էլ փայլուն մանէթներ ցոյց տալով, կ'ասէին, տեսնում ես երկնքի աստղի պէս է պօպղում: Այսպիսի նրբութիւնները, որով միտքը դանդաղութեամբ է ըմբռնում պատկերի ամբողջութիւնը՝ հարկաւ մեծ արգելք պէտք է լինին օտարի առակըն ուրիշ ազգութեան մանուկին ազգու անելու համար: Նարունակինք. նա «անեցած զանեցածն էր. . . հաց. այս միտքը պարզ է, որովհետեւ ունել նշանակում է՝ բռնել, բայց հէքիաթն էլի դարունակում է՝ որ բռնած անէր, այս էլ բաւական չէ, աւելացնում է ի-ր յի-ն. յայտնի է, որ ոտով չի բռնուի: Այս էլ մի օրինակ, որով միտքն արգէն տաղտկութիւն պէտք է զգայ այնպիսի աւելորդաբանութիւններից, որոնք լիզուի զարդարուն հնարներ չեն: Յետոյ՝ միթէ մեր ազբատն այսպէս կը խնդրէ ողորմութիւն: Քոյրիկ, փօքր ինչ հաց տուր ինձ: Մեր գրականական լիզուն նապակամներ չունի, ուստի եւ մեր սաղոններում:

ուր արգէն, փառք Աստուծոյ, Հայերէն է մանր, քնքշա-
կան յարաբերութիւններ կամ բնաւ չեն արտայայտու-
ած խօսքերով, կամ յայտնուած են ուսերէնի խառնուրդով,
որով Հայերէնը կողեկաղ է գնում: Մայրօրսը Հակոբակն
է անում: Երբ նա իւր որդու հետ ուսերէն է խօսում,
քնքշականներն իւր մայրենականով է ասում: Իւր բնու-
թիւնն այս տեղ իւր արիւնն է յիշեցնում: Մեր քայրն իւր
եղբօրը զոր օր. այսպէս է քնքշաբանում, որ մեր գրակա-
նական լեզուին, չենք իմանում ինչու, ճաշակաւոր բան
չի երեւում:

Եղբայր, եղբայր, ջան եղբայր,

Ջանս քեզ մատաղ եղբայր,

... Երբ այս այն ինչ է նշանակում: Կողմից գրական, Էրայ-
կաւ, Կարեւորութիւն է չէր նկատում, որ սա ոչ թէ մի
փոքր անջիկ, այլ այն կնքնէս Երբէն է, — սա կապուտ ան-
րով, չալ մնգերով հիւսիսային անխարհների բարեկիրթ աղ-
ջիկ է: Եւ ոչ թէ հարաւային սեւեռայ վայրենական Եւր-
Միացն Գերմանիայում կը լուրի այսպիսի բան, թէ գտակ-
տուր, թէ գլուխս մտնում է կարծես թէ ուրիշի գլուխը
չի մտնի: Միայն այն տեղ Կարէ չանց կ'ուզես, իսկ նա
Երբ քեզ կու տայ: Սակայն գերմանական սուրբ բարեկիրթու-
թիւնը վերջն է գալին: Աղջիկը մի ճանապարհով է գնում
եւ յայտնի չէ թէ ինչ ճանապարհով: «Ի վերջոյ նա հա-
տու մի անգամ»: Անտան որ անտեցան, իսկայն պէտք է
գիտենանք, որ ծառեր են հարկաւոր մի բան ծածկելու
համար: Սկսեց ամենամար: Մէ, եթէ մթնացաւ, էլ
տանրակոյս չը կայ, որ շատերի անկոչ անքերից մի բան
ծածուկ պէտք է մնայ: Աւարքինի աղջիկն սկսում է ամա-
ծել: Ա երջապէս էլ ինչ երկարացնենք, աղջիկը շապիկն էլ
կնորոտեանին է տալիս, կանաչ անյնապէս լեւաթ: Հայի աղ-
ջիկն ինչպէս մտայինք վայրենի է նա կը արարուի, բայց
այդպէս բան չի անի, որքան էլ որ բարեկիրթ լինի, որով
հետեւ տարա մայրը երեսը միշտ քնթկալով կ'աթաթած
ուրի, իրան էլ տարիներով արեգակ չը տեսնած ամանն են
պահպանեց որչէ ոչն լաւ է: Բայց մեր իրականութիւնն է

Եւ թէ եւ մեզ յանդիմանում են, որ Հայերս փողատք ենք, բայց մեր աղջիկը, եթէ պատահամք տկոր լինի եւ երկինքը նորան սկի եւ հագուստ պարգեւէ, նա առաջ ունի ի հաւատի եւ ապա շորեր չի հագնի, այլ անշուշտ նա ի հագնուի եւ ապա կը հաւաքէ. այս նշանով էլ շատ տարրեր են զանազան ազգերի աղջիկերը:—Սյուպիսի սխալներ անշուշտ մեր հայկական հէքիաթը չի անի, էլ չենք ասում թէ նորա միջնորդութեամբ մանուկը փոքր ինչ աւելի հայկական լէզու կ'ուսանի, եւ ոչ թէ միայն հայկական բառեր: Եթէ հայկական հէքիաթի ուրիշ հարստութիւնները չը յիշենք, գոնէ կ'սկսած չը կայ թէ նա է միակ գանձ քրիստոնէի սովորելու համար: Արգարեւ մեր գրական լեզուն գեռ կարօտ է, որ քնքաղականներն ուսանի:

Պ. Բահաթրեանի (Գրիմի) միւս առակներն աւելի խոշոր անյարմարութիւններ ունին, որոնք գոմերին դժուարութիւններ պէտք է պատճառեն, որովհետեւ պ. Բահաթրեանի խօսքերը գործածելով «երբ որ ուսուցիչը դասի նիւթը յանդիման է կայս-ցանս», աշակերտը իւր աշխարհահայեցութեամբ է իւրայայտանում» եւ վարժապետը շատ պէտք է դժուարանայ Գրիմի առակն այնպէս իւրացուցանել տալ, ինչպէս որ ինքն է իւրացուցել: Մենք պ. Բահաթրեանի հետ այս խօսքերը լաւ կը հասկանանք: Բայց պ. Բահաթրեանը հազիւ թէ լաւ հաշուով է յայտնում իւր մտքերը. որպէս զի ապացուցանէ, թէ Ժողովրդական հեղինակներն այս ու այս առակութիւններն ունին առաջին ուսուցման համար, թիւս այրոց ասում է... ինչ էք կարծում... թէ «նոցա մէջ զուտ կերպով յերեւան է գալիս ազգային ոգին», որ եւ կ'ազնւած է մահան բնաւորութեան հիմար: Մենք ուրախ ենք, որ պ. Բահաթրեանն ինքն ասում է, թէ ազգային ոգին մանկան բնաւորութեան հիմն է կազմում: Այս նշանաւոր խօսքից յետոյ մենք էլ կ'աւելայնենք, թէ նորա թարգմանած առակներն իբրեւ ազատ բնութեցանութիւն պոյրապ ժամերի համար մանուկներին տալու խորհուրդ ունի, բայց ոչ իբրեւ ուսման նիւթ:

Մենք սասցինք, թէ պ. Բաճաթրեանի Ընթերցարանն ունի նաեւ ա. մասն. ի՞նչ ասենք նորա մասին: Նորա մէջ մի քանի փոքրիկ նոր ոտանաւորներ կան «Միժեռնակի» հեղինակ Իոգոխեանի հեղինակած, որ վատ չեն: Ահա ընթերցող մի օրինակ բայց չէ՛, չէ՛ չեմ համարձակուի որովհետեւ պ. Բաճաթրեանն ասում է «Սոցա արտատպութեան իրաւունքը վերապահուած է»: Ել որտեղ կայ ժամանակ, որ իրաւունք խնդրենք. այն էլ չը գիտենք, թէ հեղինակի՞ն պէտք է դիմել խնդիրքով, թէ Ընթերցարան կազմողին, որ մեզ առաջին անգամ ընծայեց այդ հազուատես պարգեւը: Բացի այսպիսի յաւելուածների ունի եւ իւր սեփական հեղինակած կտորներ. «Ես ունիմ երկու աչք, երկու ականջ, եւ այլն. . .» գոնէ ասէր՝ ես ունիմ տասն աչք, հինգ ականջ այս անշուշտ աւելի զուարճալի եւ մի տեսակ հանելուկ կը լինէր մանուկի զբօսանքի համար: Ապա թէ ոչ տանը նա սովորում է քանի աչք ունենայը, ուսումնարանումն էլ ա՛յդ սովորի: Եթէ պ. Բաճաթրեանի կազմած Ընթերցարանի ուղղութեանն ով եւ իցէ մի գին տայ, նորան պէտք է ասենք, որ մենք այդ ուղղութեամբ, բայց աւելի ընտիր բովանդակութեամբ եւ աւելի հայկական հոգով, ունինք պ. Աղայեանից կազմած «Ուսումն մայրենի լեզուի» անունով: Պ. Բաճաթրեանի Ընթերցարանն առանձին տետրակով մի Այբբենարան էլ ունի հրատարակած, որի օրինակը մեզ արգէն Տ. Ղեւոնդեանն էր տուել, եւ ինչո՞վ էր պակաս: Ուրեմն ինչ է այս նոր մանկավարժի ծառայութիւնն այս մասում:—Մենք զժուարանում ենք ուղղակի պատասխանել, թէ եւ աւելացնում ենք, թէ քանի՞ մանկավարժ ունինք ընդ ամէնը: Ինչո՞ւ այսպէս քամու ենք տալիս մեր ոյժերը: Ինչու ամէնքն այբից ենք սկսում եւ բեն ասելու կարողութիւն չենք ցոյց տալիս, որպէս զի մի ընդհանուր շղթայակապ ուժով մի մեծ գործ կատարենք:—Բայց սորա երկրորդական բաներ էին. նոյնպէս երկրորդական բան է պ. Բաճաթրեանի մեթոդիկան «Ուղեցոյց Հայ Ուսուցչին», ուր կարգացողի համար բաւական հետաքրքիր

տեղեկութիւններ կան, եթէ հակասական բաները հաշուի տեղ չը դնենք եւ եթէ Բայնի մտքերը Յիլլերի մտքերի հետ ի միասին չը դասէր. բայց դարձեալ բարի ճանապարհ ենք ցանկանում. նորան:

Մեր գլխաւոր նիւթն ազգային ժողովրդական բանաստեղծութիւնն էր: Արդ մի՞թէ արուեստական բանաստեղծութիւն չը պէտք է լինի: Մենք մի անգամ արդէն խօսել ենք Գամառ-Քաթիպայի «Մանկական ոտանաւորների» մասին «Փորձում»: Ընթերցողը չի պահանջի, որ մեր ասածներն այս տեղ կրկնենք: Նա գիտէ, թէ ինչպէս բարձր ենք դասում մեր գրագէտ բանաստեղծներին, որոնք մեր ազգային ոգւով են երգում: Մենք այն ժամանակ արդէն ասել էինք, թէ մեր բանաւոր աւանդութեանց մէջ հատ ու կտոր անարուեստ, բայց ոսկէ, հանքեր կան, եւ թէ միայն մեր բանաստեղծները պէտք է կարողանան այդ հանքից զուտ ոսկին հանել եւ այնպէս հարստացնել մեր գրաւոր գանձարանը: Զոր օր. ի՞նչ իմաստ ունի մեր բազմահոգակ «Արեգակ», արեգակ դուրս արի, հէրն ու մէրդ. եկել են... եւ այլն»: Մենք այն ժամանակ մի կարծիք յայտնեցինք, թէ մանուկն արեգակի դուրս գալն ուղեւորով, նորան գանազան հրապոյրներով դուրս է կանչում: Այժմ *) Գամառ-Քաթիպան իւր նոր տետրակում մեզ մի այդպիսի ընծայ է տալիս՝ եւ ահա օրինակը.

Ա Ր Ե Ի

Արեւ, արեւ արի դուս,

Քեզ բերել ենք աչքի լուս:—

Քու բուրիկը լուսինկան

Բերեց չամիչ մէկ աման,

Չամիչն աչքերէս կորաւ.

Բա՛ց երեսդ, արեգակ,

*) «Մանկական ոտանաւորներ և երգեր» Գամառ-Քաթիպայի արդէն անցեալ տարի դուրս եկաւ, բայց մինչև այժմ այս ընտիր տետրակի մասին մամուլի մէջ խօսք չեղաւ. Ուրեմն գեռ էլի ուշ չէ մի բարեմաղթութիւն անել նորան:

Մէկ բուռ չամիչ քեզ կու տանք . . .
 Օ՛խ, արեւին խարեցինք,
 Ամպի տակէն Հանեցինք:

Այսպիսի օրինակներ, ուր աղգային անարուեստ փշուրներն արուեստի տակ կոկուել, բայց եւ Համն ու Հոտը դեռ էլի պահպանել են, առանց խրատելու, առանց անդրադարձութեան, ուր գործողութիւնը կատարվում եւ ոչ պատմվում է, խաբուողը խաբվում է, իսկ խափողը խափում եւ այնուհետեւ զուարճանում է նորա վերայ, — բաւական բերած է յիշեալ տետրակի մէջ:

Աւելի նուազել է մանուկներին անյարմար եւ խելքից դուրս անգրագարձութիւնը, զոր օր. «Իսկական բազդի» մէջ մի մանուկ իւր կարծածի պէս երջանիկ է ուզում լինել, բայց երբ որ մայրը մի մի թուում է, թէ ծնող, Հայաւ, բնակարան, կերակուր ունի եւ ոչինչ չէ պակաս իրան, խելօքը պատասխանում է

— Հենց այդ է, որ քնքոյշ մայրիկ,

Ինձ չէ տալիս ուրախ օր:

Որ իմ շուրջը ամեն տղայ

Ինձ նման չէ բաղդաւոր:

Ի հարկէ մենք չենք ուզում ասել, թէ այսպիսի ոտանաւորներն էլ ոչինչ արժէք չունին, բայց մենք մեծ ուժից մեծ գործ ենք պահանջում խրատ տուող բանաստեղծներ, շատ ունինք, բայց կեանքի բանաստեղծական Հանգամանքներն ըմբռնող եւ բանաստեղծօրէն նկարագրող — քիչ, Մենք գիտենք, թէ Գամառ-Քաթիպան որ կարգիցն է, ուստի եւ պահանջող ենք. թող նա մեզ ներէ:

Գամառ-Քաթիպայի բանաստեղծութեան մէջ միշտ քաղաքակրթութիւնն է խօսում, արուեստի, քաղաքի երգիչը. մենք այնքան բաղդաւոր ենք, որ մի բանաստեղծ էլ ունինք — պարզ բնութեան երգիչ. դա պ. Աղայեանցն է. Նորա փոքրիկ «Սրինգ Հոյուականը» իսկ եւ իսկ Հոյուի սրինգ է, որի տխուր մեղեդիները, իսկ երբեմն սրտի թախճի տակից բռնկած զուարճութեան խանձը, որ իսկապէս հառաչները կուլ տալու եւ ծածկելու համար է շարժվում — ուղղակի գիւղական, պարզ, անարուեստ աշխարհից

են ծագում: Ահա տուարածն ինչ զուարճաբանութեամբ է ճաշ ուտում:

Մի խամ տուարած, բաւական քաղցած
Աղբրի մօտ նստած, ուտում էր չոր հաց.

* *

— Ցամաք մի՛ ուտիր, ասաց ընկերը,

«Բա՛ ինչո՞վ ուտեմ, ուրիշ բան չունիմ»,

— Դանակով, եղբայր, դանակով կտրիր,

Ջրովը թրջիր, էլ ցամաք չիլիիր:

Բայց մեծ մասամբ սրի՛ գր տխուր ձայներ է հա-
նում. ահա մի այրիացած կնոջ նեցուկ «Ճախարակը»

Մանիր, մանիր, իմ ճախարակ, Դեռ հարս էի, որ գործեցի

Մանիր սպիտակ մալանջներ, Քանի կարպետ, խալիչա,

Մանիր թելեր հաստ ու բարակ, Բայց դրանցից շուտ զրկուեցի

Որ ես հոգամ իմ ցաւեր, Հիմա չունիմ մի քեչա:

Չուալ չունիք, չաթու չունիք, Կարմիր օրս երբ սեացաւ

Ոչ սամոտէն, ոչ պարան, Եւ պարտք մնաց թէ և քիչ,

Այսպէս աղքատ դեռ եղած չենք Պարտատիրոջ սիրտն էլ սեւցաւ

Կտրուել է ամեն բան, Եկաւ տարաւ ամեն ինչ:

Մանիր, մանիր....

Աղայեանցը միայն մեծերի համար չի գրում, այլ
մանկական պարտիզի պզտիկ երեխային էլ է զուարճաց-
նում. «Ծխոր ես բազէն» մի ամբողջ մանկական թատ-
րոն է, ուր ծխոր ծլվլում բազէն գլխին պտտում է, ծի-
տը վախից լռում է, բազէին թռցնում քշում են, եւ ապա
ամէնքն ուրախանում են, որ ծխոր բազէից ազատուեցաւ:

Ծխոր ծառին ծլվլում է.

Ծիւլ, ծիւլ, ծիւլ:

Բազէն գրլիին պտրտում է.

Վո՛յ, վո՛յ, վո՛յ:

Ծխոր լուեց, ծխոր վախեց,

Վա՛յ, վա՛յ, վա՛յ:

Բազէն թըսո, բազէն թըսո:

Հա՛յ, հա՛յ, հա՛յ:

Բազէն թաւաւ, բազէն թաւաւ:

Բազէն փախաւ:

Ի՛նչ լաւ էլաւ.

Հէ՛հ հէ՛հ հէ՛հ:

Ծիտիկ միտիկ, պի՛ծիկ միծիկ,

Պըտպըտուրի՛կ, չըլպըլտուրի՛կ,

Դու լաւ պրծար չար բազէից

Սուր ճանկերից. հա՛հ հա՛հ հա՛հ:

Աղայեանցի մասին ընդհանրապէս կարելի է ասել, թէ երբեմն ինքն իւր ձիրքից ուրանում է եւ ուսուցանել է ճգնում: Նա եթէ մի երկու կտոր բան բանաստեղծական յափշտակութեամբ գրէ, երրորդն անպատճառ իւր (աժանագին) քարոզչականութեան է նուիրում: Տէնդենցիան եւ բանաստեղծութիւնը մէկ մէկու հետ չեն հաշտը վում: Այդպիսի բան կարդալով՝ մենք միշտ յիշում ենք Գամառ-Քաթիպայի նկարագրած հայկական դօնկիշոտութիւնը՝

Հայկ ու Նապօլէօն մի գռօշի համար

Սաստիկ կոշտ խօսքեր սասցին իրար.

Հային ունէր հրացան, Նապօլէօնն աղեղ.

Ո՛վ յաղթեց, Անշուշտ մեր Հայկը ահեղ:

Մենք այդ նկատողութիւնն անելով, էլ օրինակ չենք բերի՝ այլ աւելի մի այնպիսի օրինակ կը բերենք, ուր Աղայեանցի կատարեալ հանճարն է երեւում: Ահա կարգադէք նորա «Աստուծոյ հանաքը»:

«Մէկ անգամ Աստուած վերևից կանչեց եւ մարդկանց յայտնեց, թէ այսուհետև ձեզ չեմ օգնելու, անձրեւ չեմ տալու:

Հէնց այս որ ասեց, աղբիւրը լոցեց, առուն ցամաքեց, վարդը թառամեց, անտառը դեղնեց, դաշտը սեւացաւ, մարգը սփրթնեց, արտը չորացաւ, անասուն եւ մարդ, թռչուն եւ գազան սաստիկ երկիւղից ուշաթափ եղան:

Աստուած որ տեսաւ, թէ ինչ բան եղաւ, ծիծաղը եկաւ և ծիծաղեցաւ: Բայց ի՛նչպէս ծիծաղ... Այնպէս որոտաց, որ երկինք գետինք թնդաց, գըրդաց, ամպերը իրար այնպէս զարկուեցին, որ փայլակ, կայծակ, շանթեր հանեցին, Երկինքը մթնեց, յորդ անձրև թափեց, նուազածներին թրջեց ողողեց և ուշքի բերեց:

Եւ այնուհետև սար ու ձոր զարթարուեց, աղբիւրը քլքլաց, շուշանը ծաղկեց, առուն քրչքրչաց, արտը կանաչեց, արտուտը երգեց, աքլարը կանչեց, հաւը ձու ածեց, մաքին գառ ծնեց, Գառը մորթեցինք Աստուծոյ համար, որ մեզ ինայի էլ հանաք չանի»:

Աղայեանցը մի գեղեցիկ սկզբնաւորութիւն էլ է արել, որ ամենայն համակրութեան արժանի է: Մենք մանկական աղօթքներ չունինք, եւ ահա նա մի գեղեցիկ օրինակ է տալիս: Այժմ, երբ Աեհափառի խնամքով աւետարանն աշխարհաբար է թարգմանվում, մեր կեանքը մի նոր զարկ պէտք է ստանայ կրօնական եռանդով, եւ ինչ որ մինչեւ այժմ հին լեզուով է յայտնուել, այժմ կարիք կայ կենդանի լեզուով բարբառել: Այս նոր ձգտման մէջ ուսումնարանն ու մանուկները յետ չը պէտք է մնան: Կեցցէ՛, Աղայեանը: —

Բայց Աղայեանցն արդէն լուսաւորուել է, նա էլ լայազ չի անում իւր առաջուայ պարզութիւնը. նա այժմ խաղեր, հանաքներ է խաղում մեր գլխին եւ հանդիսաւոր կերպով յայտնում. «Արտատպելու իրաւունքը վերապահուած»:

Այս անշուշտ գրաշարի սխալը պէտք է լինի: — Ուրեմն վերջացնենք, ի սրտէ աւելացնելով, թէ ով որ կամենում է իւր զաւակներին անկեղծ ուրախութիւն պատճառել, թող մի քանի կոպէկ չը խնայէ եւ Գամառ-Փաթիպայի ու Աղայեանցի յիշեալ տետրակները ձեռք բերէ:

Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ

Ֆիզիքական, ժողովրդագրական եւ քաղաքական աշխարհագրութիւն Հայաստանի, ծեւնարկ հայ տղայոց եւ օրիորդաց ուսումնարանների համար, աշխատախրեց Աւետիք Տէր Յակոբեանց ուսուցիչ Հայաստանի աշխարհագրութեան Տիփսուս Ներսիսեան Հայոց ազգային հոգեւոր դպրանոցի, Տիփսիս 1881.

Հայաստանի աշխարհագրութիւնն իբրեւ դպրոցական առարկայ վերջին ժամանակներս մտաւ մեր մէջ: Բայց այդ չի նշանակում, որ մինչեւ ցարդ Հայերը հետաքրքրուած չեն իրանց աշխարհագրութեամբ եւ ձեռնարկներ եղած չեն:

Մեր նախնիք մի առանձին սէր եւ ձգտումն ունե-
նալով գէպի պատմական ուսմունքները գեւորատ հին
ժամանակներից ուշադրութիւն են դարձրել եւ աշխարհ-
հագրութեան վերայ Բանիս ասպնոյց Սուխես Խորենացոյ
աշխարհագրութիւնը եւ դարից կամ Վարդան Բարձր-
բերդցոյ աշխարհագրութիւնը Վ. Գ. դարից որոնք եւ
Հայաստանի հնախօսական աշխարհագրութեանն ստատ
նիւթ ընծայելով ծառայել են իբրև հիմք նորագոյն աշ-
խարհագրագէտների սոցա կարգում անդրանիկ տեղը
բռնում է հ. Ինճինճեանը Վենէտիկո Միթիթարեան միա-
բանութիւնից որ երեք պատկառելի երկասիրութիւններ
թողեց մեզ մէկը Հնախօսութիւն Հայաստանի միւսն Բնդ-
հանուր աշխարհագրութիւն եւ երրորդը Ստորագրութիւն
հին Հայաստանի առաջինն եւ երրորդը Հայաստանի հին
աշխարհագրութեանն են վերաբերում իսկ երկրորդը որ
III հատոր քիրք է յորովանդակում է իւր մէջ մի մասն
վերաբերեալ Հայաստանի արդի նկարագրութեանը Բոցն
համառօտութիւնն է Վենէտիկո լոյս տեսած Վաշարհա-
գրութիւն հին եւ նոր Հայաստանի գրքոյին արեւմտ-
եան—աշխարհաբառ լեզունով յոր եւ փոքրիկ քարտէզով
այդ գրքոյին է եղել մինչեւ ցայժմ դպրոցական ձեռնարկ մի
բանի տեղերում Վենէտիկո Միթիթարեան միաբանութիւնը
հրատարակել է նաեւ Հայաստանի աշխարհագրոյց քարտէզ-
ներ փոքր եւ մեծ։ Նորագոյններից նշանաւոր է հ. Սլի-
շանեանի պատկերազարդ Բնդհանուր աշխարհագրութիւնը
որի մի մասն է «Տեղագիր Հայոց մեծաց» գրաբառ լեզունով
մի նկարագիր արդի Հայաստանի եւ շատ ընտիր գործ
ունի իրան կից եւ մի փոքրիկ քարտէզ Վերջին տարիներս
լոյս տեսաւ Կ. Պոլսում եւ մի այլ ձեռնարկ ընդհանուր
աշխարհագրութեան որի մէջ բաւական նշանաւոր տեղ
է բռնում եւ արդի Հայաստանի նկարագրութիւնը։

Քաղաքացի աշխարհագրութիւններն ինչպէս հին Հայաս-
տանի հետ գործ ունին անոյնպէս եւ նոր քաղաքացի
ընդհանուր նախապնդն երեւում է յոչ այն որ մի ճիակա-
ւանք գաղափար տան Հայաստանի մասին այլ որ կենդան

նացնեն Հայոց հնութիւնը եւ յիշեն միմիայն անցեալի
 գեղեցկութիւնն եւ փառքը. այս պատճառով նոցա երկա-
 սիրութիւններն ունին հնախօսական բնաւորութիւն. գրա-
 բառ լեզուով գրած՝ նոցա մեծ մասը մատչելի է միայն
 ուսումնականներին. մանրամասն հետազօտութիւններով
 եւ ենթադրութիւններով ճոխացած՝ նոցա մեծ մասի բո-
 վանդակութիւնը կորցնում է իւր կենդանի ժամանակա-
 կից նշանակութիւնը եւ մնում է միայն բաժին տառա-
 կրկիտ հնախօսների. Այդ աւելի աչքի է ընկնում, երբ
 մենք հանդիպում ենք նոցա մէջ հին քաղաքական բա-
 ժանումներին. նոցա անուանակոչութեանն եւ տեղագրու-
 թեանը. այնտեղ հինը շփոթվում է նորի հետ եւ խնդրի
 հետաքրքրութիւնը փոխադրվում է դէպի վերացակա-
 նութեան սահմանները. Ահա այս է պատճառը որ Հայաս-
 տանի աշխարհագրութեան ուսումը, չընայելով որ մեր հայ-
 րենի աշխարհին է վերաբերում, առաջ չէ գնացել մեր
 մէջ, իսկ մեր մանուկներն աւելի շատ տեղեկութիւն ու-
 նին Կաթրերի կամ Գոտտէնոտների երկրի մասին քան
 իրանց բնագաւառի. Սի հանգամանք եւս առաւել ծան-
 րացնում է մեր ասածի նշանակութիւնը. մեր պատկա-
 ռելի աշխարհագրագէտները հիմնել են իրանց ուսումնա-
 սիրութիւնը ոչ թէ անմիջական ծանօթութեան վերայ,
 այլ քարտէզների եւ ճանապարհորդների ցուցման վերայ.
 նոքն Հայաստանի երեսը տեսած չեն. Հայ ժողովրդի
 վիճակը դիտած չեն. նոցա համար Հայաստանի այժմեան
 գաղափարը նոյնչափ վերացական է, որչափ մեծ է նոցա
 երեւակայութեան մէջ Հայոց հին նահապետների եւ թա-
 գաւորների Հայաստանը. Սյունեղից հետեւում է այն որ եթէ
 մենք նոցա աչքով նայելու լինինք մեր այժմեան հայրե-
 նիքի վերայ, չարաչար պիտի մոլորուինք. Իսկ ինչ որ կը
 վերաբերի գարրոցական շրջանին, այնտեղ եւս առաւել
 սխալ կը լինի բացառապէս նոցա ձեռնարկներով առաջ-
 նորդուել, թէ եւ հ. Այլշանի Տեղագիրն եթէ գրաբառ
 չըլինէր, փոքրիշատէ կը ծառայէր մեր պահանջներին մին-
 չեւ լաւագոյնի հանդէս գալը. Անցեալ տարի աւելացաւ

եղածների վերայ եւ այն ձեռնարկը՝ որի անունը վերելք խորագրի մէջ յիշուեցաւ. արեւելեան աշխարհաբառով գրուած, ժամանակակից դասագրքերի ձեւով կազմած՝ այդ ձեռնարկը բաղկացած է 172 երեսից, ունի եւս առանձին քարտէզ) պատրաստուած է «տղայոց եւ օրիորդաց ուսումնարանների համար». թէ եւ աշխարհագրութիւնն հրեք տեսակի է բաժանուած՝ ֆիզիքական, ժողովրդագրական եւ քաղաքական, բայց բոլորի ընդհանուր յատկութիւնն այն է, որ պատկերացնում է մի խառնուրդ հնի եւ նորի, անցեալի եւ ներկայի, դրականի եւ ենթադրականի: Այդ երեւում է հետեւեալներից. ա) անուններն երկու տեսակ են պատահում՝ հին եւ նոր, օտար եւ ազգային, կամաւոր թարգմանուած եւ պատահաբար նշանակուած. դորօրինակ Բարդոզ (Քաքեալթու) թէ եւ միեւնոյն սարի անունն չեն դոքա, այլ դանազան. Մնձուր շղթան ներկայումս ի՞նչ անունով է կոչուում, չըկայ յիշած. Ծաղկոց (Ալա-դաղ) լեռներ հնումը չըկան, այլ Ծաղկեայ լեռն. Ծիրանի (Բիրեջու), Կապոյտ (Գեօգ-դաղ) կամայական անուանակոչութիւններ են, տարակուսելի է դոցա նոյնութիւնը. Գարւոյ գետ (Արփաչայ) ազատ թարգմանութիւն է, հնումն այդպէս անուն չըկայ. Տէր-Տէր գետ չըկայ, այլ Քարթաւ է նորա անունը եւս այն եւսյն:

բ) բաժանումներն արդի Հայաստանինը չեն. Մեծ Հայաստան, Փոքր Հայաստան, Կիլիկիա, Հայոց Միջագետք ներկայումս պատմական հնախօսական անուններ են. նմանապէս աշխարհագրութեան ամբողջ քաղաքական մասը 130 երեսից մինչեւ 172 երեսը բոլորովին գաղափար չի տալիս ներկայ դրութեան մասին, այլ դա մի տարօրինակ նկարագիր է հնի եւ նորի, որ միմիայն գրքի ստուարութիւնն է աւելացել. որովհետեւ բովանդակում է միմիայն հին գաւառների անուանակոչութիւնը եւ նոցա իբրթէ այժմեան տեղը, նկարագիրը եւ այլն:

գ) ամէնից կատարեալը ժողովրդագրական մասն է. այստեղ եւս արդի ժողովրդին շփոթում է հնի հետ:

«Հայոց ազգը...կազմուած են երկու տարերց միաւորութիւնից, տեղական բնիկներից եւ եկաւոր նուաճողներից» ասում է ձեռնարկը եր. 89. Եթէ չըշարունակենք այդ տողերը կարգալով առաջ գնալ: պիտի կարծենք, որ ճաճիկը: Պարսիկն եւ Ռուսը, որոնք նուաճողներն են, նոյնպէս Հայոց ազգ են, ինչպէս Հայերը, որոնք բնիկներ կամ նուաճուածներ են: Իսկ եթէ շարունակենք կարգալ, նոյն երեսում կ'իմանանք, որ բնիկը կամ տեղականը «Ջրհեղեղից յետոյ այդ երկրում բազմացած մարդկութիւնն» է, իսկ եկաւորն էր Հայկ դիւցազն եւ այլն»:

Ինչպիսի շփոթութիւն, որ ներելի չէ աշակերտների ձեռքը տալու դասագրքի համար, մանաւանդ որ արգի Հայոց ազգի ծագումն այդպէս բացատրելը նոր գիտութեանը հակառակ գնալ է նշանակում:

Այսպիսի երեւոյթները շատ են, միմիայն վերելի օրինակներով բաւականանանք:

Նշանակած կէտերի մէջ որքան պակասաւոր լինէր, տանելի կը լինէր, եթէ իբրեւ դասագիրք համապատասխան լինէր ներկայ պահանջներին: Չընայելով որ արտաքին ձեւով միանգամայն պատշաճաւոր բաժանումներ ունի, ներքին դասաւորութիւնը շատ խառն է եւ անբնական:

ա) Ճիզիքական աշխարհագրութեան մասում հարկ չըկայ բացատրելու Հայաստանի տեղը ազգի, կրօնի, լեզուի եւ այլն նշաններով, քանի որ այդ երկիրն իբրեւ մի մասն ընդհանուր երկրագնդի ունի իւր որոշ բնական եւ աստղաբաշխական տեղը եւ սահմանները. պէտք էր միջոց տալ աշակերտին այդ տեղն իմանալու: Նմանապէս հարկ չըկար նոյն մասում բացատրելու Հայաստանի անունն եւ այն էլ վերջերում այնքան մանրամասն լեզուագիտական ենթադրութիւններով. հարկ չըկար Հայաստանի քաղաքական սահմանները յիշել նոյն մասում եւ այն էլ մեծ մասամբ մեռած հնախօսական անուններ մէջ բերելով, որոնց հետ աշակերտը հազիւ ծանօթ է:

բ) մակերեւոյթի նկարագրութեան եզանակը մեր կարծիքով շատ սխալ է. սկսած է լեռներից եւ ստէպ

ստէպ յիշվում են գետերի կամ այնպիսի տեղերի անուններ, որոնք տակաւին յայտնի չեն աշակերտին. զորօրինակ «Մնձուր... Հարաւ գնալով Հասնում է մինչեւ երկու եփրատների միանալու տեղը» եւ այլն եր. 14. իսկ եփրատի հոսանքը՝ նորա միանալու տեղը դեռ նկարագրուած չեն. «Գարունյ լեռներ ձգվում են Գեղարքունեաց լեռներից դէպի հարաւ մինչեւ Գողթն գաւառը Արաքսի ուղղութեամբ» եր 15. Ի՞նչպէս իմացաւ աշակերտը Գողթըն գաւառի տեղը (որ այժմ չըկայ) եւ Արաքսի ուղղութիւնը. այսպիսի օրինակներ շատ կարելի է թուել. դռքա ապացուցանում են խառնակ դասաւորութիւն եւ սիստեմայի պակասութիւն:

գ) Գասագիրքն ունի գլխակարգութիւն. իւրաքանչիւր գլխակարգութեանը յաջորդում է մի նոր բաժանումն. միեւնոյն բառը միեւնոյն անունը մի քանի անգամ կրկնվում է՝ որ խորհուրդ չունի. զորօրինակ «Հայաստանի Տակերեայն» վերտառութիւն. յետոյ գալիս է նկարագիր «Հայաստանի Տակերեայն խիստ եւայլն», անպա գալիս է մի նոր վերտառութիւն «Մեծ Հայաստանի մակերեւոյթը», «Մեծ Հայաստանի լեռները», «Փոքր Հայաստանի լեռները» եւ այլն եւ այլն. նոյն կարգով կրկնվում են նոյն խօսքերն եւ նկարագրի մէջ: Եթէ այսպիսի կրկնութիւնները եւ վերակրկնութիւնները մազելու լինինք, քաւական կը պակասի գրքի ստուարութիւնը:

դ) Գասագրքի պակասութեանն է վերաբերում եւ այն մասը, որով վերջանում է ֆիզիքական աշխարհագրութիւնը, եր. 74—82. «Երկրի կազմութեան ազդեցութիւնը ժողովրդական եւ քաղաքական կեանքի վերայ», «Երկրի կազմութեան ազդեցութիւնը ժողովրդական կեանքի վերայ», «Երկրի կազմութեան ազդեցութիւնը քաղաքական կեանքի վերայ» այս վերտառութիւնների ներքեւ բովանդակուած նկարագիրը՝ որքան եւ կարեւոր է, բայց դասագրքի նիւթ չէ, քանի որ մտքերի մեծ մասը կարծիքներ եւ ենթագրութիւններ են, քանի որ այդ մտքերն ու կարծիքները պիտի ծագեն աշակերտի մէջ, երբ նա ինքն պշ-

խարհագրութեան միջոցով ծանօթացած լինի երկրին եւ ժողովրդին եւ այնպէս եզրափակութիւն անէ, այլ ոչ իբրեւ դաս լսելով եւ սերտելով եւ այն էլ այդքան կիսակատար եւ անկայուն կերպով:

Զընայելով բոլոր այս պակասութիւններին՝ որոնք հարեւանցի միայն մենք ցոյց տուինք, չենք կարող չըլայտնել հրապարակով մեր անկեղծ համակրութիւնն այդպիսի մի աշխատութեան: պ. հեղինակը չէ խնայել իւր ջանքը կարելի եղածին չափ ամփոփելու այն ամէն տեղեկութիւններն ինչ որ իւր ձեռքի տակ գտնուած աղբիւրներից կարող էր քաղել եւ յարմարացնել աշխարհաբառ լեզուով մի ձեռնարկի համար: Միեւնոյն ժամանակ ունինք ասելու եւ այս, որ տակաւին աղբիւրներից շատերը պէտք է վերաստուգութեան ենթարկուին: շատերից պէտք է զգուշութեամբ քաղել, իսկ կան եւ այնպիսիները՝ որոնք մտած չեն հեղինակի ուսումնասիրութեան շրջանի մէջ: Անշուշտ ժամանակն եւ պ. հեղինակի՝ աչալըջութիւնը կ'ուզզեն հետզհետէ այդ թերութիւնները, այն ժամանակ իհարկ է այդ գասագիրքն իրաւունք կ'ունենայ աւելի բարձր յարգանքի: Իսկ մենք աւելորդ չենք համարում յարակցել այս տողերին մեր համեստ կարծիքը Հայաստանի աշխարհագրութեան դասերի մասին առհասարակ:

ա) Մեր կարծիքով նպատակ չունի դպրոցական, շրջանի մէջ աւանդել աշակերտին Հայաստանի հին աշխարհագրութիւնը. աչքի առաջ ունենալով այն մանկավարժական սկզբունքը, թէ պէտք է առաջնորդել աշակերտին մօտիկից դէպի հեռուն, ծանօթից դէպի անծանօթը, գիւրինից դէպի դժուարինը, աւելի օգտաւէտ է երեւում մեզ ծանօթացնել աշակերտներին Հայաստանի արդի դրութեան հետ, որ եւ աւելի կարեւոր է մեզ գիտենալ քան հինը. մտնաւանդ որ հինն առանց նորին բնաւ չի կարող կապուել մեր կեանքի հետ եւ կարծես թէ մի առնուպէլական կայութիւն է հանդիսանում մեր աչքին:

Արդի աշխարհագրութիւն ասելով մենք պէտք է հասկանանք ժամանակակից Հայերի մեծ մասի բնակութեան երկի-

րը, որ նոյն իսկ հին Հայաստանն է, այդ երկրի ճիշտ նկարագիրն այնպէս ինչպէս ներկայումս կայ թէ բնականը եւ թէ քաղաքականը: Հնի նկարագիրն այնքան կարող է բովանդակուել գորա մէջ, որքան նա պահպանել է իւր կենդանութիւնը ներկայումս եւ ունի նշանակութիւն երկրի արդի դրութեան պատկերացման մէջ.

Հայաստանի արդի նկարագրութեանը նշանակութիւն տալով՝ անշուշտ մենք ինկատի ունինք դորանով կապել կրթուող սերունդը ժամանակակից հայրենիքի դրութեան հետ. կրթուող սերունդը պէտք է ճանաչէ իւր հայրենիքի վիճակն այնպէս ինչպէս ճանաչում է իւր մայրենի քաղաքի կամ տան վիճակը. այս կարեւոր է դպրոցներում մանաւանդ այն պատճառով, որ շատ դպրոցներ Հայոց հայրենիքից դուրս օտար երկրներումն են եւ շատ մանուկներ Հայ գոլով հայաստանցի չեն. նոցա անծանօթ են Հայաստանի բոլոր պարագաները, իսկ մի այդպիսի ուսումնասիրութեամբ նոցա մէջ կը մրտնի պատշաճաւոր ճանաչողութիւնը:

Արդի աշխարհագրութիւնն ունի եւ մի առաւելութիւն. այն է, որ կարելի է քարտեզ պատրաստել, շատ տեղերն անձամբ գիտել եւ կենդանին իբրեւ կենդանի ճանաչել. Մինչդեռ այդ յարմարութիւնը չունի Հայաստանի հին աշխարհագրութիւնը. ուր շատ խնդիրներ պարզ չեն եւ երկար քննութիւնների ու վիճաբանութիւնների ենթակայ են:

բ) Մեր կարծիքով Հայաստանի արդի աշխարհագրութիւնն ուսուցանել կարելի է այսպէս. նախ՝ կազմել տալ մի ցանց. պակաս կամ աւելի ճշտութեանն այստեղ շատ մեծ նշանակութիւն տալու չէ. ցանցի վերայ նշանակել տալ միջօրէականի եւ զուգահեռականների աստիճանները. ապա որոշել աստիճաններով Հայաստանի ուսմանները. թղթի վերայ Հայաստանի ընդհանուր ձեւակերպութիւնն այսպէս հասնելուց յետոյ՝ գծել տալ գլխաւոր գետերը երասխ, Կուր, ձորոխ, Եփրատ եւ Տիգրիս, իւրաքանչիւրի գծելու ժամանակ ցոյց տալ թէ ի՞նչ ուղղութեամբ են

ընթացումը նորա մինչեւ իրանց խառնարանը. յետոյ գծել տալ գլխաւոր լճերը նոյն ձեւով. գետերի եւ լճերի սահանքը ցոյց տալուց յետոյ պէտք է պատկերացնել նոցա հովիտները՝ նկարելով իւրաքանչիւրի մէջ մտնող վտակները եւ նոցա ծագման վայր ճանաչուած լեռներն այնպիսի ճանապարհով ինչպէս ուղեցոյց են լինում գետերը: Այս ամէնից յետոյ հեշտ կըլինի որոշել նոցա շրջապատող մանրամասնութիւնները, այսինքն մանր կամ կողմնակի գետակները, լճակները եւ լեռները: Ապա պէտք է ցոյց տալ ցանցի վերայ Հայաստանի բարձրաւանդակների եւ դաշտավայրերի տեղը եւ մտաւոր բարձրութեան թուերը. սորանով ամէն մարդ գաղափար կ'առնի Հայաստանի մակերեսային վերայ, որ նորա կլիմայի պայմաններն է որոշում: Ուրեմն անմիջապէս հետեւելու է կլիմայի նկարագիրը, որ իւր կարգով որոշում է բուսականութեան, կենդանիների, հանքերի, բնակիչների եւայլն վիճակը: Այս վերջինները տեղագրելուց եւ բացատրելուց յետոյ կարելի է ընտրել Հայաստանի բնակիչներից Հայերին եւ նկարագրել նոցա թիւը, լեզուն, կրօնը, պարապմունքը, սովորութիւնները, դասակարգերը եւայլն. ապա ցոյց տալ Հայաստանի արդի քաղաքական եւ եկեղեցական վարչութիւնների նկարագիրը. քաղաքական բաժանումները պատկերացնելուց յետոյ՝ մաս մաս նկարագրել իւրաքանչիւր տէրութեան մէջ գտնուած կուսակալութիւններն իրանց քաղաքներով, բերդերով, վանքերով, դպրոցներով, ժողովրդական կենցաղավարութեամբ եւայլն եւայլն. այսպիսով կը վերջանայ եւ գասընթացը:

գ) Այս ձեւով կարելի է պատրաստել եւ ձեռնարկ աշակերտների համար. իհարկ է սա պէտք է բովանդակէ իւր մէջ որոշ եւ ճիշտ տեղեկութիւններ, գիտութեան յայտնի եղածի չափ անփիճելի մտքեր եւ գիտելիքներ. եթէ ձեռնարկի մէջ սորա հակառակը նկատուի, այն ձեռնարկ չէ, այլ մի շարագրութիւն: հետազօտութիւն, բանակուիւ, որն աշակերտի ձեռքը տայն աննպատակ է եւ վնասակար: Ուսուցիչների համար կարելի է եւ պէտք է կազմել

մի ժողովածու որ բաժանդակէ իւր մէջ իսկական հաստուածներ զանազան ճանապարհորդութիւններից մասնաւոր յօդուածներ եւ հեղինակութիւններ հայագէտների եւայլն: Աւսուցիչն այդ պիտի ժողովածուից կարող է օգտուել իւր եւ աշակերտի համար: Եւ այդ բաւական կը լինի:

4. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ. ՀԱՅՈՑ ԾԻԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐ. Գաբր. Խաթիսեանի. Մասն Ա. Թիֆլիս. Գրէն է 60 էսպ: Այս վերնագրով մի գրքոյկ է հրատարակել Պ. Խաթիսեանը Գէորգեան ճեմարանի յայտարարութեան (մեր ուսումնարանների համար ընդհանուր ծրագիր կազմելու նպատակով) եւ առաջիկայ Ընդհանուր Հայ Ուսուցչական Ժողովի առիթով: Մի ուրախալի երեւոյթ է որ մեր մանաւանդ մանկավարժական գրականութեան ամացի ասպարիզի վերայ մի աշխատութիւն է երեւում որ մեր գարոցական հարցերը զարթեցնելու եւ նոցա փրճուելու ձգտումն ունի: Թէ որչափ յաջողուել է պարոնին այդ կրտսնենք: Եթէ մինչեւ անգամ երեւի, որ այդ էական եւ օրակարգի անցած հարցերը գոհացուցիչ կերպով չեն լուծուած եւ պարոնի ցոյց տուածովն ուղղակի ոչինչ գործնական հետեւանքի չէ կարելի հասնել այնու ամենայնիւ պէտք է շնորհակալ լինել որ դա այդ հարցերը զարթեցրել է եւ մանաւանդ շտապել է Ընդհանուր Ուսուցչական Ժողովի կայանալուց առաջ լայն ընծայել իւր խորհրդածութիւնները եւ հայեացքները մեր ծխական ուսումնարանների ներկայ դրութեան եւ ցանկալի վերակազմութեան կամ բարեկարգութեան վերաբերութեամբ որպէս զի այն հարցերը հայեացքները կամ առաջարկութիւններն ընդհանուր խօսակցութեան առարկայ չլինելով մի գործնական արդիւնք ստացուի եւ մեր ազգային ուսումնարանը անտեղի զրպարտութիւններից ու կառ-

կաճանքներից—իբր թէ մեր ծխական ուսումնարանն իմաստակ պրօլէտարիատ է առաջացնում, ուրեմն վնասակար է: Հետեւաբար աւելի լաւ է որ չլինէր այնպէս, ինչպէս որ մինչեւ այժմն է—ազատուի եւ ցանկալի ու իրագործելի նպատակը պարզ որոշուի:—

Պարօնը քննութեան է ենթարկում հայոց ծխական տղայոց թէ օրիորդաց ուսումնարանների նպատակը, նոցա դուրսիւնը, ուղղութիւնը, ծրագիր է առաջարկում, ցոյց է տալիս դասատուութեան, եղանակներ, դիպաքսիկական կանոններ, զարթեցնում է գործնական արհեստական պարապմունքների (профессиональное образование) հարցը եւ ընդունում է գիւղական տղայոց եւ աղջկանց, քաղաքային տղայոց եւ աղջկանց ուսումնարաններ:

Ծխական ուսումնարանի նպատակը պէտք է լինի պարօնի կարծիքով «զանազան մտաւոր եւ գործնական պարապմունքներով տալ կանոնաւոր աշխատանքի կանոնաւոր ուղղութիւն, բանալ ու վարժել երեխայի գատողութիւնը, կրթել նորա ուշագրութիւնը եւ նորա դիտողական ընդունակութիւնը, եւ միեւնոյն ժամանակ զարգացնել նորա զգացմունքը եւ սիրտը եւ նորա զանազան հոգեկան սյօթերը: կրթել նորան մտաւորապէս, բարոյսպէս եւ հոգեպէս, եւ զօրացնելով երեխայի մէջ ճշակ դէպի ուսումն հաստատել նորա մէջ սէր դէպի աշխատանք, տալով նորան միեւնոյն ժամանակ ամենահարկաւոր տեղեկութիւններ ամենահարկաւոր գիտութիւններից մէկ խօսքով տալ երեխային միջոցներ եւ զարգացնել ու հաստատել նորա մէջ ամէն այն յատկութիւններու հիմունքը ու սկզբունքը, որոնք հարկաւոր են նորա ապագայումը բարեխիղճ աշխատող ու գործող մարդ, արժանաւոր ընտանիքի գլուխ ու հասարակութեան արժանաւոր անդամ դառնալու» (էջ 3): Իսկ օրիորդաց ուսումնարանի համար ստում է «ծխական ուսումնարանը պիտի կարենայ պատրաստել աշխատասէր ու գործօն աղջիկ, արժանաւոր կին, քնքոյշ ու խելացի մայր: Հմուտ ու արի տանտիկին, ու համարակութեան զօրեղ ու նշանակւոր անդամ:»

Ինչպէս ընթերցողը հեղինակի մէջ բերած խօսքերից տեսնում է, նա ցանկանում է, ինչպէս առհասարակ ընդունուած է ասել, ընդհանուր կրթութիւն, բայց ոչ ձեւական, կամ վերացական, այլ գործնական ուղղութեամբ: Բայց եթէ այսպէս է, ուրեմն անհասկանալի է, ինչու պ. Խատիսեանը մի տեսակ կաստայական սկզբունք է կամենում ընդունել: Գոնէ չորս տարուան դասընթացով (8—12 կամ 14 տարեկան երեխանց համար ծրագրի գլխաւոր հիմունք է դնում, որ «ամենայն որեւիցէ ուսումնարանի համար ծրագիր կազմելուց առաջ ամէնից առաջ պէտք է ճիշտ որոշած ու վճռած, թէ հասարակութեան որ դասակարգից եւ շրջանից մտնելու են երեխաները աշակերտելու: այն ուսումնարանը, եւ որ շրջանը վերագառնալու են այն ուսումնարանից դուրս եկած աշակերտները:»

Պարոնք տժգոհ է մեր ծխական ուսումնարանների տուածովը. բայց իւր առաջարկածն էլ միանգամայն անիրագործելի բան է: Ով որ քիչ շատ մօտ է ուսումնարական գործին, գիտէ, ինչ բան է ծրագիր ասած բանը, իսկոյն կը համոզուի, որ այն, ինչ որ առաջարկում է պ. Խ. ոչ թէ չորս, այլ համարեա ութ տարուան գործ է, այսինքն միջնակարգ դպրոցների ծրագիրը տալիս է ծխական դպրոցներին: Թրինակի համար առենք բնական գիտութեանց ծրագիրը, որ ամէնից մանրամասն մշակուածն է երևում: Նա պահանջում է որ բնական գիտութիւններից—կենդանաբանութիւնից, բուսաբանութիւնից, հանրաբանութիւնից, ֆիզիկայից, քիմիայից,—այնքան անցնին, որ առաջին հրեք տարուան ընթացքում (8—12 տարեկան աշակերտները) «լաւ ծանօթանան ընդհանրապէս բնութեան ամենագլխաւոր առարկաներու եւ երևոյթներու հետ»: վերջին, այն է չորրորդ տարուան ընթացքում «բնական գիտութեան դասատուութիւնը զանազան տեսակ ծխական ուսումնարաններու մէջ պիտի ստանայ նոցանից իւրաքանչիւրին յատկացեալ բնաւորութիւնն, այն է գիւղատնտեսական—

գիւղերում՝ արհեստագիտական—քաղաքներում՝ իսկ օրիորդաց ուսումնարաններում—առողջապահութիւն, մանկապահութիւն, տնային տնտեսութիւն, հաշուապահութիւն» եւ այսպէս պատրաստուած երեխան, պ. Խ. կարծիքով՝ «կը սովորի կարգալ այն ամենամեծ գիրքը՝ որ է ինքը բնութիւնը» էլ ոչ մէկ ժամանակ եւ ոչ մէկ տեղ չէ կարող մնալ անգործ ու պարապ, նորա համար էլ չի լինելու տաղտկութիւն, պատճառ որ այն գրքի թերթերը ամեն տեղ եւ նորա ամեն քայլի վերայ նորա առջեւը բաց են։»

Որքան ինձ յայտնի է, ոչ մի տեղ, մանաւանդ ընդհանուր կրթութիւն մատակարարող ժողովրդական ուսումնարաններում 4 տարուան դասընթացով, ասել է տարրական դպրոցներում, այնքան բան ոչ սովորեցնում են եւ ոչ էլ կարելի է սովորեցնել որքան էլ ուսումնարանը մեծ միջոցներ, պատրաստուած ուսուցիչներ ունենայ։ Յայտնի է որ այդ ժամանակ բնական գիտութեանց տեղ անցնում են նկատողական կամ դիտողական ուսումը, այն էլ մեծ մասամբ ձեւական կրթութեան գիտամար, որի նպատակն է աշակերտի ընդունակութիւնը զարգացնել։

Եթէ աւելայնենք սորա վերայ եւ այն, որ պարօնն ընդհանրապէս ընդունուած լեզուներին եւ առարկաներին այն է՝ կրօն, թուաբանութիւն, բնական գիտութիւն, աշխարհագրութիւն, ազգային պատմութիւն, Հայոց լեզու, Ռուսաց լեզու, վայելչագրութիւն, երգ, գծագրութիւն, մարմնավարժութիւն, իրանց վայելուչ տեղն է տուել իւր ծրագրի մէջ, եւ մտցրել է նոյնպէս, իբրեւ մի փրկարար նորութիւն—գործնական պարապմունք (քաղմատեսակ արհեստների), պէտք է համոզուենք, որ ծրագիր յօրինողն ամենագեղեցիկ ցանկութիւններն ունի, բայց որոնք միշտ գեղեցիկ ցանկութիւններ էլ կը մնան։

Ինչպէս ասացի, բաւական չէ որ այնքան սնունդական ծրագիր է առաջարկում, վրան աւելայնում է եւ գործնական պարապմունքներ զանազան արհեստներից։ Հէնց ենթադրենք թէ ուրիշ տեղ իրագործելի բան է, բայց ո՞ր

տեղ են այն ուսուցիչները, այն էնցիկլոպէդիստ եւ միեւնոյն ժամանակ զանազան արհեստներին հմուտ անձինք, որոնք համաձայնում էին գալ պարապել այգպիսի ծխական ուսումնարաններում: Բայց գուցէ հազարներ է նշանակելու նոցա, այդ երեւի խոստացած Բ. մասի մէջ կ'իմանանք:—Մի որեւիցէ սոցիալական դրութիւն: Ինչպէս յայտնի է, արդիւնք է մի երկրի այլ եւ այլ պատմական հանգամանքների. այնպէս էլ մեր այժմեան նորածին ծխական ուսումնարանը՝ որ դեռ շատ նոր է, մեր կենսական պայմանների ու կրթական միջոցների արդիւնք է: Արդար խօսողը 'ի նկատի առնէ այն բոլոր հանգամանքները եւ այնպէս կազմէ իւր վճիռը ներկայ դրութեան մասին եւ ըստ այնմ էլ իրագործելի միջոց առաջարկէ: Կեանքը շարժողութեան մէջ է, հարկաւոր է առաջ գնալ, ժամանակի պահանջները հաշուի առնել, բայց եւ այնպէս մեծամեծ ուսումներ անել չէ կարելի, եթէ միայն արտաքոյ կարգի դիպուածներ չը պատահին: Այնպէս՝ անիրաւ զրպարտութիւն չէ՞ մեր ներկայ ծխական ուսումնարաններն առ հասարակ վնասակար եւ անօգուտ հռչակել: Եւ այն էլ ի՞նչու, որովհետեւ նոքա՝ նորա ծրագրին համապատասխան կրթութիւն չը տալով եւ զանազան արհեստների սկզբունքների մէջ չը վարժեցնելով՝ «իմաստակ պրօլէտարիատ են» առաջացնում: Առանց ստատիստիկական հետազօտութիւնների այսպիսի բան ասելը միթէ—եթէ ուրիշ բան չ'ասենք, լոկ խօսքեր չեն:

Մանկավարժական գրականութեան հետեւողը գիտէ, որ արհեստ ուսուցանելու հարցը մի օրական վիճելի հարց է թէ Եւրօպայում եւ թէ Ռուսաստանում մանաւանդ այս վերջին ժամանակներս: Ի՞նչ որ մեզանից հմուտները եւ անհամեմատ զօրաւորները երկար ժամանակամիջոցում չեն կարողացել գոհացուցիչ եւ գործնական կերպով իրագործել միթէ մեզ, խեղճ հայերիս պէտք է նախատել, թէ ի՞նչու մենք չենք արել: Ընդհակառակն պէտք է գոհ լինել, մանաւանդ այն բազմաթիւ արի, տոկուն եւ ժիր ուսուցիչներից, որոնք ամէն անատանելի հանգամանքնե-

րում անձնուիրաբար առաջ են տանում մատաղ սերունդի կրթութեան փշալի գործը: Ո՞վ կարող է ուրանալ որ թերութիւններ շատ ունինք, ինչպէս եւ ուրիշները գուցէ համեմատաբար աւելի, բայց անուրանալի է, որ այբօճէճէուայի դարը շատ եւ շատ տեղ անվերագառնալի կերպով անցել է, եւ նորա փոխարէն մուտք են գործել մեր ազգային դպրոցներում նոր մանկավարժական առողջ սկզբունքներ: Պարոն Խ-ի առաջարկած ամենափրկիչ միջոցը—այն է տարրական կրթութեան հետ կապել եւ արհեստների սկզբունքների ուսումը, դեռ շատ եւ շատ կասկածելի է համարուած լուսաւորեալ երկրներում: Թէ մանկավարժական եւ թէ նոյն իսկ գործնական կէտից: Ամէն փրկութիւն ուսումնարանից պահանջել անկարելի է. աշխատանքի բաժանման սկզբունքը կրթական գործի մէջ եւս իւր նշանակութիւնն ունի: Արհեստների կատարելագործութիւնը եւ նոցա տարածելը ժողովրդի մէջ ամենամեծ բանն է մի երկրի թէ նիւթական եւ բարոյական բարօրութեան համար. այդ մի յայտնի եւ սոյլորական ճշմարտութիւն է. բայց մեզանից աւելի փորձառուները դորա համար առաջարկում են—զանազան հասակի եւ կրթութեան աստիճանի յարմար մասնագիտական դպրոցներ, արհեստանոցներ, ստեղծում են լրացուցիչ դասընթացներ, օրինակելի մասնաւոր կալուածներ եւ արհեստանոցներ, հրատարակում են մասնագիտական լրագիրներ, կազմում են գրագարաններ, եւ այլն. Երկուսից մէկը—կամ ընդհանուր կրթողական ուսումնարան զանազան տեսակի, կամ մասնագիտական դպրոց համապատասխան զանազան նախապատրաստութեան աստիճանի: Գոնէ նշանաւոր մանկավարժների եւ մեծամասնութեան կարծիքն այս է:—

Ազգական կրթութեան հարցը պ. Խ. ուզիզ է գրելնա կնոջ գլխաւոր կսուծն ընտանիքի մէջ է գտնում: որ միանգամայն մեր կեանքի արտայայտութիւնն է: Բայց դարձեալ անհասկանալի է. թէ ինչո՞ւ նա միայն չքաւոր եւ միջակ դասի համար է ցանկանում այն իրէպալական տան թագուհին, իսկ հարուստի ազգայ կրթութիւ-

նրն ինչով պէտք է գանազանուի, այդ ընթերցողի համար մութն է մնացած: Ես գոնէ շատ եւ շատ երջանիկ կը համարէի մի սղգ, որ պարոն Խատիսեանի նկարագրած գեղեցիկ իրէպի նման կանայք ունենար: Եթէ նա մի փոքր աւելի մտտիկ ծանօթ լինէր մեր ուսումնարաններին, այն ժամանակ նա՝ կը տեսնէր, որ նոցա ձգտումն էլ առհասարակ այդ է. այն, նա կ'իմանար, որ նորա առաջարկած իբր թէ նորութիւնները, ինչ որ հնարաւոր է, արդէն ընդունուած են շատ տեղ. օրինակի համար՝ հաշուապահութիւն, կար ու ձեւի հետ եւ արուեստական ծաղիկներ շինելու գործը, մանկատածութիւն, առողջապահութիւն, սկզբունք տարրական դասատուութեան, — արդէն ընդունուած են մի քանի օրիորդաց ուսումնարաններում միայն ոչ թէ 4, այլ 8 տարուայ դասընթացով ուսումնարաններում: Իսկ ինչոր կը վերաբերի տնային տնտեսութեան կամ տնարարութեան ուսուցանելուն, որ շատ եւ շատ ցանկալի եւ ժողովրդական պահանջին համապատասխան մի առաջարկութիւն է, պէտք է ասել, որ այդ գործն ուսումնարանում ուսուցանելի գործ չէ. այլ գորա համար հարկաւոր է կամ գերգաստանական վարժութիւն կամ օրինաւոր տնարարութեան ուսումնարան, վեց ամսուան դասընթացով, 16 տարեկան նախապատրաստուած աղջկանց համար, ինչպէս որ Գերմանիայում շատ տեղ յաջողութեամբ այդ իրագործվում է:*)

Գալով առաջարկուած դասատուութեան եղանակներին, ուսուցանելի առարկաների նշանակութեան մասին, պէտք է խոստովանել, որ պ. Խ. մանկավարժական գիտութեան պահանջմունքների համեմատ սկզբունքներ է քարոզում: մանաւանդ շատ գեղեցիկ է խօսում կրօնի,

*) Այդ տեսակ մի օրինակելի տնարարութեան ուսումնարանի հետ ծանօթացնելու կ'աշխատեմ հետեւեալ անգամ Վարժարանի ընթերցողներին, պրօֆ. Բօպպի նկարագրութեան հետեւելով: (Die Haushaltungsschulen.—Repertorium der Paedagogik)

ազգային պատմութեան, գծագրութեան վերաբերութեամբ: Առ հասարակ գրքոյկը լի է ընտիր մանկավարժական հայեացքներով եւ նկատողութիւններով, գրուած է շատ սահուն ոճով եւ երբեմն բանաստեղծական ոգեւորութեամբ, գիւրութեամբ կարգացում է, եւ ընթերցողի միտքը կենսական հարցերով զբաղեցնում. այդ պատճառով խորհուրդ եմ տալիս ամէնին, մանաւանդ Ընդհանուր Ուսուցչական ժողովին մասնակցող պարոններին մի անգամ կարդալ:

Յ. ՉԻԳԻԱՆՆԱՆ



ԱՅԼ ԵՐ ԱՅԼ Ք

Պիւս Այլի և ախարի հեղուցութիւնն առաջարկուած: Ուսումնարանները մեծ մասամբ ուշադրութիւն չը դարձնելով՝ երեխանց առողջութեան վերայ, յաճախ պատճառ են դառնում նոցա զանազան տեսակ հիւանդութիւնների: Թողովուրդը, իւր որդկերանց ուսումնարան ուղարկելիս, երկիւղով սպասում է, որ նորա երեխան կը դուրս գայ կամ կարճատես, կամ ծուռ մէջքով, զուցէ խլացած, կամ բարակացաւով:

Արեւմտեան Եւրոպայում ուսումնարանը մինչև անգամ մեղանշում է երեխանց առողջութեան դէմ: Օրինակ, Բէկկերը Գարմըշտադտում դտաւ որ այն ուսումնարանում, որտեղ իւրաքանչիւր երեխային հասնում էր 78 խորանարդ ոտնաչափ օդ, ուսանողներին 44% զխացաւով էին հիւանդ, այն ինչ միւս ուսումնարանում, ուր իւրաքանչիւրին հասնում էր 138 խոր. ոտն.—կար 34% և վերջապէս երրորդ ուսումնարանում, ուր ամէն մէկին հասնում էր 274 խ. ոտն. օդ—միայն 4,7%:

Յայտնի գիտնական Ֆիրխովի հետազոտութիւնները ցոյց տուին, որ ուսումնարանի ազդեցութիւնից նուազում է մարմնի սընունդը և առաջանում են արիւնի պակասութիւն, կուրծքի հիւանդութիւններ և տրամագրութիւն. գէպի թոքախտ:

Բայց աւելի կործանիչ ազդեցութիւն ունի ուսումնարանը ողնաշարի և աչքի վերայ: Բերլինի երեկելի բժշկապետ Էյլենբուրգի հետազոտութիւններից երևում է, որ ողնաշարի ծուռելու 300 օրինակից 24 դէպքը 6 տարեկան հասակի վերայ էր, 267 ը 6 ից մինչև 14, և 9-ը—14 տարեկանից յետոյ: Այդ մեկնվում է միայն մէջքը ծուռ բռնելու սովորութիւնից:

Ուսումնարանական հետազոտութիւնների մէջ ամենահետաքրքիր խնդիրն է ուսումնարանի ազդեցութիւնն աչքի վերայ: Օրինակ, Կօնը քննութեան ենթարկեց 10,060 ուսանողներին. այդ թուից զիւղական երեխանցից կարճատես դուրս եկան միայն 1,4%, օրիորդաց բարձրագոյն ուսումնարանում—7,7%, ընտանական ուսումնարանում—19,7%, զիմնադիտներում—26% և համալսարանական ուսանողների մէջ 60%: Էրիսմանը Պետերբուրգում զննեց 4,358 աշակերտ, որոնցից $\frac{1}{3}$ մասը կարճատես երեւեալնոյն հետեանքները ստացաւ Էմմերտը, զննելով Զուիցերիայում 2,148 աշակերտների տեսողութիւնը: Ըստ Էմմերտի որքան երկար է մնում աշակերտն ուսումնարանում, այնքան կարճատեսների թիւը շատանում է և հասնում է 71%:

Երկու տարի սորանից առաջ Փրանսիայի լուսաւորութեան նախարարը մի մասնաժողով նշանակեց ուսումնարանների կարճատեսութեան խնդիրը քննելու համար: Մասնաժողովը վճռեց, որ եթէ կարճատեսութիւնը ժառանգական չէ, այն ժամանակ այն աշակերտն է կարճատես դառնում, որ պարապելու ժամանակ շատ է թեքվում: Ուրեմն հարկաւոր է թեքուելու պատճառները հեռացնել, այսինքն՝ վատ լոյսը, անյարմար նստարանները, գրելու վատ ձևը, ուսումն օր առաջ սկսելը և վերջապէս մանր տիպը:

Այստեղից հետևում են և այն մի քանի օրէնքները, որ առաջարկվում են բժիշկներից և մանկավարժներից. օր. թուղթը որի վերայ տպում են գրքերը, պէտք է լինի դեղնագոյն, դասագրքերը խոշոր տիպով, նստարանները հասակին համապատասխան, կարդալը և գրելը չը պէտք է սկսուի շատ վաղ և գրել պէտք է սկսեն քարետախտակի վերայ մինչև երեխան կը սովորի պարզ գրել տառերը և ոչ թէ թղթի վերայ, ինչպէս անում է ուսումնարանների մեծ մասը:

Ինչպէս աչքի, նոյնպէս և ականջի վերայ մեծ ուշադրութիւն են դարձնում առողջապահներն արևմտքում: Աէյլըզնեց Շտուտգարտում 5,905 աշակերտի լսողութիւնը, այդ երեխայքն երթևեկում էին մի գիւղական ուսումնարան, 3 ժողովրդական դպրոց, 2 քաղաքային, 1 դիմնադիօն, օրիորդական բարձր դպրոց, տարրական ուսումնարան և երեք փակուած ուսումնարան, որբերի և կոյրերի ապաստանարաններ: Այդպիսով Աէյլըզ կարողացաւ հետազօտել ամէն դասակարգի երեխանց: Այդ հետազօտութիւնները ցոյց տուին, որ հարուստ ընտանիքների երեխայք չբաւոր երեխաներից աւելի պակաս էին ենթարկուած խլութեան: Այդ զխաւորապէս առաջ է դալիս այն հանգամանքից, որ աղքատների երեխայքն աւելի անմաքուր են պահվում և աւելի յաճախ գտնվում թոզի մէջ:

Յայտնի է որ ականջի ցաւերը և խլութիւնը հետեանք են առհասարակ կարմրուկի, քնթրուշի (քութեշ) և բզացաւի: Աէյլըզ հետազօտութիւններից երևեցաւ, որ առանց այդ հիւանդութիւնների էլ երեխանց 33,8% վատ լսողութիւն ունէր, իսկ այդ հիւանդութիւններն ունեցողներից 30,5% վատ լսողութիւն, ուրեմն միայն 3,3% պակաս:

Զարմանալին այն էր, որ դիմնադիօնում վատ լսողութիւն ունեցող աշակերտները համեմատաբար սակաւ էին: Այդ անկասկած, այն պատճառով է, որ միջնակարգ ուսումնարաններում օդն աւելի մաքուր է: Բնական լսողութիւն ունեցող աշակերտը պէտք է լսէ շշուշը 20 մինչև 25 մէտր հեռաւորութիւնից, 12 մինչև 15

մէտք հետաւորութիւնից լսողներին Վէյլը դասում է ծանր լսող-
 ների կարգում: Նորա հետազոտութիւններից երևեցաւ, որ փոքր
 աշակերտներն աւելի լաւ էին լսում, քան մեծերը: Այստեղից եզ-
 րակացութիւն, որ լսողութեան խանգարումն, ինչպէս և կարծա-
 տեսութիւնը, սաստկանում է: որքան երկար է մնում աշակերտը
 ուսումնարանում:

Ուսուցիչը դժուարութեամբ է նկատում ծանր լսողութիւնը
 նոր ընդունուած աշակերտների մէջ և յաճախ պատահում է, որ
 նախադաս առնուած երեխան ծանր է լսում: Որքան անձնութիւն-
 ներ են պատահում և որքան աշակերտներ արտոբլում են ուսում-
 նարանից, նոցա ծանր լսողութիւնը ծուլութեամբ մեկնելով:

Այսպիսի պատճառներ առաջ բերելով, Վէյլն առաջար-
 կում է անուշադիր աշակերտների լսողութիւնը և ականջը քննու-
 թեան ենթարկել և այդ քննութիւնը գոնէ երկու անգամ կրկնել
 տարուայ ընթացքում:

(Գնդուածք „Мысль“ ամսագրից, № 6, 1882 թ.)

* *

Վերսարանի և Իսթրեթի թեմոս էդա՞ն ուսումնարանների վիճակագրու-
 թիւնը 1881/2 տ. արարուայ ընթացքում: Ուսումնարաններ՝ արական՝
 76, իգական՝ 18. ուսուցիչներ՝ արական՝ 185, իգական՝ 55. ուսա-
 նողների թիւը՝ արական՝ 3,472, իգական՝ 1,427. տարեկան մուտք
 78,827 ռ., ծախք՝ 74,105 ռ.

Ցանկալի է, որ և միւս թեմերի վերատեսուչները հաղոր-
 դէին ուսումնարանական վիճակագրութիւնը „Վարժարանը“ մեծ
 յօժարութեամբ կը հրատարակէ այդ տեղեկութիւնները:

* *

Մեծ. օր. Գայիանէ Յովհաննիսեանը հրաւիրուեցաւ Երևան
 Գայիանեան և Սահականուշեան օրիորդաց ուսումնարանների տես-
 չուհու պաշտօնով: Մեծ. օրիորդը վերջին երեք տարին՝ մեծ յա-
 ջողութեամբ նոյն պաշտօնը վարեց Բուխայիսի օրիորդաց ուսում-
 նարանում:

* *

Պ. Վ. Հասվերդեանից շնորհակալութեամբ ստացանք նորա
 հրատարակած „Սրինգ հօփուական“, գրքոյկը: Ներկայ համարում
 տպած է այս գրքուկի մասին պ. Ս. Մանդինեանի քննութիւնը:

Ստացաւ իմ հարգանքները և իմ անհատական
 աստիճանը ցրտի մեջ անհասնելով իմ հարգանքները
 քաղցր հիշատակներով և սիրով իմ հարգանքները
 և իմ հարգանքները քաղցր հիշատակներով և սիրով
 իմ հարգանքները քաղցր հիշատակներով և սիրով
 իմ հարգանքները քաղցր հիշատակներով և սիրով

Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն Բ Ա Ժ Ի Ն



Ա Ղ Ա Կ Ե Ր Տ

Մի փոքրիկ աշակերտ տխուր գնում էր եկեղեցու կողմ: Շանք քայլերով մտաւ եկեղեցի, երեսը խաշակնքեց և գլուխը խոնարհած մօտեցաւ քահանային:

Նորա փոքրիկ սիրտը սաստիկ բարախում էր և արտասուքի կաթիլները գլորվում էին նորա կապոյտ աչերից: Շերունի քահանան նկատեց նորան ու ասաց՝

— Ինչու ես լալիս, որդեակ. ի՞նչու ես այդպէս տխուր:

— Ա՛հ, տէր հայր, պատասխանեց քաղցրաբարոյ աշակերտը, ես մեղք եմ գործել և խղճմտանքս հանգիստ չի կարող լինել, մինչև որ մեղացս թողութիւն չտանան: Լսեցէ՛ք, աղաչում եմ, իմ խօսատկանանքը:

Եւ այս ասելով բարեպաշտութեամբ նա ծունկ չոքեց, բայց արտասուքն ու հեկեկանքն այնքան էին խեղդում նորա ձայնը,

որ չընայելով նորա աշխատանքին, մի որոշ բառ անգամ չըկարողացաւ արտասանել:

Քաջանան երկար ժամանակ նորան ա- կանջ էր դնում նորանից մի բան լսելու, բայց իզուր եղաւ. վերջը ասաց նորան սի- րալիբ ձայնով՝

—Որդեակ, տեսնում եմ, որ լեզուովդ դժ- ուարանում ես ասել քո խոստովանանքը, վեր առ և գրիր. պայուսակիդ մէջ դու կունե- նաս քարետախտակ և քարեգրիչ:

Տղան հնազանդուեցաւ: Հանեց քա- րեգրիչը, սկսեց գրել և միևնոյն ժամանակ արտասուքը կաթ կաթ գլորվում էին նո- րա աչքերից: Տողը տողի յետևից շարում էր նա և ահա՛ վերջապէս աւարտեց իւր տխուր պատմութիւնը: Տախտակը տունեց քաջանային և ինքը յետ նստեց թեթևա- ցած:

Բայց արտասուքի կաթիլները թափ- ուելով քարետախտակի վերայ ջնջել էին նորա ձեռագիրը. ոչ մի տառ չէր կարդաց- վում:

Այն ժամանակ բարեպաշտ քաջանան դարձաւ դէպի խղճուկ փոքրիկ սղան և յետ տալով նորան քարետախտակը՝ ասաց.

—Վնա՛, որդեակ, ՚ի խաղաղութիւն: Վո՛ ապաշխարութեան արտասուքը ջնջել է քո բոլոր մեղքերը:

ՀԻՆ ԳԵՐԵՉՄԱՆԱԲԱՐ

(ԱՆԿԵՐՍԵՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԻՑ)

Մի փոքրիկ քաղաքում մէկ տան մէջ սովորաբար այն ժամանակ, երբ որ գիշերներն երկար և մութն են, հաւաքվում էր տանտիրոջ ընտանիքը զրոյց անելու: Դեռ տաք էր: Սեղանի վերայ վառուած էր լապտերը: Երկար վարագոյրները կախ էին արած բաց պատուհանների առաջ և նոցա ծայրը գետնին հասնում: Պատուհանների վերայ շարուած էին ծաղիկներ ամաններով, իսկ դուրսը փայլում էր շքեղ լուսինը:

Բայց ոչ ոք չէր խօսում լուսնի վերայ, այլ մի մեծ գերեզմանաքարի մասին, որ դրած էր բակումը խոհանոցի դռան մօտ:

Այդ քարի վերայ խոհարար կինը սովորաբար դարսում էր իւր պղնձկարգը՝ արևում ցամաքեցնելու համար, իսկ երեխայք միշտ նորա շուրջն էին սիրում խաղալ:

— Այն, ասաց տանտէրը, այս քարը կարծեմ հին վանքի գերեզմանատանիցն է: Երբ վանքը քանդուեցաւ, ծախեցին ամբիոնը, մարմարեայ տապանագրերը և գերեզմանաքարերը: Հայրս էլ այն ժամանակն առաւ շատ ալգպիտի քարեր, յետոյ քարերը կոտրատեցին՝ փողոցներում սալայտակ շինելու համար: Բայց այս գերեզմանաքարին ձեռք չը տուին և այսպէս այն ժամանակից դրած է մեր բակումը:

— Երևում է, որ այդ պիտի գերեզմանաքար լինի, ասաց երեխանցից մեծը. վրան դեռ ևս նշմարվում են՝ աւազեայ ժամացոյց և հրեշտակի մի մասը: Բայց վերնագիրը համարեա թէ ջնջուել է. կարգացվում է միայն Պրէբէն անունը, Ս գլխատառը և փոքր ինչ հեռու Մ արտա: Ուրիշ ոչինչ չէ երևում: Այդքանն էլ երևում է միայն անձրևից յետոյ, երբ ջուրը լաւ լուսնում այդ քարը:

—Այս ի՞նչ եմ իմանում, Տէր Աստուած, ասաց այն-
տեղ եղողներից ամենաալեւորը, որ բոլորի համար պապ
կարող էր համարուիլ, ուրեմն այդ քարը պիտի եղած
լինի Պրէբէն Շվանէի և նորա կնոջ գերեզմանաքարը:
Վանքի հանգստարանում նոցա ամէնքից վերջը թա-
ղեցին:

—Շատ պատուելի մարդիկ էին. ևս լաւ յիշում եմ.
ես այն ժամանակ փոքր երեխայ էի: Այստեղ ամէնքը
ճանաչում էին նոցա և սիրում:

—Նոցա համար ասում էին, թէ շատ հարուստ
էին, թէ մի տակաւ ոսկի պահած ունէին իրանց ծերու-
թեան ժամանակի համար, բայց միշտ հասարակ շորեր
էին հագնում: Եորեքը հաստ կտորից էր, բայց սպիտա-
կեղէնը շատ մաքուր:

—Շատ լաւ ծերեր էին Պրէբէնը և Մարտան: Միշտ
կարեկից և օգնող չքաւորներին: Նոցա տուած ողոր-
մութիւնը յարմարաւոր և օգտակար էր լինում:

—Առաջ մեռաւ պառաւը: Ես յիշում եմ նորա մա-
հուան օրը: Այն ժամանակ գեռւես փոքր երեխայ էի և
հայրս տարաւ ինձ իւր հետ ծեր Պրէբէնի մօտ: Ծերու-
նին սաստիկ վշտացած էր և երեխայի պէս լալիս:

—Հանգուցեալի մարմինը դրած էր ննջարանում, այն
սենեակին կից, ուր մենք նստած էինք: Պրէբէնը խօ-
սում էր հօրս և միւս հարևանների հետ, թէ ինքը
այժմ միայնակ է մնում, թէ հանգուցեալը շատ բարի
էր, թէ քանի տարի են նոքա միասին ապրել, ինչպէս
ծանօթացել և պսակուել:

—Ես, ինչպէս ասացի, այն ժամանակ շատ փոքր
էի. կանգնած լսում էի մեծերի խօսակցութիւնը և
սարսափս գալիս էր ծերի պատմութիւնը լսելիս:

—Ծերունին հետզհետէ ոգւորվում էր, նորա թշե-
րը կարմրում անցած—զնացած օրերը լիշելիս, այն օ-
րերը, երբ այնքան զուարճութիւն ու քաղցրութիւն
էր վայելել:

—Յիշեց նա իրանց հարսանիքը, պատմեց շքեղ մեծարքը, ուր ինքը և իւր նորահարսը գրաւում էին բոլորի ուշադրութիւնը: Նա կարծես այդ պատմութեան ժամանակը նոր մարդ էր դառնում, կենդանանում, զընուարթանում:

—Այժմ այնտեղեւեթ դրած էր պառաւն արդէն մեռած, անշունչ, իսկ ինքը ծերացել, նիհարացել:

—Այն, այն, այդպէս է աշխարհիս բանը: Այն ժամանակ ես էլ փոքր էի, իսկ այժմ Պրէբէն Եվանէի պէս ալեւոր: Ժամանակն արագ սլանում է և ամէն բան փոփոկում: Իսկ ես այժմ շատ լաւ լիշում եմ թաղման օրը, երբ ծերունի Պրէբէնը գնում էր դադաղի յետևից:

—Նոքա վաղօրօք, մի քանի տարի առաջ շինել էին տուել իրանց գերեզմանաքարը և իրանց անունը վրան փորագրած, միայն տարիքի համար տեղ թողնել տուել:

—Երեկոյին այս գերեզմանաքարը տարան վանքի հանգստարանը և դրին գերեզմանի վերայ:

—Իսկ մի տարուց յետոյ նորից վեր քաշեցին այս գերեզմանաքարը և ծերունի Պրէբէնի դիակը թաղեցին իւր կողակցի կարգում:

—Նոքա այնքան հարուստ չէին, ինչպէս ուրիշները պատմում էին: Նոցա ժառանգութիւնը մնաց հեռաւոր ազգականներին:

—Նոցա քարաշէն տունը փոքր ժամանակից յետոյ կառավարութեան հրամանով քանդել տուին, որովհետև շատ հնացել էր, քայքայուել և կարող էր փուլ գալով վնաս տալ ուրիշներին:

—Յետոյ երբ վանքի եկեղեցին էլ քայքայուեց և վանքի գերեզմանատունն էլ փակուեց, այն ժամանակ Պրէբէնի և Մարտայի գերեզմանաքարը և ուրիշ բոլոր շիրիմները ծախուեց:

—Ահա թէ ինչու այս գերեզմանաքարը չէ կտրատած և սալալատակի համար նիւթ չը դառած միւս քարերի պէս և այժմ ահա դրած է մեր բակումն աղա-

խիններին ծառայելու և երեխանց համար խաղալու տեղ դարձած:

—Այժմ ծերունի Պրէբէնի և նորա կնոջ գերեզմանի վերայ անցնում է սալայատակ արած փողոց:

—Եւ ոչոք չէ լիշում նոցա:

Ծերունին պատմում էր այս տխուր, տրտում, դուխը շարժելով:

—Մոռացուեցան, կորան: Եւ ամէն բան կը մոռացուի, ասաց նա:

Այդ միջոցին սենեակումը խօսակցութեան առարկան ուրիշ էր. բայց տանտիրոջ փոքր որդին կանգնեց պատուհանի վարագուրի լետեկց աթոռի վերայ և նայում զէպի բակը, ուր լուսինը փայլում էր այն հին քարի վերայ:

Առաջ այդ քարը երեխային թվում էր թէ մի հասարակ տաշած քար է, իսկ այժմ դարձաւ դա մի ահագին թերթ հին ժամանակադրութեան: Պրէբէնի և նորա կնոջ մասին պատմածը բոլորը պարունակվում էր այժմ այն քարի մէջ:

Եւ երեխան նայում էր երբեմն քարի վերայ, երբեմն փառաւոր լուսնին և պարզ երկնքին:

—Մոռացուած են: Ամէն բան կը մոռացուի, հընչվում էր սենեակում:

Եւ այդ ժամանակ կարծես մի ձայն ասաց մտնուկին՝

—Պահպանիր քո մէջ դրած սերմը, պահպանիր ամբողջութեամբ: Թող նա ծլի և ծաղկի: Քեզանով, երեխայ, այդ ջնջուած տապանագիրը և որբացած զերեզմանաքարը կը հասնի ապագայ սերունդներին փառաւոր գոյներով: Ծերունիքը, մարդը և կինը նորից կը շրջին թե թեի տուած հին փողոցներում, կը ծիծաղին, կ'ապրին և կը կանչեն իրանց մօտ մեծին և փոքրին կարեկցութիւն ցոյց տալու: Այսօր գցած սերմը շատ տարիներից յետոյ կը կազմէ բանաստեղծա-

կան պատկեր: Լաւր, բարին և ճշմարիտը երբէք չի մո-
ռացուիլ, այլ կ'ապրի երգերում, կը փայլի աւանդու-
թեան մէջ:

Թարգ. Գ. Տ. Ա.

ՕՐԻՈՐԴ ԻՆՊԷՆ

(ԱՆԳԵՐՍԷՆԻ ՀԷՔԻԱԹՆԵՐԻՑ)

Սար ու չըկար, կար մի խեղճ, շատ աղ-
քատ, բայց և շատ հպարտ և շատ մե-
ծամիտ օրիորդ, անունն Ինգէ:

Երբ որ դեռ ևս սա շատ փոքրիկ էր,
բռնոտում էր սովորաբար ճանճեր, թւերը
կտրատում և թողնում ասելով՝ թո՛ղ այժմ
սողան:

Յետոյ, աւելի մեծացած ժամանակը, Ին-
գէն վեր էր առնում բզէզներ, նստեցնում
էր ասեղների վերայ և ոտների տակը դնում
կանաչ աերև կամ թղթի կտոր և խեղճ
կենդանին բռնում էր այդ պտոյտ տալիս և
շուռ մուռ անում ասեղից ազատուելու, որ
սաստիկ ցցուած էր իւր մարմնի մէջ. իսկ
Ինգէն նայում էր նորան և ծիծաղում:

— Ա՛հ այժմ բզէզը կարդում է, ասում
էր նա, նայեցէք շուռ ու մուռ է տալիս
թուղթը:

Քանի մեծանում էր, Ինգէն այնքան ա-

ւելի վատանում էր և չարութիւններն աւելացնում:

Բայց Ինգէն շատ գեղեցիկ էր տեսքով և այդ էր նորան տարաբաղդացնողը. եթէ նա այնքան սիրուն չը լինէր, գուցէ հեան այնպէս չը վարուէին:

— Բեզ պէտք է մի լաւ ջարդել, ասում էր մայրը: Բանի որ ծծի երեխայ էիր, ոտներովդ գողնոցս էիր տրորում. յետոյ երևի սիրաս կանես ոտնակոխ:

Այնպէս էլ եղաւ:

Ինգէն հասակն առած ժամանակը մտաւ ծառայելու մի մեծատան ընտանիքում գիւղի մէջ: Այնտեղ նորա հետ շատ լաւ էին վարվում և զարդարում գեղեցիկ հագուստներով:

Նա շատ գեղեցկացաւ:

Բայց նորա հպարտութիւնն աւելի զօրացաւ:

Մի տարուց յետոյ մեծատան ընտանիքում ասացին նորան՝

— Գնա, Ինգէ, ծնողներիդ տեսութիւն:

Ինգէն գնաց, բայց միայն այն մտքով, որ իրանց գիւղում հարեաններին ցոյց տայ իրան. թող տեսնեն ամէնքն ինձ այսպէս շքեղ և տրաքուին, ասում էր նա:

Մտեցաւ նա իրանց գիւղէն և տեսաւ, որ ահա հաւաքուել են երիտասարդներ և օրիորդներ, զրոյց տալիս. մօտիկ էլ մի քարի վերայ նստած էր նորա մայրը հանգստա-

նում, առջևն անտառում ժողոված ցախի կապոցը դրած:

Ինզէն որ այս տեսաւ, երեսը շուռ տուեց, յետ գնաց:

Նորա սիրտը չէր վեր առնում և ամաչում էր տեսնելով մօրը պատուտած շորերով, խեղճութեան մէջ. այն ինչ ինքն այնպէս շքեղ զարդարուած էր:

Նորա սիրտը մի մազաչափ էլ չըջփոթուեց առանց մօրը բարև տալու վերադառնալիս:

Մի կէս տարի էլ անցաւ:

— Գնա, եթէ կամենում ես, հայրենիքդ, ծնողներիդ մօտ, ասաց Ինզէի աղջիկ պարոնը: Ես քեզ կրտամ մեծ սպիտակ հաց, տար նոցա համար ընծայ: Երևի նոքա շատ կարօտել են քեզ, կ'ուրախանան:

Ինզէն զարդարուեց, հագաւ նոր կօշիկներ և շորերը ձեռքով վեր քաշած գնում էր գգուշութեամբ, որ չըլինի թէ կեղտոտուի:

Եյս ոչինչ: Բայց ահա հասնում է նա ճահիճին և պիտի անցնէր այդ տեղ ցեխոտ ճանապարհով. մի տեղում գցում է հացը մեծ ցեխի մէջ և ոտը նորա վերայ դնելով կամենում է անցնիլ, որ ոտնամանը չը ցեխոտուի:

Եւ հէնց որ մի ոտը դրեց հացի վերայ և միւսը վեր քաշեց առաջ դնելու և ահա հացը խրուեցաւ ցեխի մէջ և գնաց հացի

Տես միասին և Ինգէն անդունդը:

ԸնՏեօացաւ Ինգէն և նորա կործանուելու տեղում մի գուբ գոյացաւ, որտեղեց պղպջակներ էին բարձրանում:

Ի՞նչ պատահեց:

ԸՏա՛ ինչ:

Ինգէն ընկաւ ցեխի միջով ճահիճի խորքը, որտեղ պատահեց նորան մի կախարդ կին իւր գարեջրի գործարանում:

Գործարանումն ամէն մէկ աման հստում էր և այնտեղ ընկած մարդը բոլորովն խելացնոր լինում: Ըմանները դիզուած էին այնտեղ այնպէս սեղմուած, որ համարեա՛ թէ անկարելի էր նոցա միջով անցնել և եթէ մի տեսակ սլքուել էր դքմին, նորան կարգելէին անթիւ օձերը և գորտերը:

Երևակայեցէք ձեզ այնտեղ Ինգէի դրութիւնը: Եւ այս բոլոր անտանելի սողունները սառուցի պէս սառն էին:

Աղջկայ մարմինը մրսում էր սկսում էր սառչել:

Նա կպել էր հացին, հուպ տալիս ոտներով և հացը քաշում էր նորան աւելի խորը:

Կախարդ կինը տանն էր և այդ օրը հիւր էին եկել մօտը դեն իւր տատով:

Հիւրերը անտղում էին գարեջրի գործարանը: Գլխի տատը, այդ շար պառաւը, մի բոպէ չէր մնում առանց ձեռագործի: Ուրիշի տանն էլ չէր մոռացել այդ:

Նա կարում էր և կարկատում կաշեքը

մարդկանց ոտնամանի համար և այդ պատճառով մարդիկ վազվազում են ամէն տեղ անդադար, ոտը յետ չը ծալած: Նա գործում էր նմանապէս մեծ, ամենամեծ կերպաններ ստերից և կեռ ասեղով կարում գետնի վերայ ընկած բոլոր անմիտ բառերը:

Եւ այս բոլորն անում էր նա մարդկանց վնասելու և կործանելու համար:

Շատ վարժ էր դեի տատը թէ կարելումը, թէ գործելումը և թէ մանելումը:

Նա տեսաւ թէ չէ Ինգէին, լաւ տընտղեց իւր ակնոցներով և ասաց՝

— Այս աղջիկը մեծ ընդունակութիւններ պիտի ունենայ խնդրեմ այս երեխան ինձ տաք իբր յիշատակ իմ այսօրուան այցելութեան: Դա լաւ սիւնակ կը դառնայ թո՛ւռանս նախասենեակի համար:

Կախարդ կինը բաշխեց նորան Ինգէին:

Եւ այդպէս աղջիկն ընկաւ դժօխբը:

Այնտեղ մարդիկ մտնում են ոչ ուղղակի:

Դեի տատը տարաւ նորան իւր թոռան նախասենեակը:

Այդ նախասենեակը անսահման էր, ոչ սկիզբն էր երևում, ոչ վերջը, այնպէս մեծ էր:

Այնտեղ մի ահագին ամբօխ էր սպասում անհամբերութեամբ, թէ կըբ արդեօք կը բացուի ողորմութեան դուռը:

Շատ երկար են սպասելու նորա:

Ահազին սարդեր արագութեամբ բանում էին այնտեղ և մարդկանց ոտները կապկպում: Տաղարամեայ ոստայնով, որ պողպատեայ շղթաների պէս ամուր էր:

Եւ միւսնոյն ժամանակն այդ բոլոր կալանաւորուածների սիրտը հալվում, մաշվում էր յաւիտենական տանջանքով:

Շատ դժուար է մէկ մէկ պատմել այնտեղ բանտարկուածների քաշած տանջանքն ու չարչարանքը:

Ինգէն անտանելի կերպով տանջվում էր իբրև սիւնակ կանգնած: Կարծես թէ նա հացին կպած էր:

— Տեսէք թէ ինչեր է առաջ գալիս մի հասարակ ոտնամանի մաքուր պահելուց, ասում էր ինքն իրան ինգէն: Ամէնքն էլ աչքերն այնպէս չռել են ինձ վերայ, որ, կարծես թէ, կամենում են կուլ տալ ինձ:

Այո՛, բոլորն էլ նայում էին նորան. նորա շարութիւններն երևում էին բոլորի աչքերում, առանց ձայն հանելու բոլոր բերաններն աղաղակում էին:

Սարսափելի տեսարան էր:

— Բայց երևի ինձ վերայ նայելը նոցա դուր է գալիս, մտածում էր ինգէն. ես այսպէս գեղեցիկ եմ և զարգարուած:

Նա սկսեց աչքերը շուռ ու մուռ տալ: Գլուխը շարժել չէր կարողանում, սաստիկ ամբացրած էր:

Ո՛հ ինչպէս կեղտոտուել էր աղջկը կա-

խարդ կնոջ գարեջրի գործարանում:

Չէր կարող երևակայել թէ ի՞նչ դրութեան մէջն էր նորա երեսն ու շորերը:

Շորերը մի ինչ որ անտանելի հիւթով ապականուել, օձը ամուր կպել էր նորա մազերից և կախ ընկել մէջքի վերայ: շորերի իւրաքանչիւր ծալի մէջ նստած էր մի մի ահագին գորտ, ձայնը խանձուած շան պէս հաջելով:

Եյս բոլորը շատ և շատ անտանելի էր:

— Բայց և միւսներն աւելի լաւ վեճակումը չեն, մտածում էր ինզէն:

Եյսպիսով նա փոքր ինչ իրան մտիթարում էր:

Բայց ամէնից անտանելին սաստիկ քաղցն էր, որ նորան տանջում էր:

Մի՞թէ չէր կարող փոքր ինչ կռանալ և կտրել այն հացից, որի վերայ ինքը կանգնած էր:

Ո՛չ որովհետև նորա մէջքը թեքուել չէր կարող, նորա ձեռները և ոտները քարացել էին: Շարժել կարող էր միայն աչքերը, թէ աջ, թէ ձախ և փոքր ինչ էլ յետ:

Եյս բոլոր նեղութիւնը բաւական չէր, ճանձերն էլ հաւաքուել էին նորա աչքերի վերայ և սողում:

Եշխատում էր թարթափել, ճանձերը չէին թռչում, որովհետև նոցա թևերը կտրատած էր և սողունի պէս սողում էին:

Կատարեալ տանջանք էր:

Իսկ սաստիկ սոփն էլ միւս կողմից:

Փոքր ժամանակից յետոյ զգում էր իւր
թէ ներսից իրան կրծում են և բոլորովին
դատարկանում է:

— Եթէ այսպէս շարունակուի, ասում էր
նա, ես չեմ կարող դիմանալ:

Բայց նա պէտք է դիմանար:

Յանկարծ նորա գլխի վերայ ընկաւ մի
ջերմ արտասուքի կաթիլ, գլորուեցաւ կուրծ-
քի վերայ և ընկաւ իւր ոտի տակի հացի վերայ.
յետոյ ընկաւ միւս կաթիլը, յետոյ էլ ի շատ
կաթիլներ:

Եյս ո՞վ պիտի լալիս լինի Ինդէի հա-
մար:

Չէ՞ որ երկրի վերայ մնաց նորա մայրը:

Մօր դառն արտասուքը, որ թափվում
է իւր զաւակների վերայ, միշտ համուում է
նոցա. բայց ոչ թէ թեւեացնում նոցա ցաւը,
այլ այրում և սաստկացնում կրած տան-
ջանքը:

Սովը և այնպէս մօտիկ եղած հացն ա-
ւելացնում էր նորա տանջանքը:

Ինդէն զգում էր, որ իւր մէջ եղած բո-
լոր հիւթերը ցամաքել են և ինքը դառել է
մի բարակ և դատարկ եղեգն և լսելիքը սաս-
տիկ զարգացել. նա շատ պարզ լսում էր
երկրի երեսին նորա վերայ խօսուածը և բոլոր
ասուլիսը նորան պախարակում, վատաբա-
նում էր:

Թէպէտ մայրը լալիս էր և ցաւում նորա

Տամար, բայց նա էլ ասում էր՝

—Մնապարծութեան վերջն անտանելի է։ Ով որ աշխատում է ուրիշների գլխին նրատել, նա այսօր թէ վաղը վայր ընկնելու է։ Ե՛իս, ինգէ, ինգէ, դու ինձ սաստիկ մաշում ես։

Ե. յնտեղ երկրի վերայ էլ ամէնքը գիտէին որ նա մեղք է գործել. իմացել էին, որ նա ոտը դրել է Տացի վերայ և անհետացել ճահիճում։

Հովիւր տեսել էր այդ մտտակայ սարից։

—Ո՛հ, որքան ցաւեցրիր մօրդ, ինգէ, օղբում էր մայրը։ Ես այդ վաղուց գուշակում էի։

—Եւելի լաւ կըլինէր, որ ես ծնուած չը լինէի, մտածում էր ինգէն։ Ինձ ի՞նչ օգուտ, որ մայրս լալիս է։

Ինգէն լսում էր, որ նորա պարոնները, ում մօտ ծառայել էր և նորան այնպէս փայտիայում էին, այժմ ասում էին՝

—Ե. յդ աղջիկը մեծ յանցաւոր է. նա Եստուծու տուրքը ոտնակոխ է արել. ո՛չ, շուտ չեն բացուելու նորա Տամար օղորմութեան դռները։

—Հապա ինչո՞ւ չէին պատժում ինձ սկզբից, մտածում էր ինգէն. պէտք է այդ վատ արմատն ինձանից հանել էին, եթէ մէջս կար։

Նա լսեց, որ երկրում արդէն մի երգ են հանել այն սնապարծ օրիորդի վերայ, որ

Տացր ոտնակոխ է արել՝ ոտնամանները չը կեղտոտելու համար:

—Մյս էլ ի՞նչ է, որ ականջովս էլ լսել են տալիս այս բոլորը և տանջում, գանգաւովում էր ինդէն: Եթէ բոլորին պատժում լինէին, այստեղ աւելի շատերը պիտի լինէին հաւարուած:

Եւ նորա սիրտն աւելի և աւելի կարծրանում էր:

—Հապա ի՞նչ է, կուզուիմ այսպիսի տեղում: Ես չեմ կամենում ուղղուիլ: Նայեցէք այն աչքերին, ինչպէս չուել են ինձ վերայ:— Եւ սկսում էր անիծել բոլորին:

—Բանն ու գործը կտրուել է այնտեղ աշխարհում և խօսում ինձ վերայ, միտս ծածում: Մյս ի՞նչ տանջանք է:

—Նա լսում էր, որ նորա արարմունքը պատմում էին երեխանց և մանուկները նորան «անաստուած ինդէ» էին անուանում:

—Մյս, անպիտան, գարշելի, ասում էին նորա. թող տանջուի արժանի է:

Բայց մէկ անգամ, երբ որ ցաւն ու սովը ներսից կրծում էին նորան, մէկ դրմին տալիս էր նորա անունը և նորա արարմունքը պատմում էր մի փոքրիկ աղջկան և ինդէն յանկարծ լսեց, որ երեխան սկսեց լալ այս պախարակելի արարմունքը լսելով:

—Մի՞թէ խեղճ ինդէն երբէք չի վերագառնալ լոյս աշխարհ, հարցրուց փոքրիկ աղջիկը:

Նորան պատասխանեցին թէ՛

—Ոչ երբէք:

—Բայց եթէ նա թողութիւն խնդրէ և խոստանայ որ էլ այդպէս չի վարուի՞:

—Ե, յն ժամանակ կարող է վերադառնալ բայց նա թողութիւն խնդրել չէ կամենում:

—Ե՛խ, ափսո՛ս, որ դիտենաք թէ ինչպէս ցանկանում եմ ես, որ նա խնդրէ, բացառանջեց երեխան:

Եւ նա չէր մխիթարվում:

—Ես իմ տիկինն էլ և բոլոր խաղալիկներս կըտամ, եթէ նորան թոյլ տան վերադառնալու: Խեղճ ինզէ: Ե, յս անտանելի է:

Ե, յս բառերը խորը թափանցեցին Ինզէի սրտում և կարծես թէ փոքր ինչ թեթևութիւն էր զգում:

Ե, յս առաջին անգամն էր, որ մէկի բերանից լսուեցաւ «խեղճ ինզէ» առանց յիշելու նորա յանցանքը: Փոքր երեխան լալիս էր և նորա փոխարէն թողութիւն խնդրում:

Մի փոփոխութիւն զգաց Ինզէն:

Ե, յժժ ինքն էլ էր ուզում լալ բայց արտասուքը չէր գալիս:

Ե, յո, նա չէր կարողանում լալ և այդ էլ մի նոր տանջանք էր նորա համար:

Տարիքն անց էին կենում և թէ վերև, լոյս աշխարհում և թէ երկրի տակը, անդունդում, ուր ինքն էր, նորա մասին աւելի սակաւ էին խօսում:

Յանկարծ մի անգամ նորան հասաւ մի հառաչանքի ձայն:

— Ինգէ, ինգէ, դու սպանեցիր ինձ: Ես այդ գիտէի:

Ե.յս իւր մեռնող մօր վերջին ձայնն էր: Երբեմն էլ լսում էր նա, որ իւր պարօնները յիշում էին նորա անունը, ասելով

— Կը տեսնե՞նք արդեօք ինգէին և բեր՝ իցէ: Ո՞վ կարող է գուշակել, թէ վերջն ինչ է լինելու:

Բայց ինգէն լաւ գիտէր, որ իւր աղջկապարտնը երբէք իւր եղած տեղն ընկնելու չէր:

Ե.յսպէս անցան շատ ամիսներ և տարիներ տանջանքով և շարշարանքով:

Ա.երջապէս ինգէն նորից լսեց իւր անունը և տեսաւ, որ նորա վերայ փայլեցան երկու աստղեր՝ այնտեղ բարձր, երկրի վերայ մի մեռնողի համեստ աչքերն էին:

Ե.յն ժամանակից, երբ փոքրիկ աղջկին արտասովում էր «խեղճ ինգէի» համար, խոստանալով տալ իւր բոլոր խաղալիկները ինգէին մութ աշխարհից ազատելու համար, անցան այնքան տարիներ, որ երեսնան դառել էր պառաւ կին և այժմ աւանդել էր հոգին:

Եւ մեռնելու ժամին, երբ անցած—գնացած ժամանակուան մտքերն ու զգացմունքներն աչքի առաջ են դալիս, այն սխառաւ կինը յիշել էր և այն, թէ ինչպէս դառն

արտասուք է թափել դեռ երեխայ ժամանակը, Ինգէի պատմութիւնը լսելով:

Եյն ժամանակ և զգացմունքներն այնպէս կենդանի ներկայացան պառաւին, որ նա բացազանչեց՝

—Տէր Եստուած: Չեմ արդեօք և ես ոտնակոխ անում Քո օրհնած տուրքերը: Եթէ հպարտութեամբ մեղանչել եմ, թողութիւն տո՛ւր և մի յիշիր յանցանքներս:

Պառաւի աչքերը խփուեցան, իսկ նորահոգու աչքերը բացուեցան և տեսնում էին բոլորը, որ առաջ մութն էր և անտեսանելի:

Նորա վերջին մտածմունքն Ինգէն էր և այժմ՝ աւելի լաւ էր տեսնում, թէ ինչ անդունդումն է եղել Ինգէն և նորից երեխայ ժամանակուան պէս լաց եղաւ:

Եյս արտասուքը և աղերսանքն արձագանքի պէս լսուեցան այն դատարկ խողովակի մէջ, ուր մնացած էր Ինգէի կաշկանդած հոգին:

Ինգէն դողաց, թափ եկաւ և այնպէս լաց եղաւ, ինչպէս երբէք չէր լաց եղել: Նորան մաշում էր իւր ցաւը. նորան թփում էր, որ նորա համար երբէք չեն բացուիլ ողորմութեան դռները:

Եւ այդ բոպէին, երբ որ նա ողբալով յիշում էր իւր անցեալը, այն անդունդի մէջ փայլեց մի լուսնուոր ճառագայթ այնպիսի զօրութեամբ, որ զօրեղ էր արեգակի վառ ճառագայթներից:

Այդ ժամանակ Ինգէի պատկերը ծածկուեց մէզով և նորա միջից կայծակի պէս դուրս թռաւ մի փոքրիկ թռչուն և սլացաւ դէպի լոյս աշխարհ:

Իայց թռչնիկը վախենում էր և դողում: Նա ամաչում էր ամէն արարածներից և աշխատում էր թազչել մութը տեղերում: Տին կիսաքանդ պատերում և նստում էր կուչ եկած, դողալով, լուռ ու մունջ. նա ձայն չունէր:

Երկար ժամանակ անցաւ, մինչև որ թռչնիկը կը կարողանար պարզապէս տեսնել բոլոր շրջապատող առարկաները և հասկանալ նոցա վսեմութիւնը:

Եւո՛, ամէն բան վսեմ էր այդ տեղ: Օդը պարզ և հանդարտ, լուսինը լուսաւորում էր երկիրը, ծառերը և թփերը անուշահոտութիւն բուրում:

Շատ հաւանում էր նա իւր բնակարանը և նորա փետրազարդ հագուստը մաքուր էր և քնքոյշ:

Ո՛հ, ինչպէս շքեղ էր ամէն բան և փայլում սերն ու խաղաղութիւնը:

Թռչնիկի սիրտը բաբախում էր, զգացածը ուզում էր երգով արտայայտել:

Իայց թռչնիկը չէր կարողանում երգել, թէպէտ և շատ ցանկանում էր:

Եւբողջ շաբաթներ անխօս անցկացան, բայց փառաբանութեան երգը չէր դադարում թռչնիկի մտքի մէջ:

Հասաւ ծննդեան տօնը:

Գիւղացին այն պատից ոչ հեռու ցցեց մի ձող և ծայրի վերայ կապեց մի խուրձ վարսակ, որ թռչուններն էլ ուրախանան և կերակրուին այն ժամանակ, երբ որ ինքը լաւ ճաշով կը կշտանայ:

Ե՛հա արևը բարձրացաւ, լուսաւորեց խուրձը և թռչունները ճռուողելով հաւաքուեցան ձողի վերայ ճաշելու:

Ե՛յդ ժամանակ մի փոքրիկ ծակից լսուեցաւ մեր թռչնիկի ձայնը:

Յուզուող մտքերը և անմուռնչ երգը փոխուեցան ճռուողելու հանդարտ ձայների:

Օ՛արթեց նորա մէջ բարեգործութեան միտքը և թռչնիկը դուրս թռաւ իւր մութ բնակարանից:

Չմեռը շատ ցուրտ էր, բոլոր գետերը սառել էին. թռչունները և գաղանները դժուարութեամբ էին գտնում կերակուր:

Մեր թռչնիկը սլացաւ դէպի մեծ ճանապարհները և մարդկանց անց ու դարձ արած տեղերում նա գտնում էր հացի փրշրանքներ:

Ինքը թռչնիկը չէր ուտում իւր գտած կերակուրը, կանչում էր նա սոված ճնճղուկներին և նոցա տալիս բոլորը:

Թռաւ նա դէպի քաղաք և նայում ամէն կողմ: տեսնում էր որ զթոտ ձեռքը պատուհանների վերայ դրել է խեղճ թռչնիկների համար կերակուր. նա մի հատիկն

ուտում էր և մնացորդը (Թողնում ուրիշ սովածների համար:

Եւ այն ամբողջ ձմեռուան մէջ մեր Թռչնիկը ժողովեց և բաժանեց ուրիշ Թռչնիկներին այնքան հատիկներ և հացի փշրանքներ, որ բոլորը միասին ուղիղ այն սպիտակ հացին հաւասար էր, որ Ինգէն ոտնակոխ էր արել՝ իւր ոտնամանը մաքուր պահպանելու համար:

Երբ որ Թռչնիկը գտաւ և տուեց վերջին փշրանքը, այն ժամանակ նորա մոխրագոյն Թւերը սպիտակացան և արձակ բացուեցան:

— Ե՛հա՛ Թռչում է ջրի վերայ ծովային ծիծեռնակը, ասում էին երեխայք, այն սպիտակ Թռչնիկը տեսնելիս: Տեսէ՛ք ծովի մէջ լողացաւ: Ե՛հա՛ բարձրացաւ վերև դէպի ճառագայթները, արևի փայլուն ճաճանչները:

Թռչնիկը փայլում էր, լոյս տալիս և լուսի մէջ կորչում, անհետանում: Ետում են, Թէ նա մտել է լուսատու արևի մէջ:

Թարգ. Գ. Տ. Ա.

Մ Ր Զ Ի Ի Ն Ն Ե Ր

Այգիում շատ ծառեր կային՝ տանձենի, խնձորենի, դեղձի, սերկևիլի և շատ ուրիշ պտուղներով լի ծառեր: Այնտեղ ապրում էր պարտիզայանք: Նա կտրատում էր չոր ճիւղերը, ջրում էր ծաղիկները և աճում աւաղ պարտիզի ճանապարհների վերայ:

Պարտիզից ոչ հեռու իրանց բներում ապրում էին մրջիւնները: Նոքա հազարներով էին: Իմացան որ այգիում ծառեր կան նոցա սիրելի պտուղներով. գնացին այնտեղ խմբովին, բարձրացան մի ծառի վերայ և սկսեցին ուտել: Ամբողջ ծառը սեւացաւ, որովհետեւ բոլորովին ծածկուեցաւ մրջիւններով:

Երբ պարտիզպանն եկաւ ծառը մաքրելու, տեսաւ նորա վերայ անթիւ մրջիւններ և զարմացաւ: Նա շատ ամաստաց որ նորա գեղեցիկ ծառը պէտք է փշանայ, սկսեց ձեռքով դուրս քշել մրջիւններին ծառից, բայց նոքա թափուեցան նորա վերայ և սկսեցին նորան կծուտել. վախեցաւ պարտիզպանը և հեռացաւ:

Ամենայն օր գնում էին մրջիւններն այդին և բարձրանում նոյն ծառի վերայ: Պարտիզպանը չը գիտէր թէ ինչ անէ: Հարց ու փորձ էր անում այստեղ այնտեղ ծանօթներից և խնդրում նոցա օգնել նորան, թէ ինչ անէ մրջիւններին և ինչպէս ազատեալ սոցանից իւր ծառը: Բայց ոչ ոք ոչինչ խորհուրդ տալ չը կարողացաւ:

Մի ծեր մարդ միայն ասաց նորան.

— Գիտե՞ս ինչ, բարեկամ, մրջիւնները վախենում են ծխախոտի հիւթից. այդ հիւթը քսի՛ր ծառին և նոքա այլ ևս չեն գնալ այնտեղ:

Հետեւեալ օրը, երբ մրջիւնները ծառի վերայ էին, պարտիզպանը ծառի բնի ներքևի մասի վերայ քսեց հիւթը:

— «Այժմ, մտածեց պարտիզպանը, մրջիւնները ծառի վերայ կը մնան, այլ ևս չեն գնալ իրանց տուն:»

Մրջիւնները կշտացան և երբ ուզեցան ցած գալ ծառից, տեսան որ բանտարկուած են: Ծառիցը ռստնուլ նոքա չէին կարող, թռչել նմանապէս, չէ որ թռեր չ'ունին: Ի՞նչ անէին: Մի քանի փորձուած մրջիւններ մօտ եկան և ասացին ժողովին իրանց լեզուով.

— Լսեցէ՛ք, թող մեզանից ամենաուժեղները նստեն թափվող տերևների վերայ և նոցա հետ իմխասին գետին

ընկնին. յետոյ թող ծխախոտի հիւթի վրայով մեզ համար հողէ կամուրջ շինեն:

Համաձայնեցան: Ամենագօրեղ մըջիւններն իսկոյն նստոտեցան դեղնած տերեւների վերայ. ծանրութիւնից տերեւներն ընկան գետին, մըջիւններն էլ հետը և սկսեցին հող կրել, մեծ կոյտ շինեցին և մնացած մըջիւններն իջան ծառից այդ կամուրջի վրայով:

Հետեւեալ օրերը մըջիւնները շարունակեցին վերև ու ներքև անել ծառի վերայ, իբր թէ նորա վերայ նոցա համար անտանելի հիւթը երբէք չէ եղել քսած:

Պարտիզպանը տեսաւ ամէնը ինչ որ անում էին մըջիւնները, բայց չէր խանգարում նոցա: Նա ինքը հետաքրքիր էր տեսնել թէ մըջիւններն ինչպիսի խելացի բաներ են հնարում միմեանց օգնելու համար: Բայց այնու ամենայնիւ նա ծառը շատ էր ամիստում:

Շատ մտածեց, երկար մտածեց որ մի հնարք գտնի մըջիւններից ազատուելու:

Մի անգամ, երբ մըջիւնները նստած էին ծառի վերայ, պարտիզպանը փորեց ծառի շուրջը մի մեծ փոս, շատ ջուր ածեց նորա մէջ:

— Հիմայ էլ մըջիւններն իրանց տան երեսը չեն տեսնիլ, էլ ճանապարհ չ'ունին ծառիցն իջնելու, մտածում է պարտիզպանը:

Իրիկնաժամին մըջիւններն ուզեցին ցած գալ ծառից, մօտեցան փոսին և առաջ էլ չը կարողացան գնալ. ծառի շուրջը պատած էր ջրով:

— «Վայ մեզ, վայ, մեր բանը խիստ վատ է, մտածում են մըջիւնները, մենք վտանգի մէջն ենք, այլ ևս մեր տունը չենք տեսնիլ:» Ինչ անել: Ժողովուեցան միասին, շրջան կազմեցին և սկսեցին խորհուրդ անել թէ ինչպէս հասնեն տուն: Երեք խելացի մըջիւններ մօտեցան ժողովին ու ասացին՝

— «Գեռ բանն այնքան վատ չէ, բարեկամներ, հնարք կայ ազատուելու, մի վախենաք, յոյսերդ մի կըտրէք:

Մըջիւններն ուրախացան, այդ խօսքերից սիրտ առան և շրջապատեցին այդ երեք մըջիւններին:

—«Խնչպէս, Բնչպէս ազատուենք այս վտանգից, հարցնում էին ամէն կողմից մըջիւնները:

—«Շատ հեշտ կերպով, պատասխանեցին երեք մըջիւնները,— չէ՞ որ մենք ստեղծուած ենք միմեանց օգնելու համար. շատերը մեզանից պէտք է ջուրն ընկնին, խեղդուին, բայց գոնեա ուրիշներին ազատած կը լինին: Ահա՛ մենք ձեզ օրինակ կը տանք, անց կայէք մեզ վերայ, ինչպէս կամուրջի վրայով: Այս ասելով երեք մըջիւններն ընկան ջուրը: Մըջիւններից շատերը հետեւեցան նոցա: Նոքա կանգնեցան միմեանց վերայ և հիանալի կամուրջ շինեցին, որի վրայով անց կացան մնացածները և գնացին իրանց տուն:

Պարտիզպանը մօտիկ տեղում նստած բոլորը տեսնում էր: Երբ տեսաւ որ մըջիւններն այնպէս միմեանց սիրում են, որ մեռնում են մէկը միւսի համար, նա այլ ևս դադարեց նոցա հալածել և թոյլ տուեց մըջիւններին կերակրուել իրանց կամքով իւր այգիում:

Թարգ. օր. Գ. Յովհաննիսեան:

ԶՈՒՍՐՃԱՆԻՔ, ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ, ԽՆԳԻՐՆԵՐ:

1. Աղջկայ այն ո՞ր անունն է, որ երկու կողմից էլ միակերպ է կարգացվում:

2. Գտէ՛ք մարդկանց բնակութեան տեղի մի անուն, որ երկու կողմից էլ միատեսակ կարգացուի:


3. Առաջին վանկը ժամանակ է ցոյց տալիս, երկրորդ վանկը զերանուն է, երրորդ վանկով մարդն իւր միտքն է յայտնում. բոլորը միասին ձեր կարգացածն է: Իմացէ՛ք Բնչ է:

4. «Երկար աղիք, ծայրին ծաղիկ», իմացէ՛ք Բնչ է:


5. Առաջին վանկը ցորենի (բոյս) մանրուածք է, երկրորդն ուրիշ սեպհականութիւնը յափ շտակող է. իսկ ամբողջը երկրնբումն է:

6. Գտէ՛ք այն բառը, որ նաւի մի զործիք է, իսկ առաջին վանկի երկրորդ տառը փոխելով դառնում է հաց (մեղրի):

7




8



Սուսչին աղիւսակի մէջ տեղաւորել հետեւեալ տառերը՝ 2 ա, 2 ե, 3 խ, 2 կ, 2 մ, 1 չ, 1 ս՝ այնպէս որ դուրս զան բառեր կարդալով վերեւից ներքեւ և ձախից աջ:

9



Երկրորդ աղիւսակի մէջ նոյն պայմաններով դասաւորել հետեւեալ տառերը՝ 4 ա, 1 գ, 2 թ, 1 բ, 1 կ, 1 չ, 1 մ, 1 յ, 1 շ, 1 ս, 1 ս, 1 ս:

10



Երրորդ աղիւսակի մէջ նոյն պայմաններով դասաւորել հետեւեալ տառերը՝ 2 ա, 2 գ, 1 դ, 2 ի, 1 ճ, 2 ն, 1 չ, 3 ը, 2 օ:

ԽՄԲԱԳԻՐ—ՀՐԱՏԱՐԱԿԱՂ, Ն. ԽՈՍՐՈՎԵԱՆ

Дозволено цензуров. Тифлисъ, 14 Августа 1882 г.

Типографія М. Варганянца и К. противъ Троиц. церк.

Ըստ Հրամանի Վեհափառ Վաթուղիկոսի առաջիկայ
18⁸²/₈₃ ուսումնական տարուայ Համար Մայր Աթոռի ձեմարանն աշակերտաց ընդունելութիւն չի ունենայ, որոյ Համար պարտք եմ Համարում յայտնել ի զիտութիւն բոլոր խնդրատուաց:
Տէրաց ձեմարանի Ա. Նահապետեան:

*
*
*

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(ՔՍԱՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ազգային, քաղաքական—գրականական լրագիր
ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԹԻՖԼԻՍՈՒՄ.

Տարեկան գինը 10 ռ., 6 ամսուանը 6 ռ., ամիսը 1 ռ.,
Հատով 5 կ.

Հասցէն՝ Тифлисъ въ редакцію газеты „Mery“ Rédaction de «Megou Haïastani» à Tiflis (Caucase)

*
*
*

Մ Ա Ա Կ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

քաղաքական և գրականական

Տարեկան գինն է 10 ռ., կէս տարւանը 5 ռ., Հատով 5 կ.

Խմբ.-Հրատ. Գ. Արժրուհի:

Հասցէն՝ Тифлисъ. Редакция „МШАКЪ“

*
*
*

Վ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ լրագրական գործակալութեան խանութում վաճառվում են ամէն տեսակ գրքեր թէ՛ հայերէն, թէ՛ ռուսերէն եւ թէ՛ եւրոպական զանազան լեզուներով: Օտարաքաղաքացիները գիմում են հետեւեալ հասցէով՝

Тифлисъ, Газетное Агентство В. Шавердова.

Ա Ր Ջ Ա Գ Ա Ն Ք

գրականական և քաղաքական

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Այս տարուայ բաժանորդագինն է 5 ռ.

Իժն.-Հրատ. Ա. Յովհաննիսյանց

Հասցեն՝ Тифлисъ. Редакция „АРДЗАГАНКЪ“

Բ Ո Ւ Ր Ա Ս Տ Ա Ն Մ Ա Ն Կ Ա Ն Ց

ՏԱՍԵ ԵՒ ՀԻՆԳ ՕՐԵԱՑ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Տարեկան գինն է Ռուսաստանի համար 4 ռ.

Հրատ. Ն. Պերպլերեան և Ն. Տովկուեան:

Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ Ա Կ Ա Ն Թ Ե Ր Թ

ՄԻ ԱՄՍԵԱՑ ՀԱՆԳԷՍ

Տարեկան գինն է 3 ռ.

Իժն.-Հրատ. Լ. Տեգրանյան:

Հասցեն՝ Эривань Ред., „ГИГИЕНИЧЕСКІЙ ЛИСТОКЪ.“

Ա Ր Ա Ր Ա Տ

Կրօնական և Ազգային ամսագիր.

Տարեկան գինն է 4 ռ.

Հասցեն՝ Вагаршапатъ, Редакция „АРАРАТЪ“